ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1955 Общественные науки

Մ. Ղերսիսյան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ*

(1900—1917 թթ.)

ՀԱՅԱՍՏԱՆԸ 1905 — 1907 ԹԹ. ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Կապիտալիզմի իմպերիալիստական ստադիան Ռուսաստանում։ *19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին կապիտալիզմը վերջնականորեն թևակոխեց իր զարգացման բարձրագույն և վերջին ստադիան՝ իմպերիալիզմի ստադիան։*

Իմպերիալիզմը, որի գիտական տեսությունը սպառիչ կերպով տվել է Վ. Ի. Լենինը, մոնոպոլիստական կապիտալիզմն է։ Իմպերիալիզմի գլխավոր տնտեսական հատկանիշներն են. «1. արտադրության և կապիտալի համակենտրոնացումը, որը հասել է զարգացման այնպիսի բարձր աստիճանի, որ ստեղծել է մոնոպոլիաներ, որոնք վճռական դեր են կատարում տնտեսական կյանքում. 2. բանկային կապիտալի ձուլումն արդյունաբերական կապիտալի հետ և այդ «ֆինանսական կապիտալի» բազայի վրա հիմնված ֆինանսական օլիգարխիայի ստեղծումը. 3. ի տարբերություն ապրանքների արտահանումից կապիտալի արտահանումն առանձնապես կարևոր նշանակություն է ստանում. 4. առաջ են գալիս կապիտալիստների միջազգային մոնոպոլիստական միություններ, որոնք բաժանում են աշխարհը, և 5. խոշորագույն կապիտալիստական տերությունների կողմից ավարտված է աշխարհի տերիտորիալ բաժանումը»[1]։

Իմպերիալիզմը ծայր աստիճանի հասցրեց կապիտալիզմի հակասությունները։ Առանձնապես խստորեն սրվեցին իմպերիալիզմի երեք գլխավոր հակասությունները. 1. հակասությունը աշխատանքի և կապիտալի միջև. 2. հակասությունը իմպերիալիստական պետությունների միջև, որոնք ձգտում են համաշխարհային տիրապետության. 3. հակասությունը մետրոպոլիայի և գաղութների միջև։

Իմպերիալիզմը կապիտալիզմի պատմական հատուկ ստադիան է, պարազիտային կամ նեխվող, մեռնող կապիտալիզմն է, սոցիալիստական ռևոլյուցիայի նախօրյակը։ Իմպերիալիզմի ժամանակաշրջանում պրոլետարական ռևոլյուցիան պրակտիկ անհրաժեշտություն դարձավ։

Իմպերիալիզմի կազմավորումը տեղի ունեցավ կապիտալիստական բոլոր գլխավոր երկրներում, այդ թվում նաև Ռուսաստանում։ Այստեղ կապիտալիս-

---

* *Ստորև հրապարակելով միջնակարգ դպրոցների համար պատրաստվող հայ ժողովրդի պատմության ձեռնարկի երկրորդ հատորից մի բաժին, խնդրում ենք ընթերցողներին իրենց դիտողություններն ուղարկել խմբագրություն։* Խմբ.

[1] Վ. Ի. ԼԵՆԻՆ, *Երկեր*, հատոր 22, էջ 354։

տական արդյունաբերության մեջ արտադրության և կապիտալի համակենտրոնացումը, որ սկսվել էր դեռևս 19-րդ դարի վերջերին, 20-րդ դարի սկզբին մեծ չափերի հասավ։ Առաջացան մոնոպոլիաներ, գլխավորապես սինդիկատներ, որոնք իրենց ձեռքը վերցրին արդյունաբերության գլխավոր ճյուղերը, ինչպես, օրինակ, մետալուրգիական, նավթի, քարածխի արդյունաբերությունը։ Կազմավորվեց նաև ֆինանսական կապիտալը, որն սկսեց խոշոր դեր խաղալ երկրի տնտեսական կյանքում։ Նախորդ տարիների հետ համեմատած որոշ չափով ուժեղացավ կապիտալի արտահանումը։ Նոր ձևավորված ռուսական մոնոպոլիստական կապիտալիզմն սկսեց մասնակցել այն պայքարին, որ մղվում էր աշխարհի, գաղութների և կիսագաղութների բաժանման ու վերաբաժանման համար։

Սակայն իմպերիալիզմը ցարական Ռուսաստանում ուներ մի շարք առանձնահատկություններ։ Դրանցից գլխավորն այն էր, որ այստեղ մոնոպոլիստական կապիտալիզմը ծագեց և զարգացավ ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների խիստ ուժեղ մնացուկների առկայության պայմաններում։ Զարգացած կապիտալիստական արդյունաբերության հետ մեկտեղ գոյություն ուներ կիսաֆեոդալական հողատիրություն։ Ռուսաստանում կապիտալի հզորությունը միաձուլվում էր ճորտատեր-կալվածատերերի իշխանության հետ։ Ցարական ինքնակալությունը արտահայտում էր ինչպես հողատեր ֆեոդալների, այնպես էլ մոնոպոլիաների ու ֆինանսական մագնատների շահերը։ Իմպերիալիզմը Ռուսաստանում ուներ ոչ թե իսկական, «կլասիկ» տիպի կապիտալիստական իմպերիալիզմի, այլ ռազմա-ֆեոդալական իմպերիալիզմի բնույթ։

Կարևոր առանձնահատկություն էր նաև այն, որ ռուսական մոնոպոլիաները և ֆինանսական կապիտալը մեծ չափով կախում ունեին արևմտաեվրոպական մոնոպոլիաներից ու ֆինանսական օլիգարխիայից։ Օտարերկրյա կապիտալը խորը կերպով թափանցել էր երկրի տնտեսության մեջ, նրա ձեռքում էին գտնվում մի շարք մոնոպոլիաներ, բանկեր, ծանր արդյունաբերության կարևոր ճյուղեր, ինչպես նաև ներքին շուկայի մի զգալի մասը։ Ցարական կառավարությունը փաստորեն դարձել էր արևմտյան մոնոպոլիստական կապիտալի կամակատարը և ագենտը։ Ռուսական ռազմա-ֆեոդալական իմպերիալիզմի կախումը արևմտյան պետություններից մասնավորապես մեծ էր արտաքին քաղաքականության հարցերում։

Ցարական Ռուսաստանը իմպերիալիզմի բոլոր հակասությունների հանգուցային կետը դարձավ։ «...ցարական Ռուսաստանը,— գրել է Ի. Վ. Ստալինը,— ամեն տեսակ ճնշման օջախ էր — և՛ կապիտալիստական, և՛ գաղութային, և՛ ռազմական ճնշման — իր ամենավայրագ ու բարբարոսական ձևով վերցրած»[1]։

Ռուսաստանն, ավելի քան մի այլ երկիր, հասունացել էր ռևոլյուցիայի համար։ 19-րդ դարի վերջերից միջազգային ռևոլյուցիոն շարժման կենտրոնը Արևմտյան Եվրոպայից տեղափոխվել էր Ռուսաստան։

Կապիտալիստական արդյունաբերությունը Հայաստանում։ Անդրկովկասը հանդիսանալով ռուսական կայսրության մի մասը, տնտեսապես սերտորեն կապված էր Ռուսաստանի հետ։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 6, էջ 88։

Իմպերիալիզմի կազմավորումը Ռուսաստանում իր արտահայտությունը գտավ նաև Անդրկովկասում։ 20-րդ դարի սկզբներին երկրի արդյունաբերության մեջ սկսվեց արտադրության ուժեղ կենտրոնացում։ Հիմնվեցին կապիտալիստական մոնոպոլիաներ, տեղի ունեցավ բանկային և արդյունաբերական կապիտալի միավորում, հանդես եկավ ֆինանսական կապիտալը։ Ուժեղացավ օտարերկրյա և ռուսական կապիտալի ներթափանցումը Անդրկովկաս։

Ինորոշ է, օրինակ, որ արդեն 19-րդ դարի վերջին Բաքվի նավթարդյունաբերության մի զգալի մասը իրենց ձեռքը վերցրին օտարերկրյա և ռուսական մոնոպոլիստական կապիտալի այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք էին Նոբելը, Ռոտշիլդը, Լիանոզովը և ուրիշները։ Թիֆլիսում 1900 թվականին կազմակերպվեցին ակցիոներական խոշոր ընկերություններ։ Մոնոպոլիստական կապիտալն իր ցանցը տարածեց նաև դեպի Հայաստան։ Ֆրանսիական ակցիոներական ընկերությունը, որի ձեռքում էր գտնվում Ալավերդու պղնձարդյունաբերությունը, և կապիտալիստ Շուստովը, որի գործարաններում էր կենտրոնացած Հայաստանի սպիրտ-կոնյակի արտադրությունը, մոնոպոլիստական կապիտալի ներկայացուցիչներ էին։

Կապիտալիստական արդյունաբերությունը Ռուսաստանում 20-րդ դարի սկզբին ապրեց խոր ճգնաժամ։ Սակայն, չնայած դրան, ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում 20-րդ դարի առաջին տասնամյակի ընթացքում կապիտալիստական արդյունաբերության զարգացումը ընդհանուր առմամբ տեղի ունեցավ, նախորդ տարիների համեմատությամբ, ավելի արագ տեմպերով։

Արդյունաբերության հիմնական ճյուղերը Հայաստանում այս ժամանակաշրջանում ևս շարունակեցին մնալ պղնձի և սպիրտ-կոնյակի արդյունաբերությունը։

Պղնձի արդյունաբերության կենտրոններն էին Ալավերդին ու Զանգեզուրը։ Ալավերդու պղնձի հանքերը, ինչպես ասվեց, շահագործում էր ֆրանսիական ակցիոներական ընկերությունը, իսկ Զանգեզուրինը՝ հայ և հույն կապիտալիստները։ Պղնձի արդյունաբերության աճը հետևյալ պատկերն է ունեցել։ Ալավերդու պղնձահանքերից ստացվել է պղինձ.

1901 թ.	—	59,000 փութ
1908 թ.	—	120,000 »

Զանգեզուրի պղնձահանքերից ստացվել է.

1901 թ.	—	58,000 փութ
1908 թ.	—	72,000 »

Զանգեզուրի պղնձարդյունաբերության զարգացման ավելի դանդաղ տեմպերը բացատրվում են այն բանով, որ Զանգեզուրը երկաթգծով միացված չէր Երկրի արդյունաբերական կենտրոնների ու նավահանգիստների հետ, որի հետևանքով պղնձահանքի և պղնձի փոխադրությունն այնտեղից մեծ ծախսեր էր պահանջում։

Սպիրտ-կոնյակային արդյունաբերության կենտրոնը Երևանն էր։ Այդ ճյուղի առավել խոշոր ձեռնարկություններն էին Շուստովի ու Սարաջևի գործարանները։

Սպիրտի ու կոնյակի արտադրության զարգացումը տեղի է ունեցել բա-

վական արագ տեմպերով։ Երևանի նահանգում սպիրտ-կոնյակի տարեկան արտադրանքի դրամական արժեքը կազմել է.

1901 թ.	—	90,000 ռուբլի
1908 թ.	—	595,000 »

Հայաստանում արտադրված սպիրտ-կոնյակի մոտ 90 տոկոսը արտահանվում էր Անդրկովկասի կենտրոնները, Ռուսաստան և մասամբ արտասահման։

Զգալի չափով աճել է նաև բամբակազտիչ ձեռնարկությունների արտադրանքը։ Այդ ձեռնարկությունների տարեկան արտադրանքի դրամական արժեքը կազմել է.

1901 թ.	—	40,000 ռուբլի
1906 թ.	—	176,000 »

Որոշ աճ ունեցել է կաշեգործարանների ու մետաքսի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրությունը։

Հայաստանի արդյունաբերական արտադրանքը, բացառությամբ պղնձի, քաց էր թողնվում գլխավորապես փոքրիկ ձեռնարկությունների կողմից։ Երկրում դեռևս չկային խոշոր գործարաններ ու ֆաբրիկաներ։

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը գյուղում։ 20-րդ դարի սկզբին կապիտալիստական հարաբերություններն արագ զարգացան նաև գյուղում։ Նկատելի չափով բարձրացավ գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնությունը։ Կապիտալիստական հարաբերությունների աճի հետևանքով ավելի ուժեղացավ գյուղացիության շերտավորումը, գյուղացիական մասսաների քայքայումը և պրոլետարացումը։ Գյուղացիների զգալի մասը զրկվեց հողից, բանող և մթերատու անասունից։ 1900-ական թվականների սկզբներին Նոր Բայազետի գավառի գյուղացիության 28 տոկոսը հողազուրկ էր, 30 տոկոսը անասուն չուներ։ Մյուս գավառներում նույն դրությունն էր տիրում։ Հողազուրկ գյուղացիները թշվառության մեջ էին. ոմանք բատրակություն էին անում կուլակային տնտեսություններում, մյուսները մեկնում էին Անդրկովկասի քաղաքներն աշխատանք փնտրելու։ 1903 թ. Ապարանի շրջանի գյուղերից քաղաքներ էին մեկնել 3,800 հոգի, Նոր Բայազետի գավառից՝ 9,000 հոգի, 1904 թ. Զանգեզուրից Բաքու աշխատանքի էին գնացել մոտ 10,000 հոգի։

Գյուղացիության շերտավորման հետևանքով առաջ էին եկել մի կողմից հողից ու տնտեսությունից զուրկ գյուղատնտեսական պրոլետարիատի բազմաքանակ շերտը, մյուս կողմից՝ հարուստների և ցեցերի փոքրաթիվ խումբը, որն անխնա շահագործում էր գյուղի չքավորությանը։ Կուտակելով խոշոր հարստություններ, կուլակների մի մասը հիմնում էր կապիտալիստական արդյունաբերական ձեռնարկություններ։ Գյուղացիական մանրապրանքային արտադրության տեսակարար կշիռը շարունակ նվազում էր, միջակ գյուղացիությունը աստիճանաբար պակասում էր։

Կապիտալիզմի զարգացմանը մեծապես օժանդակեց երկաթուղային շինարարությունը։ Ելնելով իր տնտեսական ու ռազմաքաղաքական նպատակներից, ցարական կառավարությունը կառուցում էր նոր երկաթուղային և խճուղային ճանապարհներ։ 1902 թ. գործարկվեց Ալեքսանդրոպոլ—Երևան երկաթ-

գիծը, որը միացրեց Երևանը Թիֆլիսի հետ, իսկ 1908 թ. Երևան—Ջուլֆա երկաթուղին։

Բանվորների ու գյուղացիների դրությունը։ Արդյունաբերական բանվորների ընդհանուր թիվը Հայաստանում 1902—1903 թթ. կազմում էր մոտ 10 հազար մարդ, իսկ 1905—1906 թթ. 12,000։ Բանվորների մեծ մասը կենտրոնացած էր Ալավերդու և Զանգեզուրի պղնձահանքերում, երկաթուղիների վրա, Երևանի ու Ալեքսանդրոպոլի արդյունաբերական ձեռնարկություններում։ Հայ բանվորները զգալի թիվ էին կազմում Անդրկովկասի արդյունաբերական խոշոր կենտրոններում՝ Բաքվում, Թիֆլիսում և Բաթումում։

Բանվորների դրությունը չափազանց ծանր էր։ Նրանք ծայրահեղ չքավորության մեջ էին ապրում, աշխատանքային օրը տևում էր 10—14 ժամ, իսկ ամսական միջին աշխատավարձը կազմում էր 18—20 ռուբլի։ Ցածր աշխատավարձը չէր ապահովում ապրուստի մինիմումը։ Առանձնապես դաժան կերպով շահագործվում էին պատանիներն ու կանայք, որոնք ծանր աշխատանքի համար օրական ստանում էին 15—20 կոպեկ, թեև աշխատում էին նույնքան, որքան տղամարդիկ։ Ձեռնարկատերերը, օգտագործելով ամեն մի առիթ, բանվորներին ենթարկում էին բազմատեսակ ծանր տուգանքների։

«Կայծ» լրագիրը Ալավերդու պղնձահանքերում աշխատող բանվորների դրության մասին 1906 թ. գրում էր. «Հանքահորերում աշխատողները ստանում են 60 կ. օրավարձ, շատ քչերի օրավարձը հասնում է 1ռ. 20 կ.-ի։ Արհեստավորները՝ (հյուսն, սլեսար և այլն) 1 ռ. 50 կ. մինչև 2 ռ.։ Նրանց օգնականները՝ 70 կոպ. մինչև 1 ռ., էլեկտրատեխնիկների օրավարձը միևնույն է ինչ որ սլեսարներինը. զավոդում բանող մշակները ստանում են օրական 45 կ. մինչև 60 կ.։ Այս չնչին վճարների վերա պետք է ավելացնել կառավարիչների ամեն մի չնչին պատճառով նշանակած տուգանքները։ Աշխատանքի օրվա ժամանակամիջոցը հաշվվում է 10 ժամ, իսկ այն գործերը, որոնց տեխնիկական տեսակետից անհարմար է դադարեցնել՝ տևում է 12 ժամ առանց ընդմիջումի»։

Անտանելի էին բանվորների կենցաղային պայմանները։ Բանվորները ապրում էին մութ, խոնավ, կեղտոտ նկուղներում և բարակներում։ Լայն տարածում էին ստացել թոքախտը, հոդացավը և այլ հիվանդությունները։ Առանձնապես ծանր էր հանքափորների դրությունը։ Նրանք օրական 10—12 ժամ աշխատում էին հողի ընդերքում՝ հեղձուցիչ գազերի, խոնավության ու փոշու մեջ։ Հանքատերերը և ոչ մի միջոց չէին ձեռնարկում աշխատանքի պայմանները բարելավելու, բանվորների կյանքի անվտանգությունն ապահովելու համար։ Հիվանդության, հաշմանդամության կամ ծերության դեպքում ապահովություն չկար, աշխատանքից զրկված բանվորը սովահարության էր մատնվում։ Բացակայում էր բժշկական օգնությունը։ Գործարանատերերն աշխատում էին բանվորներին հեռու պահել լուսավորությունից ու կուլտուրայից։

Բանվորներն իրավազուրկ էին։ Նրանց արգիլվում էր ժողովներ գումարել, լրագիր հրատարակել, արհմիություններ կազմակերպել։ Նրանք չունեին ընտրելու և ընտրվելու իրավունք, ենթարկվում էին ամեն տեսակի կամայականությունների, ծեծի, վիրավորանքների ու պատիժների։

Ավելի ծանր պայմաններում էր գտնվում աշխատավոր գյուղացին։ Նա աղքատ էր և հողազուրկ, տնքում էր պետական հարկերի ու կալվածատիրա-՝ յան տուրքերի ծանրության տակ, նա իրավազուրկ էր, խարխափում էր խավարի ու տգիտության մեջ։ Գյուղացուն կեղեքում և շահագործում էին կալվա-

ծատերն ու կուլակը, առևտրականն ու վաշխառուն, հոգևորականը և ցարական չինովնիկը։ Չկարողանալով իր տնտեսությունը վարել սեփական ուժերով, աշխատավոր գյուղացին կամ գիմում էր կուլակին ու կալվածատիրոջը, ամենածանր կապալային պայմաններով մշակելով նրանց պատկանող հողը, կամ չնչին վարձով աշխատանքի էր անցնում նրանց մոտ։ Գյուղացին ֆեոդալական պարտավորություններ էր կատարում կալվածատիրոջ համար։ Նա ենթարկվում էր անլուր ճնշումների ու բռնությունների։ 20-րդ դարի սկզբներին Հայաստանի գյուղի ծանր վիճակի մասին ժամանակակիցներից մեկը հետևյալ ձևով էր արտահայտվում. «Դարդ, ցավ, արցունք, արյուն-քրտինք, կարիք, վիշտ, աղքատություն, հարստահարություն, կողոպուտ, զրկանք... ահա գյուղը»։

Հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանն իր «Գութանի երգ»-ը նշանավոր բանաստեղծության մեջ խոսում էր աղքատ, հոգսերի ու կարիքի մեջ ընկած աշխատավոր գյուղացու վշտի ու բողոքի մասին.

Պարտքատերը գանգատ գընաց,
Քյոխվեն կրգա, կրծեծի,
Տերտերն օրհնեց, անվարձ մընաց,
Կը բարկանա, կանիծի։

Էն օրն եկան Թովջի արին,
Հարկ են ուզում տերության.
Ի՞նչ տամ կոռին ու բեգյառին...
Վարի, վարի, իմ գութան։

Զեռքս պակաս, ուժս հատած,
Հազար ու մի ցավի տեր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ։

Աղքատանում և տնտեսապես քայքայվում էր նաև արհեստավորությունը։ Չդիմանալով կապիտալիստական արդյունաբերության մրցակցությանը, արհեստավորական արտադրանքը ավելի ու ավելի էր դուրս մղվում շուկայից, որի հետևանքով արհեստավորներն ընկնում էին ծանր կացության մեջ։ Կարիքն ու քաղցը, ընտանիքի գոյությունը պահպանելու անհրաժեշտությունը ստիպում էին շատերին թողնել իրենց արհեստը և բանվոր դառնալ, վարձու աշխատանք կատարել գործարաններում ու ֆաբրիկաներում։

Ժողովրդական մասսաները, սակայն, ենթակա էին ոչ միայն սոցիալ-դասակարգային, այլև ազգային-գաղութային ճնշումների ու կեղեքումների։ Ցարական կառավարությունը ինչպես Ռուսաստանի կազմի մեջ մտած մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի նկատմամբ վարում էր ազգային ճնշման ու հալածանքի բիրտ քաղաքականություն։ Ցարական սատրապները փակում էին հայկական դպրոցներն ու կուլտուր-կրթական ընկերությունները, ամեն տեսակի արգելքներ էին հարուցում ազգային կուլտուրայի զարգացման համար, վիրավորում ու ոտնահարում էին ժողովրդի ազգային զգացմունքներն ու արժանապատվությունը։ Հալածանքները հայ ժողովրդի նկատմամբ առանձնապես ուժեղացան 19-րդ դարի վերջերին ու 20-րդ դարի սկզբներին, երբ Կովկասի կառավարչապետ էր արիստոկրատ ու սևհարյուրյակային իշխան Գոլիցինը։

Այսպիսով հայ ժողովրդական մասսաները ենթարկվում էին կրկնակի հնշման ու կեղեքման։ Նրանց շահագործում, ճնշում և հարստահարում էին ինչպես «սեփական» կալվածատերերն ու կապիտալիստները, այնպես էլ ցարական չինովնիկներն ու ոստիկանները։

Դասակարգային շահագործումն ու կեղեքումը, ազգային ճնշումներն ու հարստահարությունները ոտքի էին կանգնեցնում ու պայքարի հանում բանվորներին և աշխատավորներին։ Ռուսաստանում աճող բանվորական ու գյուղացիական հզոր ռևոլյուցիոն շարժման ազդեցության տակ և նրա հետ մեկտեղ 20-րդ դարի սկզբին ծավալվեց Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի բանվորության ու գյուղացիության ռևոլյուցիոն պայքարը՝ տիրող կարգերի, ցարիզմի ու կապիտալիզմի դեմ։

2. ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1905 Թ. ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

Ռևոլյուցիոն շարժման վերելքը և սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները Անդրկովկասում։ 1900—1903 թթ. տեղի ունեցավ արդյունաբերական ճգնաժամ։ Այդ տարիներին Կովկասում ևս բանվորների պայքարը ցարիզմի ու կապիտալիզմի դեմ ավելի ուժեղացավ։ Բանվորները շատ տեղերում տնտեսական գործադուլներից անցան քաղաքական գործադուլների, կազմակերպեցին մասսայական քաղաքական ցույցեր ու ռևոլյուցիոն ելույթներ։ Միաժամանակ բայն ծավալ ստացավ գյուղացիական ապստամբական շարժումը։

1901 թվականի մայիսի 1-ին Պետերբուրգի Օբուխովյան ռազմական գործարանում հզոր քաղաքական գործադուլ բռնկվեց։ Այդ նույն թվականին տեղի ունեցավ խոշոր գործադուլ Դոնի Ռոստովում։ 1903 թվականին մասսայական քաղաքական գործադուլներն ընդգրկեցին Բաքուն, Թիֆլիսը, Բաթումը և Ուկրաինայի խոշոր քաղաքներ՝ Օդեսան, Կիևը, Եկատերինոսլավը։

Բանվորական շարժման ազդեցության տակ ծավալվեց և նոր թափ ընդունեց գյուղացիական ռևոլյուցիոն շարժումը։ 1902 — 1903 թվականներին տեղի ունեցան գյուղացիական ապստամբություններ Ուկրաինայում և Վրաստանում։ 20-րդ դարի սկզբին Ռուսաստանում և Անդրկովկասում ծավալված բանվորական շարժումը ղեկավարում էին սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները։

Վ. Ի. Լենինը ինչպես 1890-ական թվականներին, այնպես էլ 20-րդ դարի սկզբին հսկայական աշխատանք ծավալեց սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունները դաղափարապես և կազմակերպչորեն ամրապնդելու և մարտական ու համախմբված ռևոլյուցիոն մարքսիստական պարտիա ստեղծելու համար։ Այս ուղղությամբ վիթխարի դեր խաղաց Լենինյան «Իսկրա» լրագիրը, որն սկսեց լույս տեսնել 1900 թվականի դեկտեմբերին։

Վ. Ի. Լենինի զինակիցներ Ի. Վ. Ստալինի, Լ. Կեցխովելու, Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի և ուրիշների ջանքերով Անդրկովկասում ևս ստեղծվեցին Լենինյան-իսկրայական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ։ 1901 թվականին կազմակերպվեցին Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի (ՌՍԴԲՊ) Բաքվի և Թիֆլիսի կոմիտեները։ Հետագա տարիներին ստեղծվեցին Լենինյան-իսկրայական ուղղության նոր կազմակերպու-

թյուններ։ 1903 թվականին հիմնվեց Կովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ղեկավար կենտրոնը՝ ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական կոմիտեն։

Լենինի պայքարը ռևոլյուցիոն բանվորական պարտիա ստեղծելու համար հաջողությամբ պսակվեց։ Լենինը և նրա կողմնակիցները ջախջախեցին «էկոնոմիստներին» ու այլ տիպի օպորտունիստներին, որոնք ամեն կերպ խանգարում էին ռևոլյուցիոն շարժումը ղեկավարելու ընդունակ, միասնական կենտրոնացած բանվորական պարտիա ստեղծելու գործին։ 1903 թ. հուլիսին կայացավ ՌՍԴԲՊ-ի 2-րդ համագումարը։ Կազմակերպվեց բոլշևիկների պարտիան՝ Ռուսաստանի բանվոր դասակարգի ամրակուռ, ռևոլյուցիոն պարտիան։ Բոլշևիկները Լենինի ղեկավարությամբ, վճռական պայքար մղելով մենշևիկ օպորտունիստների, ինչպես նաև կոնտրռևոլյուցիոն պարտիաների ու կազմակերպությունների դեմ, գլխավորեցին բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության ռևոլյուցիոն շարժումը ցարիզմի ու կապիտալիզմի դեմ։

Բանվորական գործադուլները Հայաստանում։ 20-րդ դարի սկզբին բանվորական գործադուլներ տեղի ունեցան նաև Հայաստանում։ 1902—1903 թթ. գործադուլ հայտարարեցին Ալավերդու պղնձի հանքերի և Ալեքսանդրոպոլ-Ղարաքիլիսա երկաթգծի բանվորները։ Այս գործադուլները անկազմակերպ էին և անհաջող ելք ունեցան, նրանց մասնակցեց բանվորության միայն մի մասը։

1904 թ. բռնկվեցին նոր գործադուլներ, որոնցից առանձնապես աչքի ընկավ Ալեքսանդրոպոլի բանվորների ապրիլյան գործադուլը։ Իրենց նյութական ծանր դրությունը բարելավելու նպատակով Ալեքսանդրոպոլի արդյունաբերական ձեռնարկությունների և փուռերի բանվորները 1904 թ. ապրիլի 29-ին գործադուլ հայտարարեցին։ Գործադուլավորները պահանջեցին կրճատել բանվորական օրը, բարձրացնել աշխատավարձը, բանվորներին բնակարան հատկացնել, պահպանել ուռճիկը, արձակուրդի ժամանակ տալ բժշկական օգնություն, քաղաքավարի վերաբերմունք ունենալ բանվորների նկատմամբ և այլն։

Ձեռնարկատերերի հետ բանակցություններ վարելու համար գործադուլավորները ընտրեցին 11 մարդուց կազմված մի կոմիտե։ Սկսվեցին բանակցությունները, սակայն նրանք արդյունք չունեցան։ Ապրիլի 30-ին բանվորները ցույց կազմակերպեցին, բայց այն ցրվեց ոստիկանների և դաշնակցական խմբապետների կողմից։ Ցուցարարներից շատերը ծեծի ենթարկվեցին, մի մասն էլ բանտ նետվեց։ Գործադուլը վերջացավ անհաջողությամբ։

Հայաստանում 1902 — 1904 թթ. տեղի ունեցած այս գործադուլները ունեին տնտեսական բնույթ։ Նրանք դեռևս անկազմակերպ էին և չունեին փորձված ղեկավարներ։

Հաղպատի գյուղացիների ելույթը։ 20-րդ դարի սկզբին Հայաստանում տեղի ունեցան մի շարք գյուղացիական ելույթներ։ Դրանցից աչքի ընկավ հատկապես Հաղպատի գյուղացիների 1903 թվականի ելույթը։

Հաղպատի գյուղացիները գտնվում էին տնտեսական ու իրավական ծանր վիճակում։ Նրանք ունեին ընդամենը 500 դեսյատին հող, մինչդեռ մնացած 6,500 դեսյատին հողը պատկանում էր իշխան Բարաթովին։ Գյուղացիները ստիպված էին կապալով վերցնել Բարաթովի հողերը։

Կապալի պայմանները ծանր էին։ Գյուղացիները վճարում էին մեծ գումարներ և կատարում զանազան պարտավորություններ։ Սակայն իշխան Բարաթովի ագահությունը չափ չուներ, նա աշխատում էր քամել գյուղացիներից

վերջին հյութը։ 1902 թվականին նա ավելի բարձրացրեց հողի կապալավարձը, բայց գյուղացիները, ի վիճակի չլինելով վճարել այն, չհամաձայնվեցին նոր պայմանների հետ։ Գազազած իշխանը կեղծ և շինծու գործ սկսեց գյուղացիների դեմ և դիմելով դատարանին պահանջեց գյուղացիներից կապալավարձ իր ցանկացածի չափով։ Ցարական բյուրոկրատիան, հավատարիմ իր էությանը, ընդառաջեց և օժանդակեց Բարաթովին։ Դատարանը վճիռ արձակեց հոգուտ ազահ իշխանի։ Պաշտպանելով իրենց իրավունքները, գյուղացիները որոշեցին չենթարկվել այդ ապօրինի վճռին։ Հողատեր իշխանի պահանջը բավարարելու համար մի քանի անգամ Հաղպատ եկավ գավառապետը, բայց նրան չհաջողվեց իրագործել իր նպատակը։

Գործը հետզհետե ավելի բարդացավ։ 1903 թվականի նոյեմբերին ոստիկանների ուղեկցությամբ Հաղպատ եկավ դատական պրիստավը և փորձեց ցուցակագրել գյուղացիների գույքը վաճառքի հանելու համար։ Զայրացած գյուղացիները ծեծի ենթարկեցին և գյուղից դուրս վռնդեցին անկոչ հյուրերին։ Գավառապետ Շանշիևը հեռագիր ուղարկեց Թիֆլիս՝ Կովկասի կառավարչապետի անունով այն մասին, որ գյուղացիները ըմբոստացել են ու զինված դիմադրություն են ցույց տալիս։ Շուտով Հաղպատ ժամանեց կազակ-ոստիկանների մի խոշոր ջոկատ և անմիջապես գործի անցավ։ Ոստիկանները սկսեցին տներից դուրս բերել իրերը, գոմերից՝ անասունները։ Գյուղացիները դիմադրեցին և ապա քարերով ու փայտերով հարձակվեցին ոստիկանների վրա։ Տեղի ունեցավ ընդհարում, ոստիկանները կրակ բաց արին, որի հետևանքով գյուղացիներից սպանվեցին 8 հոգի, այդ թվում 4 կին։ Շատերը ծանր վերքեր ստացան, 60 մարդ բանտ նետվեցին, կատարվեց էկզեկուցիա։ «Պրոլետարիատի կոիվ» թերթը, խոսելով ցարական ոստիկանության և զորքերի կողմից Հաղպատ գյուղում կատարած գազանությունների մասին, գրում էր. «Չի կարելի նկարագրել այն գազանությունները, որոնք տեղի ունեցան այնտեղ։ Կազակները, թափվելով տները, կողոպտում էին այն բոլորը, ինչ որ ձեռքի տակ էր ընկնում, ծեծում էին տղամարդկանց ու երեխաներին, իսկ կանանց ու աղջկերանց բռնաբարում։ Կանանց գլխի զարդերը և գյուղացիների հավաքած մի քանի կոպեկները բոլորովին անհայտացան։ Բոլոր գյուղը կողոպտելուց հետո արդեն սկսեց տեղի ունենալ սարսափելի էկզեկուցիա։ Կազակները հերթով միմյանց էին հանձնում գյուղացիներին և լավ ծեծում. խեղճ գյուղացին ազատվում էր այն ժամանակ, երբ վերջանում էր դահիճների շրջանը, այսինքն երբ բոլորը անխնա կերպով ծեծում էին։ Գյուղացիները ազատվում էին հարևան գյուղերը փախչելով... Ներկայումս գյուղում էլ մարդ չկա։ Այնտեղ, որտեղ քիչ առաջ կովում էր կյանքը, այժմ դարձել է անապատ։ Գավառական պրիստավը այս գազանությունների վերջում ման էր գալիս ասելով. «Հաղպատը մենք հավասարեցրինք հողի հետ, այնտեղ այլևս խոտ չի բուսնի»։

Հաղպատի արյունոտ անցքերը մեծ հուզմունք առաջացրին Հայաստանի գյուղերում և ավաններում, ինչպես նաև Ալավերդու պղնձահանքերի ու երկաթգծի բանվորության մեջ։

Ազգային-ժողովրդական շարժում ցարիզմի դեմ։ Ցարական կառավարությունը 20-րդ դարի սկզբին ավելի ուժեղացրեց ազգային ճնշումների ու հալածանքների իր քաղաքականությունը։ Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցինը նոր արշավանք սկսեց անդրկովկասյան ժողովուրդների և մասնավորապես հայ ժողովրդի դեմ։ Ցարական սատրապը փակեց հայկական դպրոց-

ների ու պարբերականների մի մասը, արգելեց կուլտուր-կրթական և բարեգործական ընկերությունների գործունեությունը, ուժեղացրեց գրաքննությունը և այլն։ Գոլիցինի խորհրդով ցար Նիկոլայ 2-րդը 1903 թվականի հունիսի 12-ին ստորագրեց մի օրենք, որի համաձայն պետք է բռնագրավվեին ու պետականացվեին հայկական եկեղեցու գույքն ու կալվածները։ Այս օրենքը, ըստ էության, ուղղված էր հայ ժողովրդի դեմ։ Եկեղեցական կալվածների հաշվին պահվում էին որոշ թվով դպրոցներ։ Բռնագրավել այդ կալվածները, նշանակում էր նշված դպրոցները զրկել իրենց նյութական բազայից, փակել և այդպիսով նոր հարված հասցնել հայ ժողովրդի դպրոցական-կրթական գործին։

1903 թվականի հունիսի 12-ի հրամանագիրը առաջ բերեց մեծ դժգոհություն և զայրույթ։ Ամենուրեք որոշում ընդունեցին դիմադրել ցարական կառավարությանը։ Ի պատասխան վերջինիս կողմից գործադրվող բռնի միջոցների՝ կազմակերպվեցին մասսայական ցույցեր։ Վրդովված մասսաների և ոստիկանության միջև տեղի ունեցան զինված ընդհարումներ։

Հակացարական ազգային շարժման մեջ ընդգրկվեց ամբողջ Կովկասի հայ բնակչությունը։ Առաջին զինված ընդհարումը ցարական ոստիկանության հետ տեղի ունեցավ Գանձակում (այժմ Կիրովաբադ) 1903 թվականի օգոստոսի 29-ին։ Այդ օրը հայ բնակչությունից սպանվեցին կամ վիրավորվեցին ավելի քան 80 հոգի։ Գանձակի դեպքերն իրենց արձագանքը գտան Անդրկովկասի մի շարք քաղաքներում՝ Թիֆլիսում, Բաքվում, Երևանում, Էջմիածնում, Ալեքսանդրոպոլում և այլուր։ Թիֆլիսում զինված ընդհարումներ եղան օգոստոսի 31-ին։ Դրությունն այնքան լուրջ էր, որ Գոլիցինը քաղաքում ռազմական դրություն հայտարարեց։ Բաքվում սեպտեմբերի 2-ին տեղի ունեցած ընդհարման ժամանակ տեղի հայ բնակիչներից սպանվեցին 11 և վիրավորվեցին 65 մարդ։

Հակացարական ժողովրդական ելույթներ տեղի ունեցան նաև գավառներում։ Գյուղացիական հոծ մասսաները հանդես եկան ցարիզմի դեմ։ Միաժամանակ կազմակերպվեցին տեռորիստական ակտեր։ Տեռորիստների ձեռքով սպանվեցին ցարական մի շարք չինովնիկներ, սպանության անհաջող փորձ կատարեցին նաև իշխան Գոլիցինի վրա։

Եկեղեցական կալվածների բռնագրավման կապակցությամբ սկսված հակացարական շարժումը համաժողովրդական բնույթ ստացավ։ 1903 թ. հունիսի 12-ի հրամանագիրը մի առիթ հանդիսացավ, որպեսզի հեղեղի նման հորդեր հայ ժողովրդի մեջ տարիներից իվեր կուտակված բողոքն ու զայրույթը ցարական կարգերի դեմ։ Հայաստանի մի շարք գավառներում և մասնավորապես Լոռի — Փամբակում ազգային-հակացարական շարժումը խորացավ և վերածվեց դասակարգային պայքարի։ Աշխատավոր գյուղացիները հաճախ հարձակվում էին կալվածատերերի վրա և բռնագրավում նրանց հողերը։

Վրաց և աղրբեջանական ժողովուրդները եղբայրական համերաշխություն և համակրություն ցուցաբերեցին հայ ժողովրդի նկատմամբ։ Նրանք պաշտպան կանգնեցին ցարական դեսպոտիզմի դեմ ոտքի ելած հայ աշխատավոր մասսաներին։

Հայ բուրժուա-նացիոնալիստական պարտիաներն ու կազմակերպությունները և մասնավորապես դաշնակներն ու հնչակյանները, կղերական վերնախավի հետ միասին, փորձում էին հրահրել ազգայնական կրքերը և սահմանափակել ժողովրդական մասսաների շարժումը նեղ ազգային խնդիրներով։

Դիմելով անհատական տեռորի վնասակար տակտիկային, կատարելով ցարական չինովնիկության առանձին ներկայացուցիչների անօգուտ սպանություններ, նրանք շեղում էին աշխատավորության ուշադրությունը դասակարգային լայն պայքարի խնդիրներից։ Ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիան, ընդհակառակը, ձգտում էր ազգային շարժումը վերածել դասակարգային մասսայական-քաղաքական պայքարի։ Մերկացնելով բուրժուական նացիոնալիստներին, ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատները կոչ էին անում աշխատավոր մասսաներին ռուս ժողովրդի, Կովկասի բոլոր ժողովուրդների հետ միասին ռևոլյուցիոն պայքար մղել ցարական ինքնակալության դեմ։ Հենց այս իմաստով ՌՍԴԲՊ-ի Կովկասյան Միութենական կոմիտեն հրապարակեց հատուկ կոչեր։ Հայ ժողովրդի հակացարական այս պայքարն իր ժամանակ լայնորեն լուսաբանվեց լենինյան «Իսկրա»-ի էջերում։

Ցարական կառավարությունը սկզբում կարողացավ ճնշել հայ ժողովրդի շարժումը և կենսագործել 1903 թ. հունիսի 12-ի հրամանագիրը։ Սակայն, հետագայում, արագ աճող համառուսական ռևոլյուցիոն շարժման ազդեցության տակ, նա ստիպված եղավ վիջել։ 1904 թ. Գոլիցինը հետ կանչվեց իր պաշտոնից, իսկ 1905 թ. օգոստոսին Նիկոլայ 2-րդը վերացրեց 1903 թ. հունիսի 12-ի իր հրամանագիրը։

Սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպությունները Հայաստանում։ 20-րդ դարի սկզբներին Հայաստանում հիմնվեցին ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատական խմբակներ և կազմակերպություններ։ Դրանք ստեղծվեցին Ռուսաստանի և Անդրկովկասի արդյունաբերական կենտրոնների սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործակցությամբ և օժանդակությամբ։ 1902 թվականին կազմակերպվեց Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը, որը հենց նույն տարում հրատարակեց իր օրգանը՝ «Պրոլետարիատ» թերթը։ Այստեղ տպագրվեց Միության մանիֆեստը, ուր շարադրված է Միության ծրագիրը։ «... Մեր Միությունը,— ասված է Մանիֆեստում,— Ռուսիայի ամեն ծայրերում յուր ցանցը լայն տարածող «Ռուսիայի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության» ճյուղերից մեկը լինելով, միանգամայն համերաշխ է նրա հետ և նրա հետ միասին կռվելու է հանուն Ռուսիայի պրոլետարիատի շահերի ընդհանրապես և հայկականի — մասնավորապես»։

Վ. Ի. Լենինը «Իսկրա»-ում հրապարակած «Հայ սոցիալ-դեմոկրատների մանիֆեստի մասին» իր հոդվածում ողջունեց Միության կազմակերպումը և նրա Մանիֆեստը։ «Հայ սոցիալ-դեմոկրատների Միության» կազմակերպիչներն էին Ստեփան Շահումյանը, Բոգդան Կնունյանցը, Արշակ Զոհրաբյանը և ուրիշները։ 1902 թվականին Ալեքսանդրոպոլ քաղաքի կայազորում հիմնվեց սոցիալ-դեմոկրատական խմբակ։ 1903 թվականին սոցիալ-դեմոկրատական խմբակներ ստեղծվեցին Ալեքսանդրոպոլում, Հաղպատում, Սանահինում, Ջալալ-օղլում (այժմ՝ Ստեփանավան), երկաթգծի Ալավերդու կայարանում, իսկ 1904 թ.՝ Կարսում և Երևանում։

Հայաստանում կազմակերպված սոցիալ-դեմոկրատական խմբակները ՌՍԴԲՊ-ի բջիջներն էին։ Նրանք սերտորեն կապված էին Բաքվի և Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ, կազմակերպորեն ենթարկվում էին ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական կոմիտեին։ Լենինյան-իսկրայական ուղղության այդ սոցիալ-դեմոկրատական խմբակները ՌՍԴԲՊ 2-րդ համագումարից հետո ձևակերպվեցին որպես բոլշևիկյան կազմակերպություն-

ներ և լայն աշխատանք ծավալեցին Հայաստանի բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիության մեջ։ Նրանք եռանդուն պայքար մղեցին մենշևիկների ու դաշնակների, ամեն տեսակի օպորտունիստական և կոնտրռևոլյուցիոն պարտիաների ու հոսանքների դեմ։ Ծանր հարվածներ հասցնելով բուրժուական նացիոնալիզմին, որը Հայաստանի և Անդրկովկասի պայմաններում ռևոլյուցիոն շարժման գլխավոր թշնամին էր հանդիսանում, սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպությունները դաստիարակում էին Հայաստանի բանվորներին ու բոլոր աշխատավորներին պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով։

Առանձնապես մեծ աշխատանք կատարեցին Լոռում գործող սոցիալ-դեմոկրատական խմբակները։ Նրանք սերտ կապեր հաստատեցին աշխատավոր գյուղացիության հետ և զգալի ազդեցություն ունեցան նրա վրա։ Աշխույժ գործունեություն ծավալվեց նաև Ալավերդու, Ալեքսանդրոպոլի ու Երևանի բանվորության և աշխատավորության մեջ։ Հայաստանի բանվորներին ու ժողովրդական մասսաներին ռևոլյուցիոն ոգով դաստիարակելու, նրանց պայքարը կազմակերպելու և ղեկավարելու գործում տեղական սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպությունների և խմբակների հետ միասին խոշոր դեր խաղաց Կովկասյան Միութենական կոմիտեն։

Մարքսիզմի գրավոր պրոպագանդան։ Կազմակերպական աշխատանքի և բանավոր պրոպագանդայի հետ մեկտեղ Անդրկովկասի և Հայաստանի բոլշևիկները կազմակերպեցին մարքսիզմ-լենինիզմի գաղափարների գրավոր պրոպագանդան։ Այս ուղղությամբ առանձնապես մեծ դեր խաղաց լենինյան «Իսկրա»-ն, որը ստացվում էր Անդրկովկասում, բազմացվում էր Բաքվի բոլշևիկյան ընդհատակյա տպարանում և ապա տարածվում երկրի բոլոր մասերում։ 1903 թվականին Երևանում գաղտնի կերպով ստացվում էր 4—5 օրինակ «Իսկրա»։

1903 թվականից սկսած Թիֆլիսում լույս տեսավ ՌՍԴԲՊ-ի Կովկասյան Միութենական կոմիտեի օրգան «Պրոլետարիատի կռիվ» անլեգալ լրագիրը՝ Ի. Վ. Ստալինի, Ալ. Ծուլուկիձեի և Ստ. Շահումյանի խմբագրությամբ։ Անդրկովկասի բոլշևիկների այս մարտական օրգանը, որ տպագրվում էր հայերեն, վրացերեն, իսկ 1905 թվականից նաև ռուսերեն լեզուներով, անհաշտ և վճռական կռիվ էր մղում երկրում տիրող կարգերի դեմ, կոնտրռևոլյուցիոն, բուրժուա-նացիոնալիստական բոլոր պարտիաների ու հոսանքների դեմ։

Լրագրում զետեղված հոդվածները պատասխաններ էին տալիս այն բոլոր հարցերին, որոնք կապված էին բանվորական շարժման, գյուղացիական ռևոլյուցիոն պայքարի հետ, պարզաբանում էին բանվոր դասակարգի խնդիրները, լուսաբանում բանվորական մասսային հուզող դասակարգային պայքարի թեորիայի ու պրակտիկայի հարցերը։

«Պրոլետարիատի կռիվ»-ը բազմաթիվ հոդվածներ տպագրեց ցարիզմի ու կապիտալիզմի, կոնտրռևոլյուցիոն ու օպորտունիստական պարտիաների դեմ, նա գրում էր ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի անելիքների, պրոլետարիատի դասակարգային պայքարի, ագրարային և բանվորական հարցի, գիտական սոցիալիզմի և ժամանակի ակտուալ, հուզող ուրիշ շատ հարցերի մասին։ Թերթում հրապարակվում էին Վ. Ի. Լենինի և նրա հավատարիմ աշակերտներ ու զինակիցներ Ի. Վ. Ստալինի, Ստ. Շահումյանի, Ա. Ծուլուկիձեի և ուրիշների գրվածքները։ «Պրոլետարիատի կռվի» 1903 թ. № 2—3-ում, օրինակ,

հայերեն թարգմանությամբ լույս տեսան Լենինի «Միապետությունը տատանվում է» և «Պարտիայի 2-րդ համագումարի կազմակերպչական կոմիտեի ծանուցումը» հոդվածները։

«Պրոլետարիատի կռիվ»-ը լայնորեն տարածվում և ջերմ ընդունելություն էր գտնում Անդրկովկասի աշխատավոր մասսաների մեջ։ Նա հսկայական դեր կատարեց ինչպես վրաց, ադրբեջանական, այնպես էլ հայ բանվորներին ու աշխատավորներին ռևոլյուցիոն պայքարի ոգով դաստիարակելու գործում։

Լենինի ղեկավարությամբ 1904 թվականի սկզբին Ժնևում ՌՍԴԲՊ կենտրոնական կոմիտեին կից ստեղծվեց հրատարակչական կոմիտե։ Այս կոմիտեն ուներ մի հատուկ հանձնաժողով, որը հրատարակում էր մարքսիստական գրականություն հայերեն ու վրացերեն լեզուներով։ Հանձնաժողովի ջանքերով՝ Ստ. Շահումյանի անմիջական մասնակցությամբ, հայերեն թարգմանությամբ լույս տեսան Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը», «ՌՍԴԲՊ ծրագիրը» և մի շարք գիտա-մասսայական բրոշյուրներ։

1903 թ. նոյեմբերին Թիֆլիսի Հավլաբարի բանվորական ռայոնում հիմնադրվեց ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական կոմիտեի անլեգալ տպարանը, որտեղ տպագրվեցին Վ. Ի. Լենինի «Պրոլետարիատի ու գյուղացիության ռևոլյուցիոն-դեմոկրատական դիկտատուրան» աշխատությունը, զանազան բրոշյուրներ, տասնյակ թռուցիկներ և կոչեր ռուսերեն, հայերեն և վրացերեն։ Տպարանի հրատարակությունները լայնորեն տարածվում էին ամբողջ Անդրկովկասում և անգամ Ռուսաստանում։ Նրանք խոշոր դեր խաղացին հայ բանվորության և գյուղացիության մեջ մարքսիզմ-լենինիզմի գաղափարները տարածելու գործում։

Ստեփան Շահումյան։ 20-րդ դարի սկզբին ռևոլյուցիոն գործունեություն ծավալեցին ականավոր բոլշևիկներ, Վ. Ի. Լենինի հավատարիմ զինակիցներ Ստեփան Շահումյանը, Սուրեն Սպանդարյանը և Բոգդան Կնունյանցը։

Ստեփան Շահումյանը ծնվել է Թիֆլիսում 1878 թվականի հոկտեմբերի 1(13)-ին։ 1889 թ. նա ընդունվում է Թիֆլիսի ռեալական դպրոցը, որն ավարտում է 1898 թ.։ Դպրոցում Շահումյանն ակտիվ աշխատակցում է աշակերտական անլեգալ կազմակերպություններին և խմբագրում աշակերտական «ծիածան)» հանդեսը։

Դպրոցական տարիներին Շահումյանը ոգևորությամբ կարդում է հայ, ռուս և համաշխարհային կլասիկ գրականությունը։ Այդ շրջանում նա գտնվում էր հատկապես Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Նալբանդյանի գաղափարների ազդեցության տակ։ 1890-ական թվականների վերջերին նա սկսում է ուսումնասիրել Մարքսի, Էնգելսի, Լենինի երկերը։ Այդ տարիներին Անդրկովկասում ռևոլյուցիոն աշխատանք էին կատարում այնտեղ աքսորված ռուս մարքսիստները։ Սրանց հետ միասին մարքսիզմի պրոպագանդա էին մղում նաև տեղական ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատները։ Հենց այս միջավայրում էլ ձևավորվում է Շահումյանի մարքսիստական-մատերիալիստական աշխարհայացքը։

1900 թ. Շահումյանը Ռիգայի Պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանող էր։ Այդ տարվա վերջերին նա ընդունվում է ՌՍԴԲՊ շարքերը և ակտիվ մասնակցություն ունենալով ուսանողական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեության մեջ, շուտով դառնում է նրանց ղեկավարներից մեկը։ 1902 թ. փետրվարին Շահումյանը որպես Ռիգայի ուսանողության դե-

լեգատ մասնակցում է Պետերբուրգում կայացած 1-ին Համառուսական ուսանողական համագումարի աշխատանքներին։ Ռիգայում Շահումյանը անհաշտ պայքար է մղում հայ ուսանողության նացիոնալիստական տարրերի դեմ։

Շահումյանը չավարտեց ինստիտուտը։ 1902 թ. մարտին նա արտաքսվեց ինստիտուտից ռևոլյուցիոն գործունեության համար։

Վերադառնալով Թիֆլիս, Շահումյանը անմիջապես կապ հաստատեց տեղական սոցիալ-դեմոկրատական խմբակների հետ և ակտիվ մասնակցություն ունեցավ նրանց աշխատանքներին։

1902 թ. մայիսին հայ ականավոր գրող Ղազարոս Աղայանի 40-ամյա գրական գործունեության տոնակատարության կապակցությամբ Շահումյանը ողջույնի խոսք գրեց, որը հեկտոգրաֆով բազմացվեց ու տարածվեց Թիֆլիսում։ Շահումյանն իր խոսքի մեջ անխնա մերկացնում էր ռեակցիոն բուրժուա-նացիոնալիստական ինտելիգենցիային և մասսաներին կոչ էր անում դուրս գալու ռևոլյուցիոն պայքարի ցարական ինքնակալության դեմ։ Ռևոլյուցիոն երիտասարդության անունից Շահումյանը հռչակում էր.

«...Մենք բաղաքական-ռևոլյուցիոն կոիվ ենք քարոզում. բուրժուական «ազգասիրության» ու «ազատության» փլատակների վրա մենք կարմիր, պրոլետարական դրոշակ ենք պարզում, որի վրա գրում ենք առայժմ.

«Կոիվ բռնակալության դեմ.

Կեցցե քաղաքական ազատությունը»։

1902 թ. ամառ Շահումյանը արտասահման է մեկնում և ընդունվում Բեռլինի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետը։ Այստեղ նա շարունակում է ուսումնասիրել մարքսիզմը, մոտիկից ծանոթանում է Գերմանիայի և Արևմրտյան Եվրոպայի այլ երկրների բանվորական շարժման հետ, միաժամանակ ակտիվ ռևոլյուցիոն աշխատանք է տանում ՌՍԴԲՊ արտասահմանյան կազմակերպությունների մեջ։

1903 թ. գարնանը Ժնևում Շահումյանն առաջին անգամ հանդիպում է Վ. Ի. Լենինին։ Այդ հանդիպումը խոշոր դեր խաղաց Շահումյանի կյանքում։ Շահումյանը դարձավ Վլադիմիր Իլյիչի հավատարիմ աշակերտն ու մարտական զինակիցը։

ՌՍԴԲՊ-ի 2-րդ համագումարում լուրջ, սկզբունքային տարաձայնություններ առաջացան բոլշևիկների ու մենշևիկների միջև։ Շահումյանը վճռականորեն անցավ Լենինի կողմը և մինչև իր կյանքի վերջը մնաց անհողդողդ բոլշևիկ։

Պարտիայի 2-րդ համագումարից հետո շարունակելով ապրել արտասահմանում, Շահումյանը Լենինի ղեկավարությամբ, ծավալեց եռանդուն հրատարակչական և պրոպագանդիստական աշխատանք։ 1904 թվականին նրա թարգմանությամբ լույս տեսավ «Կոմունիստական պարտիայի մանիֆեստը»։ Դա «Մանիֆեստի» առաջին լիակատար հրատարակությունն էր հայերեն։

1904 թվականի վերջին Շահումյանը վերադառնում է Անդրկովկաս, որտեղ եռանդով շարունակում է ծառայել ռևոլյուցիայի գործին։ Շուտով նա ընտրվում է ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական կոմիտեի անդամ և մտնում է «Պրոլետարիատի կոիվ» լրագրի խմբագրության կազմի մեջ։

Անդրկովկասում Շահումյանը տեսական-պրոպագանդիստական և կազմակերպական մեծ աշխատանք է կատարում։ Որպես իսկական ինտերնացիո-

նալիստ, նա շարունակում է իր անհաշտ կռիվը բուրժուական նացիոնալիզմի դեմ։ Շահումյանը հրապարակեց մի շարք հոդվածներ դաշնակների ու հընչակյանների դեմ, որոնք փորձում էին թունավորել ժողովրդի գիտակցությունը նացիոնալիզմով ու շովինիզմով, և բոլոր միջոցներով կռվում էին ռևոլյուցիոն շարժման ու սոցիալ-դեմոկրատիայի դեմ։

Խնդիրն այն է, ասում էր Շահումյանը, որ պետք է անխնա պայքար մղել հայ ռեակցիոն, բուրժուա-նացիոնալիստական դաշնակցություն պարտիայի դեմ, համախմբել հայ աշխատավորական մասսաներին ռուս ռևոլյուցիոն պրոլետարիատի շուրջը և վճռական մոմենտին ռուս, վրաց և ադրբեջանական ժողովուրդների հետ միասին նրանց գրոհի տանել ցարական միապետության դեմ։

Ս. Սպանդարյան և Բ. Կնունյանց։ *Սուրեն Սպանդարյանը ծնվել է Թիֆլիսում 1882 թվականին։ Միջնակարգ կրթությունը ստացել է Թիֆլիսի 3-րդ արական գիմնազիայում։ Պատանեկան հասակից մասնակցել է մարքսիստական խմբակների աշխատանքներին։ 1902 թվականին Սպանդարյանը մտնում է ՌՍԴԲՊ շարքերը։ 1902 թվականին ընդունվում է Մոսկվայի Համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը, ապա մի տարի անց՝ փոխադրվում իրավաբանական ֆակուլտետը։ Մոսկվայում նա ընդհատակյա ռևոլյուցիոն աշխատանք է տանում, և համառ կերպով աշխատում է իր ինքնազարգացման վրա։ 1903 թվականին, պարտիայի 2-րդ համագումարից հետո, նա առանց տատանվելու անցնում է բոլշևիկների կողմը։ ՌՍԴԲՊ-ի Մոսկվայի կոմիտեի հանձնարարությամբ Սպանդարյանը պարտիական կազմակերպչի և պրոպագանդիստի աշխատանք է կատարում Պրեսնայի ռայոնի բանվորների մեջ։ Նա հաճախ ելույթներ է ունենում բանվորական ժողովներում՝ անխնա մերկացնելով մենշևիկյան օպորտունիստներին։*

Սուրեն Սպանդարյանը միաժամանակ գործոն մասնակցություն է ունենում Մոսկվայի ռևոլյուցիոն ուսանողության խմբակների աշխատանքներին և հատկապես նրանց կողմից կազմակերպված ցույցերին ու դեմոնստրացիաներին։

Մոսկվայում ուսումնառության տարիներին Ս. Սպանդարյանը շարունակ կապ է պահպանում Անդրկովկասի բոլշևիկների հետ։ Ամեն տարի նա իր ամառային արձակուրդը անց է կացնում Անդրկովկասում և ակտիվ կերպով մասնակցում է տեղական բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքներին։

1905 թ. գարնանը Սպանդարյանը կարճ ժամանակով գնում է արտասահման, ապա վերադառնում Թիֆլիս, հետո անցնում է Մոսկվա և այստեղ մասնակցում 1905 թվականի դեկտեմբերյան զինված ապստամբությանը։

1906 թվականի սկզբին Սպանդարյանը նորից Թիֆլիսումն է և տանում է ռևոլյուցիոն մեծ աշխատանք։ Փայլուն հռետոր և տաղանդավոր հրապարակախոս Ս. Սպանդարյանը իր դիպուկ խոսքով և սուր գրչով մերկացնում, քողազերծ է անում դաշնակներին ու մենշևիկներին, էսերներին ու կադետներին։ Սպանդարյանը բանվորների և աշխատավորության մեջ վայելում էր մեծ հեղինակություն։ Պարտիական շրջաններում նա հայտնի էր «Տիմոֆեյ» մականունով։

Բոդդան Կնունյանցը ծնվել է լեռնային Ղարաբաղում 1878 թվականին։ Ութ տարեկան հասակում ընդունվում է Էջմիածնի ռեալական դպրոցը, որը հաջո-

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ղությամբ ավարտում է 1895 թվականին։ Հաջորդ տարին գնում է Պետերբուրգ և ընդունվում տեխնոլոգիական ինստիտուտ։ Այստեղ նա ակտիվ կերպով մասնակցում է ուսանողական ռևոլյուցիոն շարժումներին, որի համար և 1897 թվականին կարճատև բանտարկության է ենթարկվում, իսկ 1899 թվականին հեռացվում է ինստիտուտից։ Մեկ տարի հետո Կնունյանցը վերընդունվում է ինստիտուտ, բայց 1901 թ. մարտին ռևոլյուցիոն ցույցերին մասնակցելու համար նորից հեռացվում է և երկու տարով արտաքսվում Պետերբուրգից։ Վերադառնալով Բաքու, նա իրեն ամբողջովին նվիրում է ռևոլյուցիոն գործունեության։

Կնունյանցը դառնում է պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներ։ Նա աշխույժ գործունեություն է ծավալում Բաքվում և ամբողջ Անդրկովկասում։ 1901 թվականին հիմնվում է ՌՍԴԲՊ լենինյան-իսկրայական ուղղության Բաքվի կոմիտեն, որի կազմի մեջ ընտրվում են Լ. Կեցխովելին, Բ. Կնունյանցը, Մելիք Մելիքյանը («Դեդուշկա») և ուրիշներ։ Կնունյանցն իր ընկերների հետ միասին կազմակերպում է ռևոլյուցիոն ցույցեր, դեմոնստրացիաներ, բանվորական գործադուլներ, հրատարակում է գաղտնի դրականություն և կոչեր, աշխատակցում է լենինյան «Իսկրա»-ին և այլն։

1903 թվականի մարտ ամսին Թիֆլիսում տեղի ունեցավ Անդրկովկասի ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջին համագումարը։ Կնունյանցը մասնակցում է համագումարին և ընտրվում Կովկասյան Միութենական կոմիտեի անդամ։ Նույն թվականի ամառը նա անցնում է արտասահման և որպես Բաքվի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության դելեգատ մասնակցում է ՌՍԴԲՊ-ի երկրորդ համագումարին, հիմնականում այնտեղ հանդես գալով որպես լենինյան-իսկրայական ուղղության կողմնակից։ Կնունյանցը մի շարք սուր ելույթներ է ունենում մենշևիկների դեմ և ջերմորեն պաշտպանում է Վ. Ի. Լենինին։

Համագումարից հետո՝ 1903 թվականի աշնանը Կնունյանցը վերադառնում է Ռուսաստան և շարունակում իր ռևոլյուցիոն գործունեությունը։ 1904 թվականի սկզբներին նա ընտրվում է ՌՍԴԲՊ-ի Մոսկվայի կոմիտեի անդամ, բայց շուտով բանտարկվում է՝ և մոտ մեկ տարուց ավելի մնում է բանտում։ 1906 թվականի մարտի 30-ին, դատական պրոցեսի ժամանակ, Կնունյանցը արտասանում է չափազանց համարձակ և խիզախ մի ճառ, որը ուղղված լինելով ցարական դեսպոտիզմի դեմ, մեծ տպավորություն և խանդավառություն առաջ բերեց բանվորական լայն մասսաների մեջ։ Այդ ճառը գաղտնի կերպով տպագրվեց և բազմաթիվ օրինակներով տարածվեց ամբողջ Ռուսաստանում։

Օր ավուր աճող ռևոլյուցիոն շարժման ազդեցության տակ ցարական կառավարությունը ստիպված է լինում բանտից ազատել Կնունյանցին։ 1905 թվականի կեսերից Կնունյանցը աշխատում է Պետերբուրգում, ընտրվում է ՌՍԴԲՊ-ի Պետերբուրգի Կոմիտեի անդամ, իսկ նույն թվականի աշնանը՝ Պետերբուրգի բանվորների Սովետի գործադիր կոմիտեի անդամ։

Կնունյանցը գրել է բազմաթիվ հոդվածներ, ինչպես ռուսերեն, այնպես էլ հայերեն լեզվով։ Նա խոշոր աշխատանք է կատարել մարքսիզմի գաղափարները Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում տարածելու գործում։ Կնունյանցը հանդես է եկել Ռուբեն, Ռուսով և այլ անուններով։

3. ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1905—1907 ԹԹ.

Ռուսական առաջին ռևոլյուցիայի սկիզբը: Բանվորների և գյուղացիների պայքարը ցարիզմի դեմ գնալով ավելի ու ավելի ծավալվեց։ Ռևոլյուցիոն շարժմանը, սակայն, առանձնապես նոր թափ և ուժ տվեց ռուս-յապոնական պատերազմը։

1904 թվականի հունվարին յապոնական զինված ուժերը առանց Ռուսաստանին պատերազմ հայտարարելու՝ հանկարծակի հարձակվեցին ռուսական Պորտ-Արտուր նավահանգստի վրա և լուրջ կորուստներ հասցրին նրա ռազմածովային նավատորմիղին։ Սկսվեց ռուս-յապոնական պատերազմը, որ հետևանք էր իմպերիալիստական պետությունների սուր հակասությունների, պետություններ, որոնք ձգտում էին նվաճել Կորեան, Չինաստանը և այլն։ Պատերազմը ծանր զոհեր բերեց ռուս ժողովրդին, նորանոր տուրքերով ծանրացրեց հարկային բեռը, է՛լ ավելի վատթարացրեց ժողովրդական մասսաների առանց այն էլ ծանր դրությունը։ Նա ցույց տվեց ցարական Ռուսաստանի ռազմական և պետական ամբողջ կառուցվածքի նեխվածությունը։ Ցարական կառավարությունը ի վիճակի չէր վարելու պատերազմը և պարտություն կրեց։ Ռազմական անհաջողությունները թուլացրին ցարիզմի դիրքերը, է՛լ ավելի սաստկացավ ժողովրդի ատելությունը դեպի ինքնակալությունը։

Տիրող կարգերի դեմ բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ մղվող պայքարի մեջ շարունակ ներգրավվում էին բանվորների ու գյուղացիների նորանոր շերտեր։ Մասսաների ռևոլյուցիոն շարժումը անընդհատ ծավալվում էր։ Մեկը մյուսի հետևից տեղի էին ունենում գործադուլներ, ցույցեր և ապստամբական ելույթներ։

1904 թ. դեկտեմբերին սկսվեց Բաքվի բանվորների գործադուլը, որը տևեց դեկտեմբերի 13-ից մինչև 31-ը և ընդգրկեց 40,000 բանվոր և ծառայող։ Ոստիկանության փորձը զենքի ուժով ճնշելու գործադուլը՝ անհաջող անցավ։ Նավթարդյունաբերողներն ստիպված եղան բավարարելու բանվորների պահանջները։ Բանվորների և նավթարդյունաբերողների միջև կնքվեց կոլեկտիվ պայմանագիր, որ առաջինն էր Ռուսաստանի բանվորական շարժման պատմության մեջ։ Բաքվի գործադուլը մեծ ազդեցություն ունեցավ բանվորական շարժման հետագա զարգացման վրա։

1905 թ. հունվարի սկզբներին Պետերբուրգի Պուտիլովյան (այժմ Կիրովյան) գործարանում բռնկվեց գործադուլ, որ շուտով վերածվեց ընդհանուր գործադուլի։ Ցարական կառավարությունը որոշեց աճող ռևոլյուցիոն այդ շարժումը ճնշել պրովոկացիոն միջոցներով։ Նա դիմեց ոստիկանության գաղտնի ծառայության մեջ գտնվող Գապոն քահանային, որպեսզի համոզի բանվորներին, թե պետք է հրաժարվել ռևոլյուցիոն պայքարից, և հույսը դնել ցարի ողորմածության վրա։ Պրովոկատոր Գապոնը սկսեց քարոզներ կարդալ այդ ուղղությամբ և որոշ հաջողություն ունեցավ իր սև ծրագրերի մեջ։ Ականջ դնելով նրա հորդորներին, բանվորներն իրենց կանանց ու երեխաների հետ միասին կիրակի օրը, հունվարի 9-ին, գնացին դեպի Ձմեռային պալատը՝ նպատակ ունենալով ցարին հանձնելու բանվորների կարիքների համար կազմած խնդրագիրը։ Բանվորները կարծում էին, որ ցարը կլսի և կբավարարի իրենց արդարացի պահանջը։ Սակայն ցարն այլ կերպ վարվեց. հենց որ բանվորների վիթխարի զանգվածը՝ 140 հազար մարդ, մոտեցավ Ձմեռային պալատին,

նախօրոք պատրաստված ցարական զորքը կրակ բաց արեց անզեն մասսայի վրա։ Հազարից ավելի մարդ սպանվեց, երկու հազարից ավելի՝ վիրավորվեց։ Մայրաքաղաքի փողոցները ողողվեցին արյունով։ Հունվարի 9-ը այդ պատճառով անվանվեց «Արյունոտ կիրակի»։

Ցարական կառավարությունը կարծում էր, թե հունվարի 9-ի կոտորածը կկանխի օրավուր աճող բանվորական շարժումը։ Սակայն նա իր հաշիվներում սխալ դուրս եկավ։ Հունվարի 9-ին բանվորները կորցրին իրենց հավատը ղեպի ցարը. նրանք հասկացան, որ ազատությունը կարելի է ձեռք բերել միայն ռևոլյուցիոն պայքարով։ Հենց այդ օրը Պետերբուրգի բանվորներն սկսեցին բարիկադներ կառուցել։ Հունվարի 9-ը դարձավ ռուսական առաջին ռևոլյուցիայի սկիզբը։

«Սկսած հունվարի 9-ից բանվորական շարժումը մեզանում, մեր աչքի առաջ աճում-վերածվում է ժողովրդական ապստամբության»[1]։

«Արյունոտ կիրակի»-ի լուրը կայծակի արագությամբ տարածվեց ամբողջ երկրում՝ առաջ բերելով ընդհանուր վրդովմունք ու զայրույթ։ Ի նշան բողոքի ընդդեմ ցարի չարագործության՝ կազմակերպվեցին ցույցեր և գործադուլներ։ Գործադուլավորների քանակը միայն հունվար ամսին հասավ 440 հազարի։ Համարյա ամենուրեք գործադուլավորները քաղաքական պահանջներ էին առաջադրում։ Բանվորական մասսաները փողոց էին դուրս գալիս «Կորչի ինքնակալությունը» լոզունգով։

1905—1907 թթ. ռևոլյուցիան Ռուսաստանում իմպերիալիզմի էպոխայի առաջին ժողովրդական ռևոլյուցիան էր։ Նրա մեջ ընդգրկվեցին ժողովրդական ամենալայն խավերը՝ բանվորները, գյուղացիները, ուսանողությունը, դեմոկրատական ինտելիգենցիան։ Ռևոլյուցիայի ղեկավարը և գլխավոր շարժիչ ուժը պրոլետարիատն էր։ Ռևոլյուցիայի հիմնական շարժիչ ուժ էր հանդիսանում նաև գյուղացիությունը։ Վախեցած պրոլետարական ռևոլյուցիոն շարժումից, բուրժուազիան դաշինք էր փնտրում ոչ թե ժողովրդի, այլ ցարի ու կալվածատերերի հետ։ Նա կոնտրռևոլյուցիոն ուժ էր։

Ռուսական առաջին ռևոլյուցիան, իր բնույթով բուրժուա-դեմոկրատական, գյուղացիական-դեմոկրատական էր։ Նրա անմիջական խնդիրն էր տապալել ինքնակալությունը, ոչնչացնել ֆեոդալական կարգերը և հաստատել դեմոկրատական ռեսպուբլիկա։ Ռևոլյուցիան միաժամանակ պրոլետարական էր, որովհետև նրա ղեկավարը բանվոր դասակարգն էր, որովհետև ռևոլյուցիայի ընթացքը և ծավալը որոշում էին պրոլետարական պայքարի ձևերը ու մեթոդները։ Պրոլետարիատը ընդունակ էր, գյուղացիների հետ դաշնակցած, ռևոլյուցիան մինչև վերջ հասցնել, կազմակերպել դեմոկրատական ռևոլյուցիայի ներաճումը սոցիալիստականի։

Ռևոլյուցիայի տարիներին միակ հետևողական ռևոլյուցիոն պարտիան բոլշևիկների պարտիան էր։ Բոլշևիկները «կուրս էին վերցրել ծավալել ռևոլյուցիան, տապալել ցարիզմը զինված ապստամբության միջոցով, հաստատել բանվոր դասակարգի հեգեմոնիան, մեկուսացնել կադետական բուրժուազիային, դաշինք կնքել գյուղացիության հետ, ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարություն ստեղծել բանվորների և գյուղացիների ներկայացուցիչներից, հաղ-

[1] Վ. Ի. ԼԵՆԻՆ, Երկեր, հատոր 8, էջ 177։

թական վախճանի հասցնել ռևոլյուցիան»[1]։ Ռևոլյուցիայի տարիներին բոլշևիկների պարտիան Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ ծավալեց գաղափարական և կազմակերպական հսկայական աշխատանք, նա գլխավորեց ժողովրդական մասսաների ռևոլյուցիոն պայքարը ցարիզմի և կապիտալիզմի դեմ։

Հայաստանում, ինչպես և ամբողջ Անդրկովկասում, 1905—1907 թթ. ծավալված հակացարական ռևոլյուցիոն շարժումը սերտորեն կապված էր ռուսական ռևոլյուցիոն շարժման հետ, զարգանում էր նրա անմիջական ազդեցության տակ և ուներ հիմնականում նույն բնույթը և բովանդակությունը։ Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների պայքարն անցավ զարգացման նույն այն էտապները, ինչ որ ունեցավ ռուսական ռևոլյուցիոն շարժումը։

Գործադուլային շարժումը 1905 թ. գարնանը և ամռանը։ 1905 թվականի ռևոլյուցիոն շարժումն սկսվեց բանվորական գործադուլներով։ Հունվարի 9-ի արյունոտ դեպքերից հետո Ռուսաստանում ծավալվող գործադուլային շարժման ալիքը տարածվեց նաև Անդրկովկասի վրա։ Ի նշան համերաշխության, Անդրկովկասի բանվորական մասսաները հետևեցին Պետերբուրգի, Մոսկվայի և Ռուսաստանի այլ քաղաքների գործադուլավոր բանվորների օրինակին։ Արդեն հունվարի երկրորդ կեսին գործադուլ արեցին Թիֆլիսի, Բաքվի, Բաթումի, Քութայիսի, Անդրկովկասյան երկաթգծի բանվորները։ Գործադուլային շարժումն առանձնապես մեծ ծավալ ստացավ 1905 թ. գարնանը։ Միաժամանակ տեղի ունեցան միտինգներ ու ցույցեր, որոնք հաճախ վերջանում էին ոստիկանության հետ ունեցած արյունալի ընդհարումներով։

Գյուղացիական շարժումը նոր թափ ստացավ Արևմտյան Վրաստանում։ ՌՍԴԲՊ-ի 3-րդ համագումարը, որ տեղի ունեցավ 1905 թվականի ապրիլին Լոնդոնում, արձանագրեց այն փաստը, որ ռևոլյուցիոն շարժումը Կովկասում լայն ծավալ է ստացել։ Կովկասի իրադարձությունների առթիվ համագումարի ընդունած բանաձևում ասված է, որ «ռևոլյուցիոն շարժումը Կովկասի բնակչության մեծամասնության մեջ ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղերում արդեն հասել է ինքնակալության դեմ ուղղված համաժողովրդական ապստամբության»։

Ծայր առած ռևոլյուցիոն շարժման մեջ ակտիվ մասնակցություն ունեցան նաև Հայաստանի բանվորներն ու գյուղացիները։ Գործադուլներ տեղի ունեցան Ալավերդում, Երևանում, Ալեքսանդրոպոլում, երկաթգծի արհեստանոցներում։ 1905 թվականի փետրվար-մարտ ամիսներին գործադուլ արին Ալավերդու պղնձահանքերի բանվորները։ Մարտի 20-ին աշխատանքը դադարեցրին Ալեքսանդրոպոլ — Ղարաքիլիսա երկաթուղային գծամասի բանվորներն ու ծառայողները։ Գործադուլավորները պահանջեցին բարձրացնել աշխատավարձը, կրճատել աշխատանքի տևողությունը և այլն։ Դադարեցրին աշխատանքը նաև Ալեքսանդրոպոլի դեպոյի բանվորները։ Գործադուլը տևեց մի քանի օր և վերջացավ միայն զորքի միջամտությունից հետո։

Ապրիլի 5-ին նոր, համեմատաբար ավելի կազմակերպված, գործադուլ սկսվեց Ալեքսանդրոպոլ կայարանում։ Այս գործադուլի մասին Անդրկովկասի երկաթգծի ոստիկանության վարչության Ալեքսանդրոպոլի բաժանմունքի պետը 1905 թվականի ապրիլի 7-ին զեկուցում էր. «Սույն ապրիլի 5-ին, Անդրկովկասյան երկաթուղիների Ալեքսանդրոպոլ կայարանում, քարշի սպասարկու-

[1] ՀԱՄԿ(բ)Պ պատմություն, համառոտ դասընթաց, էջ 127։

թյան բոլոր ծառայողները, այն է՝ շոգեկառքի սպասարկու կազմը, դեպոյի վարպետներն ու բանվորները իրար հետ համաձայնության գալով հրաժարվեցին աշխատել, պահանջելով բարելավել իրենց կյանքի պայմանները և ցրվելով քաղաքի զանազան բնակարանները, այնտեղ հավաքույթներ կազմակերպեցին խորհրդակցության համար, հայտարարելով, թե չեն շարունակի աշխատել, մինչև որ չբավարարվեն իրենց պահանջները։ Նույն օրվանից Թիֆլիս — Երևան և Ալեքսանդրոպոլ — Կարս երկաթուղային գծամասում դադարել է բոլոր գնացքների երթևեկությունը, բացառությամբ լոկ այն պատահական դեպքերի, երբ մեքենավարներից մեկն ու մեկը համաձայնում է ուղեկցել գնացքը»։

Ալեքսանդրոպոլ կայարանի բանվորության այս գործադուլը վերջացավ անհաջողությամբ։ Այն ճնշվեց ցարական ոստիկանների և դաշնակցական խրմբապետների կողմից։

Ապրիլի սկզբներին Երևանում գործադուլ հայտարարեցին Սարաջևի կոնյակի գործարանի բանվորները տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարությամբ։ Գործադուլավորները առաջադրեցին մի շարք պահանջներ, որոնց թվում և աշխատավարձի հավելում՝ մինչև 30 տոկոս, բանվորական նորմալ օր, բանվորներին աշխատանքի ընդունել և արձակել բանվորական կոմիտեի միջոցով և այլն։ Գործադուլը, որ տևեց երկու շաբաթ, վերջացավ մասնակի հաջողությամբ։ Բավարարվեց բանվորների պահանջի մի մասը։ Այդ նույն օրերին Երևանում սկսվեց նաև Շուստովի գինու և կոնյակի գործարանի բանվորների գործադուլը, որը նույնպես վերջացավ կոմպրոմիսով։

Ապրիլի 18-ին գործադուլ հայտարարեցին Կարս քաղաքի բոլոր փռերի բանվորները։ Նրանք պահանջեցին բարձրացնել իրենց աշխատավարձը և գիշերելու համար օթևան տրամադրել։ Ձեռնարկատերերը մերժեցին այդ պահանջները, և գործադուլավորները վերջ ի վերջո ստիպված եղան վերսկսել աշխատանքը։

Ապրիլի 22-ին գործադուլ սկսեցին Երևանի հասարակական հիմնարկների՝ հյուրանոցների, ճաշարանների և ակումբի բոլոր բանվորներն ու ծառայողները։ Այս գործադուլը վերջացավ մասնակի հաջողությամբ։ Գարնան ամիսներին տեղի ունեցան նաև գյուղացիական հուզումներ։ Մարտին և ապրիլին կալվածատերերի և իշխանության դեմ ելույթներ եղան Լոռու Այրում, Սանահին, Արդվի գյուղերում, ինչպես նաև Շորագյալում (Ալեքսանդրոպոլի դավառ)։

1905 թվականի ամռան ամիսներին ռևոլյուցիոն շարժումն ավելի ուժեղացավ։ Գործադուլների ալիքն ավելի բարձրացավ։ Նոր թափով բորբոքվեց գյուղացիական շարժումը Կենտրոնական Ռուսաստանում, Պովոլժեյում, Մերձբալթյան երկրամասում և այլուր։ Բանվորական ու գյուղացիական շարժման ազդեցության տակ տատանվեց բանակը՝ ցարիզմի նեցուկը։ 1905 թ. հունիսի 14-ին ապստամբվեցին «Պոտյոմկին» զրահանավի նավաստիները։ Ռևոլյուցիոն շարժումն ստացավ համաժողովրդական բնույթ։

Ռևոլյուցիոն շարժումը ծավալվեց նաև Անդրկովկասում։ Բանվորական գործադուլային շարժումներին զուգընթաց աճեցին ու խորացան գյուղացիական շարժումները, որոնք հատկապես Արևմտյան Վրաստանում ընդունեցին վիթխարի ու կազմակերպված բնույթ։ Գյուղացիական այդ շարժումները ղեկավարում էին Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները։ Միաժամանակ սկսվեցին նաև զինվորական ելույթներ։ Անդրկովկասի տարբեր մասն-

րում տեղավորված զորքի մեջ կազմակերպվեցին հակացարական ցույցեր ու դեմոնստրացիաներ։

Այս շրջանում Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժման գլխավոր օջախներն էին Բաքուն, Թիֆլիսը և Արևմտյան Վրաստանը։

Հայաստանում 1905 թվականի ամռան ամիսներին տեղի ունեցան բանվորական գործադուլներ և գյուղացիական ելույթներ։ Հունիս ամսին գործադուլ հայտարարեցին Ալավերդու պղնձահանքերի բանվորները։ Հուլիս-օգոստոս ամիսներին Լոռու, Էջմիածնի, Նոր Բայազետի գավառներում ընդհարումներ եղան գյուղացիների ու ոստիկանության միջև։ Գյուղացիները արձագանքում էին բոլշևիկների կոչերին։ Անդրկովկասի բոլշևիկների մարտական օրգան «Պրոլետարիատի կոիվ»-ը 1905 թվականի հուլիսին, խոսելով Բորչալուի և Լոռու գյուղացիության մասին, գրում էր. «Գյուղացիները մեծ համակրանք են ցույց տալիս մեր ագիտացիային և ուշադրությամբ լսում են մեր ասածները»։ Այս նույն շրջանում ՌՍԴԲՊ-ի Կովկասյան Մբուխենական կոմիտեն հրապարակեց հատուկ կոչ, ուղղված հայ գյուղացիներին։ Կոչում ասվում էր.

«Ողջ Կովկասը այրվում է բոցերի մեջ։ Վրաստանի տանջված ու ստրուկ գյուղացին ոտքի է կանգնել... Ի՞նչ պետք է անեք դուք հայ գյուղացիներ։ Ամենից առաջ բռնագրավեցեք կալվածատերերի հողերը, ստեղծեցեք ձեր ռևոլյուցիոն կոմիտեները, կազմակերպվեցեք սոցիալ-դեմոկրատական դրոշի տակ և վրացական ընչազուրկ գյուղացիների հետ ձեռք-ձեռքի դեպի ազատություն, դեպի դեմոկրատական ռեսպուբլիկա»։

Հոկտեմբերյան ընդհանուր գործադուլը Հայաստանում։ 1905 թվականի աշնանը բանվորական գործադուլային շարժումը Ռուսաստանում հասավ իր զարգացման գագաթնակետին։ Հոկտեմբերի սկզբներին Մոսկվայում սկսվեց երկաթուղային բանվորների վիթխարի քաղաքական գործադուլ, որը շուտով ընդգրկեց երկրի բոլոր երկաթուղիները։ Երկաթուղային բանվորներին հետևեցին բոլոր խոշոր գործարանների և արդյունաբերական օբյեկտների բանվորները։ Գործադուլավորներին միացան ուսանողները, ծառայողները և դեմոկրատական ինտելիգենցիան։

Մասսայական-քաղաքական այս գործադուլը խիստ վախեցրեց ցար Նիկոլայ 2-րդին։ Հոկտեմբերի 17-ին նա հրապարակեց մի մանիֆեստ, որով խոստանում էր անձի անձեռնմխելիություն, խղճի, խոսքի, ժողովների, միությունների ազատություն և այլն։ Հոկտեմբերյան մանիֆեստը բավարարեց ռևոլյուցիայի վտանգից սարսափած բուրժուազիային և նրա պարտիաներին։ Բոլշևիկների պարտիան, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, լայն պրոպագանդա սկսեց Հոկտեմբերյան մանիֆեստի դեմ և ցույց տվեց, որ դա ժողովրդական մասսաներին խաբելու մի միջոց է։ Բոլշևիկները կոչ արին չհավատալ ցարի հավաստիացումներին և պատրաստվել զինված ապստամբության։ Բոլշևիկների կոչը լայն արձագանք գտավ բանվորության և աշխատավոր մասսաների մեջ։ Քաղաքական գործադուլները շարունակվեցին նոր թափով, տեղի ունեցան զինված ընդհարումներ, կազմակերպվեցին բանվորների պատգամավորների սովետներ, որոնք հանդիսացան Սովետական իշխանության նախատիպը։

Հոկտեմբերյան մասսայական-քաղաքական գործադուլը լայն ծավալ ստացավ ինչպես ամբողջ Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում։ Հոկտեմբերի 14-ին Թիֆլիսում սկսված երկաթուղայինների գործադուլին հետևեցին նաև Հայաստանի երկաթգծի բանվորները։ Հոկտեմբերի 15-ին աշխատանքը

դադարեցրին երկաթուղու Ալեքսանդրոպոլ — Կարս — Երևան գծամասի բանվորներն ու ծառայողները։ Գործադուլը ղեկավարելու համար կազմվում է «գործադուլային կոմիտե»։ Տեղի են ունենում ցույցեր ու միտինգներ։ Հոկտեմբերի 16-ին հրապարակվում է բոլշևիկյան պարտիայի Ալեքսանդրոպոլի կազմակերպության թռուցիկը, որտեղ շարադրված էին գործադուլավորների պահանջները։ Թռուցիկն սկսվում էր հետևյալ տողերով. «Ընկերներ, մենք՝ դեպոյի և Ալեքսանդրոպոլ կայարանի ծառայողներս, միանալով ռուսական երկաթուղայինների ընդհանուր գործադուլին, հայտարարում ենք, որ մենք ընդունել ենք բոլոր գործադուլավորների ընդհանուր որոշումը՝ գործի չանցնել, մինչև չբավարարվեն ներքոհիշյալ մեր այն պահանջները, որոնք գրավական են հանդիսանում Ռուսաստանում բնակվող բոլոր ժողովուրդների բարեկեցության»։

Թռուցիկում առաջադրված էր 18 պահանջ, այդ թվում և հետևյալները. 1. հրավիրել հիմնադիր ժողով՝ ընտրված ընդհանուր, հավասար, գաղտնի և ուղղակի ձայնտվությամբ. 2. ընտրության իրավունք տալ 20 տարեկան երկսեռ բոլոր հպատակներին. 3. ազատել քաղաքական և կրոնական համոզմունքների համար բոլոր տուժողներին. 4. հավասարություն օրենքի հանդեպ առանց ազդեցությունների և դասերի խտրության. 5. խոսքի, մամուլի, ժողովների, միությունների և հավատի ազատություն. 6. մահվան պատժի վերացում։

Հոկտեմբերի 16-ին երկաթգծի Սանահին ու Շահալի կայարաններում խորտակվում են վինվորական գնացքները։ Գործադուլը տարածվում է Ալեքսանդրոպոլ — Ալավերդի գծի վրա։ Գործադուլ են հայտարարում նաև Ալեքսանդրոպոլ քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների բանվորներն ու ծառայողները։ Քաղաքում կազմակերպվում են ցույցեր։ Մեծ ցույց է կազմակերպվում հատկապես հոկտեմբերի 28-ին, երբ Կարսից Ալեքսանդրոպոլ են դալիս ցարական կառավարության կողմից Կարս աքսորված Բաքվի 35 ռևոլյուցիոն բանվորները, որոնց թվում և ականավոր բոլշևիկ Ալյոշա Ջափարիձեն։ Ալեքսանդրոպոլ կայարանում աքսորից վերադարձողներին դիմավորում են կայարանի ու քաղաքի բանվորները և ռևոլյուցիոնորեն տրամադրված աշխատավորությունը։ Կազմակերպվում է դեմոնստրացիա, որին մասնակցում է ավելի քան երկու հազար մարդ։ Արտասանվում են հակացարական բովանդակության ռևոլյուցիոն ճառեր, դեմոնստրանտները կրում են կարմիր դրոշներ։

Այդ օրերին ցույցեր ու միտինգներ են տեղի ունենում նաև Երևանում ու Կարսում։ Հոկտեմբերի 26-ին բոլշևիկների Կարսի խմբակը հրապարակում է մի թռուցիկ, որով կոչ է անում չհավատալ ցարի խոստումներին, հոկտեմբերի 17-ի մանիֆեստին և շարունակել պայքարը ցարիզմը տապալելու համար։ Թռուցիկը վերջանում էր հետևյալ լոզունգներով. «Կորչե՛ն ցարի կեղծ մուրհակները», «Կորչի՛ նրա ողորմածությունը», «Կեցցե՛ ռևոլյուցիան և դեմոկրատական ռեսպուբլիկան», «Կեցցե՛ սոցիալիզմը»։

Ալավերդու բանվորների նոյեմբերյան գործադուլը։ Բանվորական գործադուլային շարժումը շարունակվեց ծավալվել ու խորանալ նոյեմբեր ամսին։ Երկաթգծի Սանահին և Ալավերդի կայարանների բանվորները նոյեմբերի 19 և 20-ին գործադուլ հայտարարեցին։ Բռնկվեց նաև Ալավերդու պղնձահանքերի և պղնձաձուլական գործարանների բանվորների քաղաքական խոշոր գործադուլը, որին մասնակցում էին մի քանի հազար մարդ։

Գործադուլը սկսվեց նոյեմբերի 20-ին։ Այդ նույն օրը բանվորները կազմակերպեցին մասսայական քաղաքական ցույց, որին մասնակցեցին շրջանի գյուղացիները և երկաթգծի հարևան կայարանների բանվորները։ Գործադուլը ղեկավարելու համար ստեղծվեց գործադուլային կոմիտե, որը կազմեց բանվորների պահանջը և այն ներկայացրեց գործարանատերերին։ Բանվորները պահանջում էին սահմանել ութ ժամյա բանվորական օր, ռոճիկի ավելացում 26 տոկոսով, ստեղծել բանվորական տեսչություն, վերացնել տուգանքները, տարեկան մեկ ամիս արձակուրդ տալ, կառուցել բաղնիքներ, հատկացնել սենյակներ բնակվելու համար և այլն։ Հետաքրքիր է, որ գործադուլավորների պահանջագիրը վերջանում էր «Կեցցե՛ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիան» կոչով։

Գործարանային վարչությունը սկզբում մերժեց բավարարել բանվորների պահանջը։ Սակայն գործադուլավորները հանդես բերեցին մեծ տոկունություն և պնդեցին իրենց պահանջների վրա։ Սկսվեցին բանակցություններ։ Գործարանատերերը վերջ ի վերջո ստիպված եղան զիջել և բանվորների պահանջների մի զգալի մասը բավարարել։ Գործարանային վարչությունը համաձայնեց՝ բոլոր տեսակի աշխատանքների համար սահմանել 9 ժամյա բանվորական օր, ստեղծել բանվորական տեսչություն գործարանի վարչության և բանվորների փոխհարաբերության հարցով զբաղվելու համար, վերացնել կամայական տուգանքներ նշանակելը, բանվորներին տալ արձակուրդ և հիվանդության դեպքում՝ բժշկական օգնություն, գործադուլին մասնակցելու համար բանվորներին չազատել աշխատանքից և այլն։ Կատարելով այս զիջումները՝ գործարանային վարչությունը, սակայն, նպատակ ուներ ժամանակ շահել, որպեսզի հարմար մոմենտին հրաժարվի իր խոստումներից և հարձակում սկսի բանվորների դեմ։

Գործադուլը վերջացավ նոյեմբերի 25-ին։ Գործադուլավոր բանվորները, որոնց մեջ կային հայեր, ռուսներ, վրացիներ, ադրբեջանցիներ, պարսիկներ, հույներ և այլն, ցուցաբերեցին ազգային համերաշխության հիասքանչ օրինակ։ Բոլշևիկյան «Կավկազսկի ռաբոչի լիստոկ» թերթը՝ խոսելով այս գործադուլի մասին, նշում էր տարբեր ազգությունների պատկանող Ալավերդու բանվորների միասնությունը և համերաշխությունը։ «Այստեղ,— գրում էր թերթը,— բոլոր ազգությունների բանվորները՝ հայերը, պարսկահպատակ թաթարները, վրացիները և ռուսները կարմիր ռևոլյուցիոն դրոշի ներքո լսում էին հռետորներին, որոնք խոսում էին բոլոր չորս լեզուներով, բացատրում էին բանվորական հարցի էությունը (նրա տնտեսական ու քաղաքական կողմերը), քննադատում էին ժամանակակից պետական ռեժիմը... Հետաքրքիր է տեսնել, թե ի՞նչպես միատեսակ պայմանները միավորել էին տարբեր ազգությունների բանվորներին, ի՞նչպես այս խուլ անկյունում բանվորները վճռեցին ինչ էլ որ լինի, դիմանալ մինչև իրենց պահանջների բավարարումը»։

Ալավերդու բանվորների նոյեմբերյան գործադուլը ղեկավարում էր տեղական բոլշևիկյան կազմակերպությունը։ Գործադուլի ղեկավարման գործում առանձնապես խոշոր դեր խաղաց ականավոր բոլշևիկ Մելիք Մելիքյանը։

Ալավերդու բանվորների նոյեմբերյան գործադուլի օրերին հուզումներ տեղի ունեցան Ալեքսանդրոպոլի կայազորի զինվորների մեջ։ Նոյեմբերի սկզբին Ալեքսանդրոպոլի զինվորական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը զինվորներին ուղղված կոչ հրապարակեց, որտեղ ասվում էր, թե

բավական է ծառայել ժողովրդի թշնամիներին։ Կոչը լայն արձագանք է գտնում զինվորների մեջ։ Նոյեմբերի 24-ին կայազորի զինվորները բոլշևիկների ղեկավարությամբ կազմակերպում են հավաքույթ, ուր ռևոլյուցիոն ճառեր են ասվում, կոչեր են արվում աջակցելու ցարական կառավարության դեմ։ Զինվորները միաժամանակ հրամանատարությանը ներկայացնում են տնտեսական ու քաղաքական բնույթի մի շարք պահանջներ։

Նոյեմբեր ամսին գործադուլ արեցին նաև Ալեքսանդրոպոլի փոստ-հեռագրատան բանվորներն ու ծառայողները։

Դեկտեմբերյան զինված ընդհարումները Ալեքսանդրոպոլում։ 1905 թ. ռևոլյուցիոն շարժումը Ռուսաստանում հասավ իր զարգացման գագաթնակետին։ Դեկտեմբերի 9(22)-ին սկսվեց Մոսկվայի բանվորների զինված ապստամբությունը։ Մոսկվայի փողոցները ծածկվեցին բարիկադներով։ Սկսվեցին համառ մարտեր, որոնք տևեցին մինչև դեկտեմբերի 18-ը։ Բանվորները կրվում էին հերոսաբար։ Սակայն ուժերը հավասար չէին։ Կառավարությունը այլ քաղաքներից Մոսկվա փոխադրեց նորանոր գնդեր։ Ապստամբությունը ճընշվեց հրով և սրով։

Այդ օրերին ապստամբություններ տեղի ունեցան Կրասնոյարսկում, Նովոռոսիյսկում, Սևաստոպոլում, Կրոնշտադտում և մի շարք ուրիշ քաղաքներում և շրջաններում։

Զինված ապստամբություններ տեղի ունեցան նաև Անդրկովկասում՝ դեկտեմբերի 18-ին Թիֆլիսի Նախալովկա կոչված բանվորական ռայոնում, իսկ դեկտեմբերի 22 և 23-ին Սոլղատսկի բազարում և Դիդուբեի ռայոնում։ Ապստամբություններ բռնկվեցին Քութայիսում, Չիատուրիում, Զուգդիդում, Սամտրեդիում և այլ վայրերում։

Դեկտեմբերյան զինված ապստամբություններն արձագանք գտան նաև Հայաստանում, Մոսկվայի, Բաքվի և Թիֆլիսի երկաթուղայինների օրինակով դեկտեմբերի 10—12-ին գործադուլ հայտարարեցին Ալեքսանդրոպոլ — Կարս և Ալեքսանդրոպոլ — Երևան երկաթուղային տեղամասի բանվորներն ու ծառայողները։ Երկաթգծի Ալեքսանդրոպոլի հանգույցի բանվորները զինված ընդհարումներ ունեցան ոստիկանության հետ։ Դեկտեմբերի 15-ին երկաթգծի վրա իշխանությունն անցավ գործադուլային կոմիտեի ձեռքը։ Գնացքները երթևեկում էին միայն նրա դիտությամբ։ Ալեքսանդրոպոլի բոլշևիկյան կազմակերպությունը թռուցիկներ էր տարածում զինվորական մասերում, կոչ անելով դիմել զինված ապստամբության։ Իշխանությունները ռազմական դրություն հայտարարեցին։ Դեկտեմբերի վերջին Ալեքսանդրոպոլ եկան նոր զորամասեր։ Տեղի ունեցան ընդհարումներ, մասսայական ձերբակալություններ, երկաթուղին նորից անցավ կառավարության ձեռքը։

Ճնշելով զինված ապստամբությունը Մոսկվայում և այլ վայրերում, ցարական կառավարությունը դաժան ռեպրեսիաներ սկսեց բանվորների դեմ։ Միաժամանակ նա որոշեց խաբել մասսաներին, շեղել նրանց ռևոլյուցիայից՝ գումարելով «Օրենսդրական» Պետական դուման։ 1906 թ. ապրիլին բացվեց Պետական 1-ին դուման, որը, սակայն, լուծվեց նույն թվականի ամռանը ցարիզմին ոչ բավականաչափ հնազանդ լինելու համար։

Գործադուլային շարժումը Հայաստանում 1906 թ.։ Դեկտեմբերյան զինված ապստամբության պարտությունից հետո սկսվեց ռուսական առաջին ռևոլյուցիայի վայրէջքը։ Ռևոլյուցիոն բանվորները և գյուղացիները սկսեցին

դանդաղորեն նահանջել, բայց նահանջել՝ մարտեր տալով։ Ռևոլյուցիան դեռ ճնշված չէր, հակացարական մասսայական շարժումները շարունակվեցին նաև 1906 թվականին։ Այդ տարվա ընթացքում գործադուլավոր բանվորների թիվը Ռուսաստանում հասավ մեկ միլիոնի։ Գյուղացիական շարժումն ընդգրկեց նորանոր մարզեր ու շրջաններ։ Բռնկվեցին նոր հուզումներ բանակում և նավատորմում։

Ռևոլյուցիոն շարժումը չդադարեց նաև Հայաստանում։ Այստեղ ևս 1906 թվականին բռնկվեցին բանվորական գործադուլներ, գյուղացիական ելույթներ ու զինվորական հուզումներ։ Գարնան և ամռան ամիսներին տեղի ունեցան նոր գործադուլներ Ալավերդում, Ալեքսանդրոպոլում, Երևանում, երկաթգծի վրա և այլուր։ Սակայն դրանցից ամենախոշորը և նշանավորը Ալավերդու բանվորների օգոստոսյան գործադուլն էր։

Օգոստոսի մեկին Ալավերդու բանվորները տեղի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարությամբ գործարանատերերին են ներկայացնում իրենց պահանջները։ Բանվորները պահանջում են սահմանել 8 ժամյա աշխատանքային օր, վերացնել տուգանքները, ավելացնել աշխատավարձը, բացել դպրոց, դրադարան-ընթերցարան, ապահովագրել բանվորներին։ Ֆրանսիական կապիտալիստները, որոնց ձեռքում էին գտնվում այն ժամանակ Ալավերդու պղնձահանքերն ու պղնձաձուլարանները, մերժում են բավարարել բանվորների պահանջները։ Ի պատասխան դրան, հայտարարվում է գործադուլ, որ ընդհանուր և մասսայական բնույթ է ստանում։ Գործադուլավորների թիվը հասնում է 4 500-ի։ Կազմվում է գործադուլային կոմիտե։ Գործադուլը ղեկավարելու համար Թիֆլիսից Ալավերդի են գալիս Ստեփան Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը, որոնք խոշոր դեր են խաղում գործադուլին կազմակերպված բնույթ տալու գործում։

Գործարանատերերն ամեն կերպ աշխատում են ներսից պայթեցնել գործադուլը։ Այդ նպատակով նրանք դիմում են շտրեյկբրեխերների, դաշնակների ու մենշևիկների օգնությանը։ Սակայն այդ բոլորն ապարդյուն են անցնում։ Բանվորները ցուցաբերում են մեծ տոկունություն և համերաշխություն։ Այն ժամանակ կապիտալիստներին շտապում են օգնել ցարական կառավարության զինված ուժերը։ Օգոստոսի վերջերին Ալավերդի են գալիս կազակային-ոստիկանական ջոկատներ և զինվորական մասեր թնդանոթներով ու գնդացիրներով։ Գործադուլը, որ տևում է մոտ մեկ ամիս, ճնշվում է զենքի ուժով։ Շատ բանվորներ դաժան ծեծի են ենթարկվում, կատարվում են բանտարկություններ։ Մոտ 2 500 գործադուլավոր պարսիկ բանվորներ բռնի կերպով արտաքսվում են Իրան։

Այս անցքերը խորը բողոք և զայրույթ են առաջ բերում Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի բանվորության մեջ։ Շատ տեղերում Ալավերդու բանվորների համար օգնություն է կազմակերպվում։

Այս նույն ժամանակ՝ 1906 թվականի օգոստոսին համեմատաբար փոքր մի քանի գործադուլներ տեղի ունեցան Ալեքսանդրոպոլում։ Օգոստոսի 21-ից գործադուլ սկսեցին նաև Թիֆլիսի առևտրական բանկի Երևանի բաժանմունքի ծառայողները։ Այս գործադուլը, որ տևեց մոտ երեք ամիս, անհաջողությամբ վերջացավ։ Սեպտեմբեր ամսին դադարեցրին աշխատանքը՝ փականագործներն ու դարբինները Երևանում, և տպագրական բանվորները՝ Ալեքսանդրոպոլում։ Նոյեմբերի սկզբներին Երևանում գործադուլ են անում կապիտա-

յիստ Սարաչևի գինու և կոնյակի գործարանների բանվորները, իսկ դեկտեմբերին՝ նույն քաղաքի կաշեգործական ձեռնարկությունների բանվորները։

Հուզումներ գյուղում և զորքի մեջ։ Հայաստանում 1906 թվականի ընթացքում տեղի ունեցան նաև գյուղացիական և զինվորական ռևոլյուցիոն ելույթներ։ Մարտ-ապրիլ ամիսներին Ղազախ — Շամշադինի հողազուրկ գյուղացիները բռնագրավեցին կալվածատեր Արամյանի և Բեկ-Յուսուպովի հողերը։ Կալվածատերերին շուտով օգնության եկավ ցարական ժանդարմերիան, որը բանտարկեց և դաժան պատիժների ենթարկեց ըմբոստ գյուղացիներին։ Կատարվեց էկզեկուցիա։

Կալվածատերերի և ցարական կառավարության դեմ ըմբոստացան նաև Զանգեզուրի գավառի Մովսես և Խաչեն գյուղերի գյուղացիությունը։ Գյուղացիները հրաժարվեցին պարտավորություններ կատարել կալվածատերերի համար։ Նրանք իրենց գյուղերից դուրս քշեցին ցարական չինովնիկներին։ Զանգեզուր եկան ոստիկանական ջոկատներ զինված՝ թնդանոթներով ու գնդացիրներով։ Նրանք զենքի ուժով ճնշեցին նաև գյուղացիական այս ելույթը։

Ալեքսանդրոպոլի գավառի Միրաք գյուղի գյուղացիները հողի հարցի կապակցությամբ ընդհարում ունեցան կալվածատեր-աղալարների հետ։ Նույնանման դեպքեր կատարվեցին նաև Էջմիածնի ու Նոր Բայազետի գավառներում։

1906 թվականի ամռանը Լոռու գյուղերում սոցիալ-դեմոկրատական խմբակների ղեկավարությամբ կազմակերպվեցին մի շարք ցույցեր։ Գյուղացիները իրենց բողոքն ու զայրույթն էին արտահայտում ցարական կառավարության նկատմամբ և պահանջում էին հող ու ազատություն։

1906 թվականի հուլիսի 12-ին Հաղպատ գյուղում տեղի է ունենում միտինգ։ Գյուղացիները որոշում են հեռացնել գյուղից ոստիկաններին, հողի համար հարկ չտալ կալվածատիրոջը, քանի որ կարկուտը փչացրել է ցանքը, ազատ կերպով օգտվել անտառից և այլն։ Կալվածատեր Արամյանի ներկայացուցիչը, որ ներկա է լինում միտինգին, ստիպված համաձայնվում է գյուղացիների այս պահանջների հետ։

Նույն թվականի օգոստոսի սկզբին Լոռու Այգեհատ գյուղում տեղի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության անդամների ղեկավարությամբ կազմակերպվում է միտինգ, ուր ընդունում են որոշում՝ պակասեցնել պետական հարկերի և կալվածատիրական հողերի համար տրվող արենդավարձի չափը, բռնի կերպով օգտվել արոտատեղերից և այլն։ Գյուղացիներին հաջողվում է արոտավայրերի մասին ընդունած իրենց որոշումը կարճ ժամանակով իրականացնել կյանքում։

Հայաստանի բազմաթիվ գյուղերում ստեղծվեցին սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան խմբակներ, որոնք լայն աշխատանք ծավալեցին գյուղացիությանը քաղաքական-ռևոլյուցիոն պայքարի հանելու ուղղությամբ։ 1906 թվականին Ստեփան Շահումյանը գրում է. «Երևանում, Ալեքսանդրոպոլում, Կարսում..., երբեմն նույնիսկ ամենահեռավոր և ամենահետամնաց գյուղերում մենք ունենք արդեն պրոլետարական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ, որոնք կամաց-կամաց խմբում են իրանց շուրջը մեր գավառների կենսունակ, իսկապես ռևոլյուցիոն-պրոլետարական տարրերը և կազմակերպում նրանց հանուն սոցիալիզմի ընդհանրապես և հանուն անմիջական ռևոլյուցիոն կռվի ռուսաց բռնակալության դեմ՝ մասնավորապես»։

Ցարական դաժան ռեժիմի դեմ 1906 թվականին ռևոլյուցիոն ելույթներ եղան նաև Հայաստանում գտնվող զինվորական մասերում։ Այսպես, 1906 թվականի հունիսին լուրջ հուզումներ առաջացան Ալեքսանդրոպոլի և Կարսի կայազորներում։ Դրանց առիթը հետևյալն էր. Թիֆլիսից Ալեքսանդրոպոլ էին բերվել Մեգրելական գնդից 27 զինվոր, որոնք ռևոլյուցիոն շարժմանը մասնակցելու համար դատապարտված էին գնդակահարության։ Ալեքսանդրոպոլի կայազորի զինվորները, իմանալով այդ մասին, վճռականորեն պաշտպան կանգնեցին իրենց եղբայրներին և հունիսի 25-ին խոշոր ցույց և ելույթ կազմակերպելով պահանջեցին նրանց ազատել կալանքից։ Իշխանությունները փորձեցին դատավճիռը ի կատար ածել Կարսում։ Բայց Կարսի կայազորի զինվորները ևս վճռականապես հրաժարվեցին կրակել դատապարտյալների վրա և հունիսի 29-ին կազմակերպեցին մասսայական ցույց՝ պահանջելով փոխել մահվան դատավճիռը։ Վախենալով այն բանից, որ զորամասերի ու բնակչության մեջ հուզումներն ավելի կուժեղանան, իշխանությունները ստիպված եղան վերանայելու դատավճիռը։

Այդ առթիվ Պետերբուրգի բոլշևիկյան «Էխո» լրագիրը գրում էր. «Ալեքսանդրոպոլում գտնվող զորքի մեջ տեղի են ունենում լուրջ հուզումներ։ Կազմակերպվում են միտինգներ, որտեղ քննարկվում է արդի դրությունը... հուզումները սաստկանում են»։

Ալեքսանդրոպոլում և Կարսում զինվորական մասերում գործում էին սոցիալ-դեմոկրատական խմբակները։ Նրանք պրոպագանդա էին մղում ցարիզմի դեմ, ղեկավարում էին ցույցերը, տարածում մարտական թռուցիկներ ու լոզունգներ։

Ղափանի բանվորների 1907 թ. գործադուլը։ Բանվորական գործադուլները շարունակվեցին նաև 1907 թվականին։ Հունվարի 27-ին նորից գործադուլ հայտարարեցին կապիտալիստ Սարաջևի գինու-կոնյակի գործարանի բանվորները Երևանում, իսկ մարտի 10-ին Ալեքսանդրոպոլի տպարանների բանվորները։

1907 թվականի մարտի 26-ին խոշոր և ընդհանուր գործադուլ սկսվեց Ղափանի պղնձահանքերում ու գործարաններում։ Գործադուլին մասնակցում էին գրեթե բոլոր բանվորները՝ հայեր, ադրբեջանցիներ, ռուսներ և այլն, թվով ավելի քան 2 500 մարդ։ Կազմվեց գործադուլային կոմիտե, որը մշակեց ու գործարանատերերին ներկայացրեց բանվորների պահանջը՝ բաղկացած 27 կետից։ Գործադուլավորները պահանջում էին՝ 8 ժամյա բանվորական օր, ռոճիկների ավելացում, տուգանքների վերացում, գիշերային աշխատանքների վերացում, պահանջում էին հիմնել երեկոյան կուրսեր հայերի ու ադրբեջանցիների համար, հանքահորերում սահմանել 6 ժամյա բանվորական օր, բանվորների համար ունենալ հիվանդանոց, բաղնիք, սեղանատուն և այլն։

Սկսվեցին բանակցություններ, որ տևեց 3 օր։ Սկզբում գործարանատերերը փորձեցին մերժել բանվորների պահանջը, բայց ի վերջո ստիպված եղան զիջել։ Նրանք համաձայնվեցին բանվորների աշխատավարձը բարձրացնել 10 տոկոսով, աշխատանքի տևողությունը սահմանել ամառը՝ 9 ժամ, ձմեռը՝ 7 ժամ և այլն։ Գործադուլը փաստորեն հաղթանակով վերջացավ, բանվորները մարտի 29-ին վերսկսեցին իրենց աշխատանքը։

Ղափանի բանվորների այս մասսայական գործադուլը անցավ կազմակերպված ձևով։ Գործադուլը ղեկավարում էին տեղի սոցիալ-դեմոկրատական

կազմակերպությունը և Բաքվից Ղափան եկած բոլշևիկ բանվորները, որ ունեին մեծ փորձ ու կոփվածություն։

Ղափանի բանվորության 1907 թվականի մարտի գործադուլը Հայաստանի 1905—1907 թթ. բանվորական շարժման խոշոր ու կարևոր փաստերից մեկն է։ Նա մեծ անհանգստություն պատճառեց ինչպես ցարական կառավարությանը, այնպես էլ Անդրկովկասի բուրժուազիային։

1907 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին նոր գործադուլներ եղան Երևանի ու Ալեքսանդրոպոլի արդյունաբերական ձեռնարկություններում։ Այդ թվականին տեղի ունեցան նաև գյուղացիական ելույթներ Զանգեզուրի, Լոռու, Կոտայքի գյուղերում։

Ցարիզմի պրովոկացիոն փորձերը Կովկասում։ Հավատարիմ իր սոցիալ-դասակարգային էությանը, ցարիզմը ինչպես միշտ, այնպես էլ ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին, աշխատում էր զենքի միջոցով, հրով ու սրով ճնշել, արյան մեջ խեղդել բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն շարժումը։ Իր զինված ուժերի միջոցով նա մասսայական կոտորածներ էր կազմակերպում, ռևոլյուցիոն բանվորների ու գյուղացիների հետ դաժան դատաստան էր տեսնում։ Սակայն այս բոլորի հետ մեկտեղ ցարիզմը ռևոլյուցիայի դեմ կռվելու համար դիմում էր նաև զանազան պրովոկացիոն միջոցների։ Այդ պրովոկացիոն միջոցներից մեկը նա փորձեց իրականացնել Կովկասում։

Ռևոլյուցիոն շարժումները Կովկասում կանխելու ու ջլատելու, Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների միասնական ռևոլյուցիոն ճակատը քայքայելու նպատակով, ցարական կառավարությունը հենվելով հայ և ադրբեջանական կալվածատերերի ու բուրժուազիայի և նրանց նացիոնալիստական պարտիաների վրա, կարողացավ իր ազդեցության տակ զցել որոշ հետամնաց տարրերի և կազմակերպել հայ-ադրբեջանական ընդհարումներ։ Առաջին ընդհարումը բռնկվեց Բաքվում 1905 թվականի փետրվար ամսին։ Բաքվի այդ անցքերը հետագա ամիսների ընթացքում իրենց արձագանքը գտան Երևանում, Շուշում, Գանձակում, Թիֆլիսում և այլն։ Ընդհարումները խլեցին բազմաթիվ զոհեր ու պատճառեցին նյութական մեծ վնասներ։ Այդ արյունոտ դեպքերին ակտիվ կերպով մասնակցում էին ինչպես հայ բուրժուա-նացիոնալիստական դաշնակցությունն պարտիան, այնպես էլ ադրբեջանական խանների բեկերի ներկայացուցիչներ հանդիսացող պանիսլամիստները։ Նրանք ամեն կերպ հրահրում էին ազգամիջյան ընդհարումները, բացատրելով քարոզում էին նացիոնալիզմ և ազգային թշնամություն։

Ցարիզմի և Անդրկովկասի ռեակցիոն ուժերի կողմից կազմակերպված ընդհանրումների դեմ վճռականորեն հանդես եկավ բանվոր դասակարգը բոլշևիկների ղեկավարությամբ։ Ցարական կառավարության պրովոկացիոն քայլերի դեմ իրենց ձայնը բարձրացրին Ռուսաստանի ռևոլյուցիոն պրոլետարիատի առաջնորդ Վ. Ի. Լենինը և նրա զինակիցները, պրոլետարական մեծ դրոշ Մաքսիմ Գորկին և ուրիշները։ Հսկայական աշխատանք ծավալեցին Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպությունները։ Հրապարակվեցին բազմաթիվ կոչեր ու պրոկլամացիաներ, որոնցում բացատրվում էր ցարիզմի ստոր քաղաքականության էությունը և նպատակը։ Այս հարցին նվիրված մի կոչում, որ գրել է Ի. Վ. Ստալինը, ասվում էր, թե «ցարական կառավարությունն իր գահն ամրապնդելու համար «նոր» միջոց է հնարում։ Նա թշնա-

մություն է սերմանում Ռուսաստանի ազգությունների միջև, նա գրգռում է նրանց իրար դեմ, նա աշխատում է պրոլետարիատի ընդհանուր շարժումը ջլատել մանր շարժումների և դրանք միմյանց դեմ ուղղել, նա հրեաների, հայերի ջարդեր է կազմակերպում և այլն։ Եվ այդ բոլորը նրա համար, որպեսզի եղբայրասպան պատերազմով անջատի միմյանցից Ռուսաստանի ազգություններին և, ուժասպառ անելով նրանց, առանց դժվարության հաղթի նրանցից յուրաքանչյուրին առանձին»[1]։

Ռևոլյուցիոն բանվորության, բոլշևիկյան կազմակերպությունների եռանդուն աշխատանքի և միջամտության շնորհիվ ազգամիջյան ընդհարումները Կովկասում լայն ծավալ չստացան և շուտով կանխվեցին։ Ցարական կառավարությունը և հայ ու աղրբեջանական նացիոնալիստները ի վիճակի չեղան խախտելու Կովկասի ժողովուրդների եղբայրական բարեկամությունը։

Բոլշևիկյան կազմակերպությունները Հայաստանում 1905—1907 թթ.։ Ինչպես ամբողջ Ռուսաստանում ու Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում բանվորների և գյուղացիների ռևոլյուցիոն շարժումները կազմակերպում ու գլխավորում էին բոլշևիկյան կազմակերպությունները։ 1905—1907 թթ. Հայաստանի արդյունաբերական կենտրոններում և գյուղերում հիմնվել և հաջողությամբ աշխատում էին բոլշևիկյան բազմաթիվ խմբակներ և կազմակերպություններ, որոնցից հատկապես աչքի ընկան Ալավերդու, Սանահնի, Ջալալօղլու (այժմ Ստեփանավան), Երևանի և Ալեքսանդրոպոլի կազմակերպությունները։

Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպությունները սերտորեն կապված էին Կովկասյան Միութենական կոմիտեի հետ և ղեկավարվում էին նրա ցուցումներով։ Նրանք կազմակերպում էին բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն պայքարը, մղում էին մարքսիզմի բանավոր և տպագիր պրոպագանդան, բացատրում էին մասսաներին քաղաքական իրադրությունը, ղեկավարում էին գործադուլները, բողոքի ցույցերը և այլն։ Առանձնապես եռանդուն աշխատանք ծավալեցին բոլշևիկյան խմբակները Լոռում, որտեղ նրանց թիվը 1905—1907 թթ. հասնում էր 30-ի։ Մեծ աշխատանք տարավ նաև Երևանի բոլշևիկյան կազմակերպությունը, որը 1906 թվականին Ստեփան Շահումյանին ՌՍԴԲՊ IV (միավորիչ) համագումարի դելեգատ ընտրեց։ Մի տարի անց՝ 1907 թվականին Ստ. Շահումյանը V համագումարի դելեգատ ընտրվեց Լոռու բոլշևիկյան կազմակերպության կողմից։

Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները անհաշտ պայքար մղեցին բոլոր կոնտրռևոլյուցիոն պարտիաների ու կազմակերպությունների դեմ։ Առանձնապես սուր պայքար մղվեց հայ բուրժուա-նացիոնալիստական դաշնակցություն պարտիայի դեմ։

Դաշնակները բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն շարժման կատաղի թշնամիներն էին, նրանք փորձում էին մթագնել մասսաների գիտակցությունը և ծառայեցնել նրանց բուրժուազիայի շահերին։ Դաշնակցություն պարտիայի մասին Ստ. Շահումյանը 1906 թվականին գրում էր, որ նա բոլոր ուժերով կռվել է հայ պրոլետարիատի ու հայ ռևոլյուցիոն ինտելիգենցիայի բոլոր փորձերի դեմ՝ պայքարելու ընդդեմ բուրժուազիայի և ընդդեմ կառավարության... Այդ պարտիան սիստեմատիկ կերպով խլացնում էր բողոքի ձայնը հայ պրոլե-

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 1, էջ 92—93։

տարիատի բերանում, ջանում էր բնի մեջ խեղդել հայ բուրժուազիայի դեմ ուղղված ամեն մի պայքար, ամեն մի ռևոլյուցիոն շարժում Կովկասում... Կովկասի հայ բուրժուազիան բնականորեն «դաշնակցություն» պարտիայի մեջ տեսնում էր իր հարազատ զավակին, իր լավագույն դաշնակցին, իր շահերի լավագույն արտահայտչին ու պաշտպանին, ուստի և բոլոր ուժերով, նյութապես և բարոյապես օգնում էր այդ պարտիային»:

Դաշնակները Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության երդվյալ թշնամիներն էին։ Զգտնելով քայքայել պրոլետարական համերաշխության գաղափարներով միաձուլված Անդրկովկասի բանվորության միասնական ընտանիքը, նրանք փորձում էին ստեղծել ազգային հատկանիշներով առանձնացված դաշնակցական արհեստակցական միություններ։ Այդ նույն նպատակով նրանք 1906 թվականին, կաթողիկոսի հետ համատեղ, Էջմիածնում գումարեցին այսպես կոչված «Ազգային սահմանադիր ժողով»։

Ստ. Շահումյանն ու Ս. Սպանդարյանն իրենց բազմաթիվ ելույթներում և հոդվածներում մերկացնում էին դաշնակների «Ազգային սահմանադիր ժողով» գումարելու նպատակները, կոչ էին անում հայ աշխատավոր մասսաներին՝ բոյկոտի ենթարկել այդ ժողովի համար կազմակերպված ընտրությունները և միանալ ռուս պրոլետարիատի ու Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների հետ ինքնակալության դեմ համատեղ պայքարելու համար։

«...Ազգային սահմանադիր ժողովը,— գրում էր Ս. Սպանդարյանը,— ջլատում է ռևոլյուցիոն ուժերը, բաժան-բաժան անում նրան, դառնալով գործիք ռեակցիայի ձեռքին...»։

«Սահմանադիր ժողովի իսկական աստառը բուրժուա-նացիոնալիստական ձգտումներն են։ Հայկական սահմանադիր ժողովը ուրիշ բան չէ, քան դաշնակցության բուրժուական ձգտումների մարմնացումը»։

Դիմելով հայ բանվորներին և գյուղացիներին՝ Սպանդարյանը կոչ էր անում նրանց Ռուսաստանի պրոլետարիատի հետ միատեղ անխնա պայքար մղել ցարական բռնակալության դեմ։

Հայաստանի բոլշևիկյան կազմակերպություններն անխնա պայքար ծավալեցին նաև հնչակյանների ազգայնական պարտիայի դեմ, որը ինչպես իր պրակտիկ գործունեությամբ, այնպես էլ դաղափարական պրոպագանդայով հանդես եկավ հայ բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն շարժման դեմ։

Ռևոլյուցիոն շարժման ծավալմանը Հայաստանում ամեն կերպ խանգարում էր նաև մանր-բուրժուական նացիոնալիստական, այսպես, կոչված, «սպեցիֆիկների» կազմակերպությունը, որն իրեն անվանում էր «սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպություն»։ Այդ կազմակերպությունը, որ հիմնվել էր 1903 թվականին, պայքարում էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների բարեկամության դեմ, ամեն կերպ աշխատում էր մեկուսացնել հայ աշխատավորությանը և թույլ չտալ, որպեսզի նա ընդգրկվի համառուսական ռևոլյուցիոն շարժման մեջ։ Քարոզելով այն ռեակցիոն, նացիոնալիստական գաղափարը, թե բանվորներին պետք է կազմակերպել ըստ ազգային հատկանիշի, սպեցիֆիկները փորձում էին պառակտում մտցնել բանվորական շարժման մեջ, աշխատում էին ջլատել ու քայքայել բանվորական ռևոլյուցիոն պայքարի միասնությունը։ Նրանք ամեն կերպ փորձում էին կասեցնել հայ բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն շարժումը։

Վ. Ի. Լենինը 1905 թ. բնութագրեց «սպեցիֆիկներին» որպես «կազմալուծիչների խումբ», որպես «բունդի կրնատուրա»։ Հայաստանի բոլշևիկները քողազերծ արին մարքսիզմի անունից խոսող նացիոնալիստ սպեցիֆիկներին։ Հայաստանի ու Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները եռանդուն պայքար ծավալեցին նաև մենշևիկների, էսերների, ինչպես նաև կադետների դեմ։

1905—1907 թթ. նշանակալի զարգացում ապրեց հայ բոլշևիկյան մամուլը։ Այդ տարիներին հրապարակվեցին մի շարք թերթեր, որոնք խոշոր դեր խաղացին հայ աշխատավորական մասսաների ռևոլյուցիոն դաստիարակության գործում։ Զգալի աշխատանք ծավալեցին հատկապես «Կայծ» և «Նոր խոսք» թերթերը, որոնք լույս տեսան 1906 թվականին Թիֆլիսում Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի խմբագրությամբ։ Բանվորների մեջ մեծ ազդեցություն ուներ նաև «Կոչ-Դեվետ» թերթը, որ հրատարակվում էր Բաքվում նույն թվականին հայերեն ու ադրբեջաներեն լեզուներով։ Բոլշևիկյան այդ թերթերը կոչ էին անում մասսաներին՝ պայքարելու ցարական ինքնակալության, տիրող կարգերի դեմ, լայնորեն պրոպագանդում էին մարքսիզմ-լենինիզմի գաղափարները, օժանդակում էին բանվորական և գյուղացիական մասսաների ռևոլյուցիոն շարժման խորացմանը ու ծավալմանը։

1905—1907 թթ. ռևոլյուցիայի նշանակությունը։ Ռուսական առաջին ռևոլյուցիան պարտվեց։ Սակայն նա հսկայական նշանակություն ունեցավ ռևոլյուցիոն շարժման հետագա զարգացման գործում։ Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների համար 1905—1907 թթ. ռևոլյուցիան քաղաքական պայքարի մի խոշոր դպրոց հանդիսացավ։

«Ընդամենը մի երեք տարվա ընթացքում (1905 — 1907) բանվոր դասակարգը և գյուղացիությունը քաղաքական դաստիարակության այնպիսի հարուստ դպրոց են անցնում, որպիսին չէին կարող անցնել սովորական խաղաղ զարգացման երեսուն տարում։ Ռևոլյուցիայի մի քանի տարիները պարզ դարձրին այն, ինչ որ չէր կարելի պարզ դարձնել տասնյակ տարիների ընթացքում զարգացման խաղաղ պայմաններում»[1]։

Զինված ռևոլյուցիայի հարուստ փորձով Ռուսաստանի պրոլետարիատը և աշխատավոր գյուղացիությունը հետագայում՝ 1917 թվականին նոր, հաղթական հարձակման անցան ցարական ինքնակալության և կապիտալիզմի դեմ։ 1905 թվականի ռևոլյուցիան Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի գլխավոր փորձն էր։ Վ. Ի. Լենինը ասում էր. «Առանց 1905 թվականի «գլխավոր փորձի» 1917 թվականի Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթությունն անհնարին կլիներ»[2]։

Ռուսական առաջին ռևոլյուցիան ունեցավ միջազգային խոշոր նշանակություն։ Նա նոր էրա, քաղաքական խորը ցնցումների և ռևոլյուցիոն փոթորիկների էրա բացեց համաշխարհային պատմության մեջ։ 1905—1907 թթ. ռևոլյուցիան Եվրոպայի բանվորական շարժման և Ասիայի ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման վերելքի սկիզբը դրեց։ Ռևոլյուցիայի փորձը օգտագործեցին ամբողջ աշխարհի ռևոլյուցիոն բանվորներն ու գյուղացիները։

---

[1] ՀԱՄԿ(բ)Պ պատմություն, համառոտ դասընթաց, էջ 126։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 31, էջ 13։

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

(1908 — 1912 թթ.)

Ստոլիպինյան ռեակցիան։— 1907 թվականի հունիսին ցարական կառավարությունն ընդհանուր և վճռական հարձակում ձեռնարկեց ժողովրդական լայն մասսաների վրա։ Ցարի հրամանագրով հունիսի 3-ին ցրվեց II Պետական դուման, որը հրավիրվել էր 1907 թվականի փետրվար ամսին։ 65 սոցիալ-դեմոկրատ դեպուտատներ դատապարտվեցին տաժանակիր աշխատանքի և աքսոր ուղարկվեցին։ Ճնշելով ռևոլյուցիան, ցարական կառավարությունը դիմեց մասսայական հալածանքների ու պատիժների։ Սկսվեց ռեակցիայի շրջանը, որը տևեց մինչև 1912 թվականը։

Ռեակցիայի տարիներին ցարական կառավարությունը փակում էր պրոլետարիատի քաղաքական և տնտեսական կազմակերպությունները, խլում էր նրանցից այն բոլոր իրավունքները, որ նրանք նվաճել էին ռևոլյուցիայի տարիներին։ Նա դաժան դատաստան էր տեսնում ռևոլյուցիոն բանվորների, գյուղացիների և բոլշևիկների հետ։ Տասնյակ հազարավոր մարդիկ բանտ էին նետվում և աքսորվում երկրի հեռավոր ու խուլ անկյուններ։ Ամենուրեք մոլեգնում էր սևհարյուրյակային տեռորը։ Գյուղերում շրջում էին պատժիչ արշավախմբերը, օրեցօր ուժեղանում էին ազգային ճնշումները և հալածանքները։ Ըստ պաշտոնական տվյալների, միայն 1907—1909 թվականներին մահապատժի ենթարկվեցին ավելի քան 5 000 մարդ և քաղաքական մեղադրանքով աքսոր ուղարկվեցին 28 000 հոգուց ավելի։

Վ. Ի. Լենինը ռեակցիայի տարիները բնութագրել է որպես «սև Դումայի, բռնության ու իրավազրկության խրախճանքի, բանվորների վրա կապիտալիստների գրոհի, բանվորների ձեռք բերած նվաճումների ետ խլման» տարիներ [1]։

Ռեակցիայի տարիներին ցարական կառավարության գլուխն էր կանգնած ժողովրդի դահիճ Ստոլիպինը, որի անունով էլ այդ ժամանակաշրջանը անվանվում է ստոլիպինյան ռեակցիայի շրջան։

Ռեակցիան մոլեգնում էր նաև Հայաստանում։ Ռևոլյուցիայի տարիներին Ալավերդում, Ալեքսանդրոպոլում, Երևանում և Հայաստանի մյուս կենտրոններում ստեղծված գրեթե բոլոր արհեստակցական, կուլտուր-լուսավորական կազմակերպությունները և միությունները փակվեցին ու լիկվիդացիայի ենթարկվեցին։ Խիստ ուժեղացան դաժան ռեպրեսիաները ռևոլյուցիոն բանվորների դեմ։ Ալավերդու, Ղափանի և Երկաթուղու բանվորներից հարյուրավոր մարդիկ բանտ նետվեցին և աքսորավայրեր ուղարկվեցին։

Բանվորների տնտեսական ու իրավական դրությունն ավելի ծանրացավ։ Նրանց տաժանակիր աշխատանքի ու ծայրահեղ կարիքի մասին Ալավերդու բանվորներից մեկը «Բակինսկի ռաբոչի» բոլշևիկյան թերթում տպագրած իր նամակներից մեկում ասում էր. «Բանվորական օրը մեզ մոտ տևում է 12—14 ժամ, ընդ որում ամեն մեկս շաբաթը մեկ անգամ աշխատում ենք 18 ժամ։ Ամիսներ շարունակ տաք կերակուր չենք ուտում։ Աշխատանքը ծանր, իսկապես տաժանակիր է... Եթե մեզնից մեկն ու մեկը համարձակվում է ձայնը բարձրացնել կամ գանգատի գնալ գլխավոր պետի մոտ, ապա նրան հենց այնտեղ հաճախ ծեծում են, արյունլվիկ դարձնում և աշխատանքից հեռացնում։

[1] Վ. Ի. ԼԵՆԻՆ. Երկեր, հատոր 16, էջ 463։

Դրա համար ստիպված ենք ամեն ինչ տանել, որովհետև այն վախը, որ կարող ենք դուրս նետվել աշխատանքից և զոհ գնալ սովամահության, սարսափ է ազդում ամեն մեկիս»։

Ծանր հալածանքներ սկսվեցին նաև գյուղացիության դեմ։ Ռևոլյուցիոն գյուղացիների հետ դատաստան տեսնելու համար Հայաստանի գյուղերն ուղարկվեցին պատժիչ զորախմբեր, որոնք բանտարկում և ամենարարբարոս ձևով ծեծում էին գյուղացիներին, ավերում ու թալանում էին նրանց տները, կայքը և գույքը, կազմակերպում էին էկզեկուցիա և այլն։ Առանձնապես շատ բարբարոսություն կատարվեց Լոռու և Զանգեզուրի գյուղերում, որտեղ ռևոլյուցիայի տարիներին գյուղացիական շարժումը համեմատաբար ավելի լայն ծավալ ստացավ։ Ցարական ոստիկանները փակեցին գյուղացիական միությունները, բավարարեցին կալվածատերերի պահանջները։

Ռեակցիայի տարիներին ցարական կառավարությունն ավելի ուժեղացրեց ազգային ճնշման իր քաղաքականությունը ինչպես ամբողջ կայսրության մեջ, այնպես էլ Կովկասում։ Նա նոր գրոհներ սկսեց տեղական ժողովուրդների ազգային կուլտուրայի դեմ, ուժեղացրեց հալածանքները ազգային դեմոկրատական, առաջավոր ինտելիգենցիայի նկատմամբ։ Հենվելով հայ բուրժուազիայի, վրաց ազնվականների և ադրբեջանական բեկերի վրա, ցարական սատրապները ամեն կերպ աշխատում էին ազգամիջյան թշնամություն առաջացնել Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների մեջ։ Նրանք փակեցին հայկական դպրոցների, թերթերի ու հրատարակությունների մի մասը, ձերբակալեցին ու աքսոր ուղարկեցին դեմոկրատական-ազատագրական գաղափարներով տոգորված ինտելիգենցիայի շատ ներկայացուցիչների։ Մեծապետական շովինիզմի քաղաքականությունը իրականացնող ցարական չինովնիկներն ամեն կերպ փորձում էին թույլ չտալ որպեսզի զարգանա հայկական կուլտուրան, հայոց լեզուն և գրականությունը։

Ցարիզմի ազգային ճնշման քաղաքականությունը պարզորոշ երևան եկավ նաև III Պետական դումայի ընտրության ժամանակ։ 1907 թվականի աշնանը՝ նոր ընտրական օրենքի համաձայն, մի քանի անգամ կրճատվեց Պետական դումայում ազգային փոքրամասնությունների համար հատկացված տեղերի առանց այն էլ աննշան թիվը։ Այսպես, օրինակ, II դումայի համեմատությամբ III դումայի համար Անդրկովկասից ընտրված դեպուտատների թիվը 14 հոգով պակասեց։ II դումայում Երևանի նահանգը ուներ 2 տեղ, իսկ III դումայի համար՝ 2 տեղ ունեին Երևանի, Բաքվի և Գանձակի նահանգները միասին վերցրած։

Անդրկովկասի III Պետական դումայի մեջ մտան կալվածատերերի ու կապիտալիստների ներկայացուցիչները, որոնց թվում և հայ բուրժուազիայի ներկայացուցիչ Սաղաթելյանը։

Անկումայնություն. լիկվիդատորներ և բուրժուական նացիոնալիստներ։ Ռևոլյուցիայի պարտությունը քայքայում և անկումայնություն առաջացրեց ռևոլյուցիայի ժամանակավոր ուղեկիցների, առանձնապես ինտելիգենցիայի շարքերում։ «Այն ուղեկիցները, որոնք ռևոլյուցիայի շարքերն էին մտել բուրժուական միջավայրից ռևոլյուցիայի բուռն վերելքի շրջանում, պարտիայից հեռացան ռեակցիայի օրերին։ Նրանց մի մասը գնաց ռևոլյուցիայի բացահայտ թշնամիների բանակը, մյուս մասը բուն գրեց բանվոր դասակարգի անվթար մնացած լեգալ ընկերությունների մեջ և աշխատում էր շեղել պրոլետարիատին

ռևոլյուցիոն ուղուց, աշխատում էր վարկաբեկել պրոլետարիատի ռևոլյուցիոն պարտիան։ Ուղեկիցները՝ հեռանալով ռևոլյուցիայից, աշխատում էին հարմարվել ռեակցիային, համակերպվել ցարիզմի հետ»[1]։

Անկումայնությամբ վարակվեց նաև պարտիական ինտելիգենցիայի անկայուն մասը։ Առաջ եկան զանազան «թեորիաներ», որոնք ռևիզիայի էին ենթարկում մարքսիզմի փիլիսոփայության տեսական հիմունքները։ Միաժամանակ բարձրացավ մեծապետական նացիոնալիզմի և տեղական շովինիզմի նոր ալիք։

Դավաճանելով բանվոր դասակարգին և մերձենալով հակառևոլյուցիոն կադետների հետ, մենշևիկները պահանջում էին լիկվիդացնել պրոլետարիատի անլեգալ ռևոլյուցիոն պարտիան։ Այդ տիպի մենշևիկները կոչվեցին լիկվիդատորներ։ Պարտիայի այդպիսի բացահայտ հակառակորդների հետ միատնել իրենց ձայնը բարձրացրին նրա թաքնված թշնամիները, այսպես կոչված օտզովիստները, որոնք պահանջում էին Պետական դումայից ետ կանչել բանվորական դեպուտատներին և դադարեցնել ամեն մի աշխատանք լեգալ կազմակերպությունների մեջ։

Անկումայնությունը, հոռետեսական, կոնտրռևոլյուցիոն տրամադրությունները թափանցեցին նաև հայ ինտելիգենցիայի մեջ։ Ուժեղացան ռեակցիոն քաղքենիական անհատապաշտությունը (ինդիվիդուալիզմը) ու անկումայնությունը հրապարակախոսության, գրականության ու արվեստի մեջ։ Հայ հասարակական կյանքում ևս իրենց անդրադարձումը գտան լիկվիդատորությունն ու մարքսիզմը ռևիզիայի ենթարկելու փորձերը։

Հայ բուրժուական ինտելիգենցիայի մի խմբակ դաշնակ Ե. Ֆրանգյանի գլխավորությամբ՝ 1910 թվականին հրատարակեց «Միտք» խորագրով մի ժողովածու, որը հարձակումներ էր գործում ռևոլյուցիոն մարքսիզմի փիլիսոփայական հիմքերի վրա։ Պաշտպանության տակ առնելով էմպիրիոկրիտիկներին ու փիլիսոփայության մեջ եղած այլ ռևիզիոնիստներին, ժողովածուի հեղինակները փորձում էին «հերքել» մարքսիստական պարտիայի տեսական հիմքերը։

Ռեակցիոն իդեալիստներ Ֆրանգյանը, Կուզեյանը և ուրիշները ճիգեր էին թափում «հերքելու» մատերիալիզմը, նրանք ամեն կերպ փառաբանում էին մարքսիզմի երդվյալ թշնամի Մախի սուբյեկտիվ-իդեալիստական փիլիսոփայությունը, որին ջախջախիչ հարվածներ տվեց Վ. Ի. Լենինը 1908 թվականին գրած «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» իր հռչակավոր աշխատության մեջ։

Հայկական բուրժուա-նացիոնալիստական ու կղերական մամուլը («Մշակ», «Հորիզոն», «Հովիտ») արշավանք սկսեց ռևոլյուցիոն և դեմոկրատական ուժերի դեմ, ծավալեց շովինիզմի պրոպագանդա՝ ձգտելով հետ պահել մասսաներին ռևոլյուցիոն շարժումից և քաշել նրանց եկեղեցական սնամեջ վեճերի մեջ։ Այդ մամուլի մասին Սուրեն Սպանդարյանը գրում էր, թե նա «զբաղված է եկեղեցական հարցերով, վանքերի ինտրիգներով, իսկ մնացած ողջ «բազմազան ու բազմակողմանի կյանքը հորդահոս անցնում է նրա կողքից, թույլ է անդրադառնում կամ բոլորովին չի անդրադառնում նրա մեջ»։

Ռեակցիայի տարիներին առանձնապես սանձարձակ դարձավ դաշնակների կոնտրռևոլյուցիոն բուրժուա-նացիոնալիստական պարտիան։ Նա բացահայտո-

[1] ՀԱՄԿ(բ) պարտիայի պատմություն, համառոտ դասընթաց, էջ 135։

րեն դարձավ ցարիզմի ագենտուրան և հայտնապես աշխատակցեց ոստիկանությանը՝ ընդդեմ ռևոլյուցիոն բանվորների ու գյուղացիների։ Բնորոշ է, որ 1906 թվականին ցարական կառավարության պրեմյեր-մինիստր Ստոլիպինը հայտնում էր, որ դաշնակցությունը «հանձն է առել ոստիկանական ֆունկցիա»։

Աշխուժացավ նաև սպեցիֆիկների նացիոնալիստական, քայքայիչ գործունեությունը։ Բուրժուական թերթերի էջերից նրանք շարունակեցին իրենց նացիոնալիստական գաղափարների պրոպագանդան, աշխատեցին ռևիզիայի ենթարկել մարքսիզմը։ Սպեցիֆիկներն ամեն կերպ ջանում էին խախտել բանվորների ու գյուղացիների հավատը դեպի ռևոլյուցիան։

Հայաստանի բոլշևիկները ռեակցիայի տարիներին։ Ռևոլյուցիայի պարտությունից հետո, բոլշևիկների պարտիան՝ կատաղի հալածանքների ենթարկվելով ցարական կառավարության կողմից, ընդհատակ անցավ։ Նա նահանջեց՝ պահպանելով մարտական լիակատար կարգը։ Ռեակցիայի մռայլ տարիներին միայն բոլշևիկները հավատարիմ մնացին բանվոր դասակարգի ազատագրության գործին։ Բոլշևիկների պարտիան Վ. Ի. Լենինի գլխավորությամբ՝ երբեք չշեղվեց ռևոլյուցիայի համար մղվող պայքարից։ Հաստատ հավատացած լինելով, որ ցարիզմը միայն ժամանակավոր հաղթանակ է տարել և որ մոտ ապագայում ռևոլյուցիոն շարժման նոր վերելք կսկսվի, բոլշևիկներն ամուր հիմքերի վրա էին դնում անլեգալ պարտիական կազմակերպությունները, միաժամանակ օգտագործելով բոլոր լեգալ հնարավորություններն իրենց կապերը մասսաների հետ ամրապնդելու համար։ Պարտիան մասսաներին նոր ռևոլյուցիոն վերելքի էր պատրաստում։

Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ՝ բոլշևիկները շարունակում էին իրենց անհաշտ պայքարը մենշևիկ-լիկվիդատորների, օտզովիստների, տրոցկիստների, ամեն տեսակի օպորտունիստների, ռևիզիոնիստների և բուրժուական նացիոնալիստների դեմ։ 1912 թ. հունվարին Պրագայում կայացավ ՌՍԴԲՊ-ի VI համառուսաստանյան կոնֆերենցիան, որը դուրս նետեց պարտիայից մենշևիկներին և վերջ դրեց բոլշևիկների ու մենշևիկների ձևական միավորմանը ՌՍԴԲՊ-ի մեջ։

Ռեակցիայի տարիներին Անդրկովկասի բոլշևիկները հսկայական աշխատանք կատարեցին անլեգալ պարտիական կազմակերպությունները պահպանելու և ամրապնդելու, ռևոլյուցիայի նոր վերելքի համար մասսաներին նախապատրաստելու ուղղությամբ։ Այս ժամանակաշրջանում ռևոլյուցիոն լայն գործունեություն ծավալեցին այնպիսի փորձված բոլշևիկ-լենինյաններ, ինչպես Ի. Վ. Ստալինը, Ստ. Շահումյանը, Ֆիոլետովը, Վանդեկը, Օրջոնիկիձեն, Ջափարիձեն, Ցխակայան, Սպանդարյանը, Ազիզբեկովը, Խանլարը և ուրիշները։ Բաքվի բոլշևիկյան կազմակերպությունը հաջողությամբ կազմակերպեց Բաքվի պրոլետարիատի հերոսական պայքարը։ Շնորհիվ բոլշևիկների աշխատանքի, Բաքվի պրոլետարիատը ռեակցիայի սև տարիներին գտնվում էր համառուսական ռևոլյուցիոն շարժման առաջին շարքերում։ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները մերկացնում էին մենշևիկ-լիկվիդատորներին, օտզովիստներին, բուրժուա-նացիոնալիստներին, ամեն տեսակի օպորտունիստներին և կոնտրռևոլյուցիոներներին։ Լենինի ցուցումներով անդրկովկասյան բոլշևիկները, մասնավորապես Ս. Օրջոնիկիձեն ու Ս. Սպանդարյանը, եռանդուն աշխատանք ծավալեցին Պրագայի կոնֆերանսը նախապատրաստելու համար։

Ռեակցիայի տարիներին ծանր հարվածներ ստացան նաև Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները։ Դրանց մի մասը դադարեց գոյություն ունենալուց, մյուսը անցավ խոր ընդհատակ։ Բոլշևիկյան թերթերը փակվեցին։ Բազմաթիվ կոմունիստներ կալանքի տակ առնվեցին և աքսոր ուղարկվեցին։ Սակայն, չնայած այդ ամենին, ռևոլյուցիոն աշխատանքը չդադարեց նաև Հայաստանում։ Բոլշևիկյան խմբակներն ու կազմակերպությունները վերակազմելով իրենց աշխատանքը, պատրաստում էին բանվորներին ու աշխատավոր գյուղացիներին ռևոլյուցիոն շարժման նոր վերելքի համար։ Ռեակցիայի տարիներին ընդհատակյա բոլշևիկյան խմբակները գործում էին Լոռում (Հաղպատ, Ալավերդի, Սանահին և այլն), Զանգեզուրում (Ղափան), Երևանում, Նոր Բայազետում, Իգդիրում, Ալեքսանդրոպոլում և այլ տեղերում։ Նրանք, կապ պահպանելով Բաքվի և Թիֆլիսի կոմունիստական կազմակերպությունների հետ և ստանալով նրանցից անհրաժեշտ օգնություն, տանում էին պրոպագանդիստական և կազմակերպչական աշխատանք բանվորների ու գյուղացիների մեջ։ Հայաստանի բոլշևիկներին հատկապես խոշոր օգնություն ցույց տվեց Բաքվի բոլշևիկյան կազմակերպությունը։

1911 թ. Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպությունը լույս ընծայեց կոչեր ու թռուցիկներ ռուսերեն, հայերեն և վրացերեն լեզուներով, որոնք լայնորեն տարածվեցին ամբողջ Անդրկովկասում։ Այդ թռուցիկները կոչ էին անում բանվորներին ու աշխատավոր գյուղացիներին՝ համախմբվել բոլշևիկների շուրջը, վճռականորեն պայքար մղել լիկվիդատորների դեմ, պատրաստվել նոր գրոհի ընդդեմ ինքնակալության։

1911 թ. աշնանը Բաքվում Ստ. Շահումյանի նախաձեռնությամբ լույս տեսավ «Նոր խոսք» երկշաբաթաթերթը, որը ռևոլյուցիոն գաղափարների տարածման գործում նշանակալից դեր կատարեց հայ աշխատավորության մեջ։

Ռեակցիայի շրջանում Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը և նրանց հետ միասին Մելիք Մելիքյանը, Հակոբ Հակոբյանը, Ասքանազ Մռավյանը և ուրիշները, անհաշտ կռիվ էին մղում մենշևիկ-լիկվիդատորների, կադետների և ամեն տեսակ բուրժուական նացիոնալիստների դեմ։

1908—1909 թթ. Շահումյանն ու Սպանդարյանը բոլշևիկյան ժուռնալներում ու օրաթերթերում հանդես եկան մի շարք հոդվածներով, որոնք ուղղված էին կադետների, մենշևիկների, դաշնակների, հնչակյանների ու սպեցիֆիկների դեմ։

1910 թ. Սպանդարյանը հրապարակեց «Ուրվագծեր հայկական կյանքից» ընդհանուր վերնագրի տակ իր հոդվածների շարքը, որոնց մեջ մերկացնում էր հայ եկեղեցականների, լիբերալների, դաշնակների ու սպեցիֆիկների կոնտրռևոլյուցիոն բուրժուա-նացիոնալիստական իդեոլոգիան ու պրակտիկան։ 1911 թ. «Նոր խոսք» օրաթերթում լույս տեսավ Ստ. Շահումյանի «Տիեզերական թութակը» հոդվածը, որը քողազերծ էր անում դաշնակցական «թեորետիկ» Մ. Վարանդյանին։ Այդ հոդվածում Շահումյանը երևան է հանում դաշնակցական գաղափարախոսության ամբողջ ռեակցիոն էությունը, մասնավորապես նշելով այն, որ դաշնակ «թեորետիկները», պայքարելով մարքսիզմի դեմ, նմանվում են թութակների, որովհետև նրանք բոլոր հանգ ու ձևերով կրկնում են բուրժուական թերթերի և եվրոպական սրճարանների մշտական հաճախորդների հերյուրանքները։

1911 թ. մայիս ամսին Բաքվի բանտում մահացավ Բ. Կնունյանը, իսկ սեպտեմբերին կալանավորվեց և Աստրախան ուղարկվեց Ստ. Շահումյանը։ 1912 թ. մարտին ցարական դատարանը ցմահ աքսորի դատապարտեց Ս. Սպանդարյանին, որը նույն թվականի հունվարին Պրագայի կոնֆերանսում ընտրվել էր պարտիայի Կենտրոնական Կոմիտեի անդամ։

1912 թ. հողային օրենքը։ Ռեակցիայի տարիներին ցարական կառավարությունն ընդունեց ու կենսագործեց մի շարք հողային օրենքներ, որոնց նպատակն էր ապահովել կապիտալիզմի հետագա զարգացումը գյուղատնտեսության մեջ և ստեղծել, հանձինս կուլակության, ցարիզմի համար հաստատուն նեցուկ։ Այդ քաղաքականությունը, որ սովորաբար անվանվում է ստոլիպինյան ագրարային քաղաքականություն, որոշ ուշացումով կենսագործվեց նաև Անդրկովկասում։

1912 թ. դեկտեմբերի 20-ին ցարական կառավարությունը հրատարակեց հողային նոր օրենք, որը նախատեսում էր Թիֆլիսի, Քութայիսի, Գանձակի, Երևանի և Բաքվի նահանգների, այսպես կոչված, ժամանակավոր պարտավորյալ և կախյալ գյուղացիության դրության մեջ որոշ փոփոխություն մտցնել։ Այս կատեգորիայի գյուղացիները 1860—1870 թթ. ագրարային ռեֆորմից ոչինչ չէին ստացել, չունեին հող, շարունակում էին բահրա վճարել, կոռ քաշել և ֆեոդալական-ճորտատիրական զանազան պարտավորություններ կատարել կալվածատերերի համար։ Գյուղացին, որպեսզի ազատվեր այդ կիսաճորտական վիճակից և հողաբաժին ստանար, պետք է կալվածատիրոջը փող վճարեր, կամ, ինչպես ասում էին, հետ գներ հողը, բայց նա այդ չէր կարող անել, որովհետև հողի հետ գնման վճարը խոշոր գումար էր կազմում։ Սրա հետևանքով Անդրկովկասի գյուղացիության մի մասը տասնյակ տարիներ մնաց «ժամանակավոր պարտավորյալ և կախյալ» վիճակում։

1912 թվականի դեկտեմբերի 20-ի օրենքով պետությունը պետք է հողի հետ գնման դիմաց կալվածատերերին վճարեր մոտ 24 միլիոն ռուբլի, պայմանով, որ գյուղացիները 26 կամ ավելի տարիների ընթացքում այդ գումարը, որոշ տոկոսներով, հետ վերադարձնեին պետությանը։ Պետության այս միջամտության շնորհիվ ժամանակավոր կախյալ և պարտավորյալ գյուղացին կարող էր հողակտոր ստանալ և իրավաբանորեն ազատվել կալվածատիրոջ համար ֆեոդալական պարտավորություններ կատարելուց։ Այս միջոցառումով ցարական կառավարությունը նպատակ ուներ նոր նախադրյալներ ստեղծել գյուղում կապիտալիզմի զարգացման համար։ Նա 1912 թվականին Անդրկովկասում անում էր այն, ինչ որ արել էր տասնյակ տարիներ առաջ Ռուսաստանում։

1912 թվականի դեկտեմբերի 20-ի հողային օրենքը նպաստեց կապիտալիզմի զարգացմանը գյուղատնտեսության մեջ, որոշ չափով քայքայեց ճորտական հարաբերություններն Անդրկովկասում։ Սակայն այդ օրենքը կենսագործվում էր խիստ մեծ ձգձգումներով։ Չորս տարվա ընթացքում, այսինքն 1913—1916 թթ. ժամանակավոր կախյալ գյուղացիների միայն 15 տոկոսը ազատվեց ճորտական հարաբերություններից։ Նշված օրենքը չունեցավ առանձին մեծ արդյունքներ ու հետևանքներ։ Ճորտատիրական և ֆեոդալական հարաբերություններն Անդրկովկասում պահպանվեցին մինչև սովետական կարգերի հաստատվելը։

ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՇԱՐԺՄԱՆ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԻ ՏԱՐԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1912—1914 ԹԹ.)

Հայաստանի անտեսական կյանքը։ 1908—1909 թթ. Ռուսաստանի արդյունաբերությունն ապրեց ծանր դեպրեսիա։ Սակայն 1910 թվականից սկսած արդյունաբերության մեջ տեղի ունեցավ որոշ աշխուժացում, որը արտադրության զգալի աճ առաջացրեց արդյունաբերության հիմնական ճյուղերում։ Առանձնապես արագ էին աճում մետալուրգիան, մեքենաշինությունը և վառելանյութերի արդյունաբերությունը։ Արագացած տեմպերով էր ընթանում արտադրության համակենտրոնացման պրոցեսը, ավելի էր ուժեղանում մենաշնորհների, բանկերի ու ֆինանսական կապիտալի իշխանությունը։

Արդյունաբերության վերելքը տեղի է ունենում նաև Հայաստանում։ 1912—1913 թթ. աճում է արդյունաբերական արտադրության չափը, առանձնապես պղնձարդյունաբերության և սպիրտ-կոնյակային արտադրության ճյուղերում։ Այսպես, օրինակ, Հայաստանում պղինձ ստացվել է 1911 թ. 260 000, իսկ 1913 թ. 337 000 փութ։ Բնորոշ է, որ 1913 թվականին Ռուսաստանում արտադրված ամբողջ պղնձի 30 տոկոսը ստացվել էր Հայաստանից և Վրաստանից։ 1912 թվականին Երևանի նահանգում սպիրտ-կոնյակի տարեկան արտադրանքի դրամական արժեքը կազմել է 1 337 000 ռուբլի, իսկ բամբակազտիչ ձեռնարկությունների արտադրանքի արժեքը՝ 446 000 ռուբլի։

Կապիտալիստական հարաբերությունները գյուղում ավելի զարգացան, ուժեղացավ գյուղացիության շերտավորումն ու պաուպերիզացիան։ 1913 թ. մոտ 50 000 գյուղացիներ ստիպված եղան վաստակ որոնելու նպատակով լքել հայրենի գյուղերը և թափառել քաղաքներում։

Սակայն արդյունաբերությունը՝ չնայած նրա նկատելի աճին, խոշոր դեր չէր խաղում Հայաստանի էկոնոմիկայի մեջ։ Նրա տեսակարար կշիռը աննշան էր։ 1913 թ. արդյունաբերության պրոդուկցիան կազմում էր ամբողջ տնտեսության ընդհանուր պրոդուկցիայի միայն 23 տոկոսը։ Իսպառ բացակայում էին արդյունաբերության մի շարք կարևոր ճյուղեր, եղած արդյունաբերության տեխնիկական բազան թույլ և պրիմիտիվ էր։ Ազգաբնակության մեծամասնությունը՝ ավելի քան 90 տոկոսը զբաղվում էր գյուղատնտեսությամբ։ Քաղաքային բնակչության քանակը չնչին էր։ 20-րդ դարի սկզբներին Երևանի բնակչության թիվը կազմում էր 31 000, իսկ Ալեքսանդրապոլինը՝ 35 000 մարդ։

Գյուղատնտեսությունը՝ տնտեսության հիմնական ճյուղը, գտնվում էր խիստ հետամնաց վիճակում։ Գյուղում դեռևս ուժեղ էին ֆեոդալական-ճորտական հարաբերությունների մնացորդները։ Գյուղատնտեսության մեջ արտադրության հիմնական միջոցներն էին պապենական արորն ու մանգաղը։

Այսպիսով, չնայած կապիտալիստական արդյունաբերության որոշ զարգացման, այնուամենայնիվ, Հայաստանի տնտեսական կյանքում 20-րդ դարում ևս տեղի չունեցան էական փոփոխություններ։ Հայաստանը շարունակեց մնալ որպես հետամնաց ագրարային երկիր։

Ռևոլյուցիոն շարժման նոր վերելք։ Ստոլիպինյան ռեակցիայի շրջանը երկար չտևեց։ Արդեն 1910 թ. վերջերին երևացին ռևոլյուցիոն վերելքի առաջին նշանները։ Սակայն ռևոլյուցիոն շարժման իսկական վերելքն սկսվեց 1912 թ. ապրիլ-մայիս ամիսներին։ 1912 թ. ապրիլի 4-ին Սիբիրում՝ Լենայի ոսկու

հանքերում ցարական ժանդարմները սպանեցին և վիրավորեցին 500-ից ավելի գործադուլավոր բանվորներ։ Ինքնակալության այդ նոր արյունոտ չարագործությունը հուզեց ամբողջ երկիրը։ Ամենուրեք բռնկվեցին գործադուլներ, միտինգներ, դեմոնստրացիաներ։ Միլիոնից ավելի բանվորներ գործադուլ հայտարարեցին 1912 թվականին, 1 300 000-ից ոչ պակաս՝ 1913 թվականին։ 1914 թ. առաջին կեսի գործադուլներն ընդգրկեցին մոտավորապես մեկ և կես միլիոն բանվոր։

Բանվորական շարժման վերելքը ռևոլյուցիոն պայքարի մեջ ներգրավեց գյուղացիական մասսաներին և հուզումներ առաջացրեց նաև բանակի մեջ։

Ռուսական ռևոլյուցիոն շարժման ազդեցության տակ ուժեղացավ բանվորների ու գյուղացիների շարժումը նաև Անդրկովկասում։

1912—1914 թթ. բանվորական գործադուլներ, միտինգներ ու ցույցեր տեղի ունեցան Բաքվում, Թիֆլիսում և Բաթումում։ Գործադուլային շարժումն առանձնապես ծավալվեց Բաքվում։ 1914 թ. մայիսին սկսվեց Բաքվի նավթարդյունաբերության բանվորների գործադուլը, որը լայն արձագանք գտավ ամբողջ Ռուսաստանում։

Բաքվի գործադուլը, որը տևեց երկու ամիս, աչքի էր ընկնում իր կազմակերպվածությամբ։ Գործադուլավորները հանդես բերին մեծ կայունություն և համառություն։ Ի նշան համերաշխության Բաքվի բանվորների, գործադուլ հայտարարեցին Մոսկվայի, Պետերբուրգի և այլ քաղաքների բանվորները։

1913—1914 թթ. գործադուլներ բռնկվեցին նաև Հայաստանի բանվորական կենտրոններում՝ Ալավերդում, Ղափանում և Ալեքսանդրոպոլում։ Վերականգնվեցին բանվորական արհմիությունները, կազմակերպվեցին մայիսմեկյան դեմոնստրացիաներ։ Հասարակական կյանքը նկատելի կերպով աշխուժացավ։ Երևանում և Ալեքսանդրոպոլում սկսեցին լույս ընծայվել պրոգրեսիվ ուղղության օրաթերթեր։ Առաջ եկան գյուղացիական միություններ, կոոպերատիվ ընկերություններ, ապահովագրական գանձարկղներ։

Տեղաշարժ նկատվեց նաև գեղարվեստական գրականության մեջ։ Ինտելիգենցիայի որոշ մասի մեջ եղած անկումային, հոռետեսական տրամադրությունները փոխարինվեցին ռևոլյուցիոն գաղափարներով։ Այսպես, օրինակ, տաղանդավոր հայ բանաստեղծ Վահան Տերյանը, որը ռեակցիայի տարիներին տուրք տվեց հոռետեսությանը և թերահավատությանը, 1912 թ. երգում էր.

«Զարթեք, երգեր իմ, ժամ է հնչելու,
Ջինելու նորից գնդերը ցրիվ,
Մեռած սրտերը կյանքի կոչելու
Եվ բորբոքելու զայրույթ ու կռիվ»։

Ռևոլյուցիոն շարժման նոր վերելքը գլխավորում էր բոլշևիկյան պարտիան։ Բոլշևիկները զուգակցում էին պարտիական անլեգալ աշխատանքը լեգալ կազմակերպություններում տարվող աշխատանքի հետ։ Ուղարկելով իրենց դեպուտատներին IV Պետական դումա, նրանք օգտագործեցին Դումայի տրիբունան (ամբիոնը) ռևոլյուցիոն ագիտացիայի համար։ Վ. Ի. Լենինի ցուցումով Պետերբուրգում հիմնադրվեց բոլշևիկյան «Պրավդա» օրաթերթը, որի առաջին համարը լույս տեսավ 1912 թ. ապրիլի 22-ին (մայիսի 5-ին նոր տոմարով)։ «Պրավդա»-ն հզոր զենք հանդիսացավ բոլշևիկյան կազմակերպությունների ամրապնդման և բանվորական մասսաների քաղաքական դաս-

տիարակության գործում։ «Պրավդա»-ին հայ բոլշևիկներից թղթակցում էին Ստ. Շահումյանը, Սուրեն Հովսեփյանը, Ասքանազ Մռավյանը, Ա. Կարինյանը և ուրիշները։ Թերթը լուսաբանում էր նաև Հայաստանի հետ կապված հարցերը և լայնորեն տարածվում Անդրկովկասում։

1914 թ. հունվարին Թիֆլիսում սկսեց լույս տեսնել «Մեր խոսքը» բոլշևիկյան շաբաթաթերթը, որը գրում էր բանվորների ու աշխատավոր մասսաների առաջ կանգնած նոր խնդիրների մասին։

1914 թ. մարտին Աստրախանի աքսորավայրից Բաքու է վերադառնում Ստ. Շահումյանը և նորից ծավալում է ռևոլյուցիոն պարտիական աշխատանք Բաքվում և ամբողջ Անդրկովկասում։

Նույն թվականին հայ պրոլետարական պոետ, ականավոր բոլշևիկ Հակոբ Հակոբյանի ղեկավարությամբ և տպագրիչ բանվորների ակտիվ մասնակցությամբ լույս տեսան բանվորների կյանքին նվիրված, ռևոլյուցիոն բովանդակություն ունեցող գեղարվեստական մի շարք ալմանախներ ու ժողովածուներ։

Պայքար նացիոնալիզմի դեմ։ Ռեակցիայի ու ռևոլյուցիայի վերելքի տարիներին բուրժուա-կալվածատիրական և մանր-բուրժուական պարտիաները մղում էին սանձարձակ նացիոնալիստական պրոպագանդա, փորձելով շեղել մասսաներին ռևոլյուցիոն պայքարից։ Այս կապակցությամբ ազգային հարցի էությունը հանգամանորեն լուսաբանելը և նացիոնալիզմի դեմ պայքարն ուժեղացնելը բոլշևիկյան պարտիայի կարևորագույն խնդիրներից մեկը դարձավ։

Պարտիայի առաջնորդ Վ. Ի. Լենինը հանդես եկավ մի շարք հոդվածներով, որոնք նվիրված էին ազգային հարցին։ 1913—1914 թթ. լույս տեսան Լենինի «Քննադատական դիտողություններ ազգային հարցի մասին», «Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին» աշխատությունները և Ի. Վ. Ստալինի՝ «Մարքսիզմը և ազգային հարցը» աշխատությունը, որոնցում փայլուն կերպով տրված է բոլշևիկյան ծրագրի ու տակտիկայի տեսական հիմնավորումը ազգային հարցում։

Անդրկովկասի և Հայաստանի բոլշևիկները, զինվելով ազգային հարցի մարքս-լենինյան ուսմունքով, էլ ավելի ուժեղացրին իրենց պայքարը բուրժուա-նացիոնալիստական պարտիաների և կազմակերպությունների՝ մենշևիկների, դաշնակցականների և սպեցիֆիկների, ամեն տեսակ նացիոնալիզմի և շովինիզմի դեմ։

1912 թվականին Ստ. Շահումյանը գրեց «Վ. Փափազյանը պատմագետի դերում» իր հոդվածը, որտեղ ամենայն վճռականությամբ հանդես եկավ հայ բուրժուա-կղերական նացիոնալիստական պատմագրության կոնցեպցիաների դեմ։ Շահումյանը ցույց տվեց, որ այդ պատմագրության ներկայացուցիչները կեղծելով փաստերը, ամեն կերպ գովերգում, փառաբանում են հայ թագավորներին, իշխաններին և կրոնավորներին, ամեն կերպ իդեալականացնում են պատմական անցյալը, գրում են միայն առանձին՝ իշխանների ու հրամանատարների մասին և լռություն են պահպանում ժողովրդական մասսաների կենքումների ու հարստահարությունների, դասակարգային պայքարի մասին։ Փայլուն կերպով մերկացնելով բուրժուական նացիոնալիստներին նա առաջնահերթ հարց էր համարում հայ ժողովրդի մարքսիստական պատմության մշակումը։

Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ, Ստ. Շահումյանը 1913 թվականին գրեց իր «Ազգային կուլտուրական ավտոնոմիայի մասին» հայտնի աշխատու-

թյունը, որը լույս տեսավ 1914 թվականին։ Այդ աշխատությունն ուղղված էր սպեցիֆիկների և մասնավորապես նրանց լիդերներից մեկի՝ Դ. Անանունի դեմ, որն այդ տարիներին հրապարակել էր մի շարք հոդվածներ՝ տոգորված բուրժուական նացիոնալիզմով և շովինիզմով։ Սպեցիֆիկները՝ հետևելով ավստրիական նացիոնալիստ սոցիալ-դեմոկրատներին, բունդականներին և վերջինների մենշևիկներին, առաջ էին քաշում ազգային-կուլտուրական ավտոնոմիայի ռեակցիոն պահանջը։ Նրանք, ինչպես և մյուս նացիոնալիստները, հարց էին դնում անկախ տերիտորիայից ամեն մի ազգության համար ստեղծել առանձին-առանձին ազգային կուլտուրական ավտոնոմիա, որը վարեր տվյալ ազգության բոլոր խավերի կուլտուր-կրթական գործերը։ Սպեցիֆիկները սրանով անտես էին առնում ազգային հարցի լուծման իսկական բովանդակությունը և ձգտում էին խախտել տարբեր ազգությունների բանվորության և աշխատավորության եղբայրական միասնությունը, միասնություն, որը միայն կարող էր լուծել ժողովրդին հուզող ինչպես սոցիալական, այնպես էլ ազգային հարցերը։ Նրանք աշխատում էին հայ բանվորությանը հեռու պահել ռուս, վրացի, ադրբեջանցի բանվորներից, որպեսզի դրանով իսկ թուլացնեն նրա ռևոլյուցիոն պայքարը և հեշտությամբ ենթարկեն նրան հայ բուրժուազիայի շահերին։ Ստ. Շահումյանը մերկացրեց և խորտակիչ քննադատության ենթարկեց սպեցիֆիկներին և վարպետորեն պաշտպանեց ազգային հարցի մարքս-լենինյան ծրագիրը։

Ռևոլյուցիոն շարժման նոր վերելքի տարիներին բուրժուական նացիոնալիզմի դեմ, ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր պայքար մղեցին նաև ականավոր բոլշևիկներ Հակոբ Հակոբյանը, Ալեքսանդր Մյասնիկյանը, Ասքանազ Մռավյանը, Սուրեն Հովսեփյանը և ուրիշները։

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1912—1914 ԹԹ.

Արևմտահայերի դրությունը։ Արևմտյան Հայաստանը, որ շարունակում էր մնալ սուլթանական Թյուրքիայի տիրապետության տակ, 20-րդ դարի սկզբներին ևս չունեցավ քիչ թե շատ զգալի տնտեսական առաջադիմություն։ Երկրում իշխում էին ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունները և դրանց համար բնորոշ տնտեսության նատուրալ ձևը։ Արդյունաբերությունը չէր զարգանում։ Հայ բուրժուազիան իր առևտուրը կենտրոնացրել էր Կոստանդնուպոլսում, Զմյուռնիայում և Թյուրքիայի այլ ծովափնյա քաղաքներում։ Բուն Արևմտյան Հայաստանում կատարվում էր, գլխավորապես մանր առևտուր։ Սակայն, Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններում, առանձնապես Վանի և Էրզրումի վիլայեթներում ապրանք-փողային հարաբերությունները շարունակում էին զարգանալ։ Գյուղացիության շերտավորման պրոցեսն արագանում էր, հողազուրկ գյուղացիության թիվը օր ավուր մեծանում էր։ Քայքայված գյուղական աշխատավորը լքում էր հայրենական տունը և մեկնում Ռուսաստան, Արևմտյան Եվրոպա, անգամ Ամերիկա։

Արևմտահայ գյուղացիության հողազրկման և աղքատացման պրոցեսն ավելի էր ուժեղանում Թյուրքական կառավարության հարկային և ագրարային քաղաքականության հետևանքով։ Սուլթանական կառավարությունը շա-

փազանց ծանր հարկեր էր սահմանում, պարբերաբար բռնի կերպով բռնագրավում էր հայ գյուղացիության հողերը։

Այս բոլորի հետ մեկտեղ թյուրքական դեսպոտիզմը շարունակում էր ազգային ճնշումների ու հալածանքների իր բիրտ քաղաքականությունը։ Արևմտահայությունը ենթարկվում էր ամենն տեսակ ազգային ճնշումների, հարբստահարությունների, ջարդերի ու կոտորածների։

Ի պատասխան օրավուր ուժեղացող սոցիալ-դասակարգային և ազգային ճնշումների ու կեղեքումների, արևմտահայերը ապստամբական մի շարք ելույթներ ունեցան սուլթանական բռնապետության դեմ։ 1904 թվականի գարնանը ապստամբություն բարձրացրեց Սասունի հայ գյուղացիությունը։

Սուլթան Աբդուլ Համիդը հրաման արձակեց անհապաղ մեծ արշավանք սկսել ապստամբների դեմ։ Շուտով թյուրքական կանոնավոր զորամասերը և նրանց միացած հրոսակախմբերը հարձակվեցին Սասունի վրա։ Ապստամբ գյուղացիները հերոսական դիմադրություն ցույց տվին, բայց նրանց ուժերն սպառվեցին անհավասար կռվում։ Թյուրքական ջարդարարները մտան Սասուն, ավերեցին 42 գյուղ, հրդեհեցին 2 300 տուն, սպանեցին 7 000 մարդ, հարյուրավոր գյուղացիներ բանտ նետեցին։

1908 թ. հուլիսին Թյուրքիայում տեղի ունեցավ պետական հեղաշրջում։ Աբդուլ Համիդը գահընկեց արվեց, հայտարարվեցին կոնստիտուցիոն կարգեր, իշխանությունն անցավ բուրժուա-կալվածատիրական, նացիոնալիստական, այսպես կոչված, երիտասարդ թյուրքերի պարտիայի ձեռքը։

Երիտասարդ թյուրքերի կառավարությունը ոչ մի էական փոփոխություն չմտցրեց երկրի ներքին կյանքի մեջ և ոչնչով չթեթևացրեց ինչպես թյուրք ժողովրդի, այնպես էլ մյուս ազգությունների տնտեսական ու իրավական դրությունը։ Նա չվերացրեց ֆեոդալական-ճորտատիրական կարգերը, չլուծեց նաև ագրարային հարցը։

Երիտասարդ թյուրքերը ծայրահեղ ռեակցիոն քաղաքականություն էին վարում մասնավորապես ազգային հարցում։ Մինչև իշխանության տիրանալը նրանք իրենց ներկայացնում էին որպես «ռևոլյուցիոներներ» և տալիս էին բազմաթիվ խոստումներ։ Նրանք կեղծավորաբար խոստանում էին ազգային ինքնավարություն, ազգային ճնշումների վերացում և այլն։ Սկզբնական շրջանում արևմտահայերի մի մասը հավատաց այդ խոստումներին և անգամ որոշ հույսեր կապեց երիտասարդ թյուրքերի պարտիայի հետ։ Սակայն իշխանության գլուխ անցնելով երիտասարդ թյուրքերը դեն նետեցին իրենց դիմակները։ Շուտով պարզվեց, որ նրանք ազգային հարցում գերազանցում են արյունարբու սուլթան Աբդուլ Համիդին։ Բուրժուա-նացիոնալիստական այդ ռեակցիոն պարտիան հրապարակայնորեն հայտարարություն արեց այն մասին, որ ինքը ձգտում է թյուրքացնել, ասիմիլյացիայի ենթարկել օսմանյան կայսրության մեջ գտնվող բոլոր ժողովուրդներին և մերժում է որևէ իրավունք կամ կյանքի և գույքի ապահովություն մյուս, ոչ թյուրք ազգությունների համար։

Արդեն 1909 թվականի ապրիլ ամսին երիտասարդ թյուրքերը սուլթան Համիդի կողմնակիցների հետ միասին կազմակերպեցին հայկական նոր կոտորած։ Այս անգամ ջարդերի կենտրոնը դարձավ Կիլիկիայի Ադանա քաղաքը և մոտակա գյուղերը։ Ջարդարարները սրի քաշեցին 30,000 մարդ, ավերվեցին ու թալանվեցին բազմաթիվ գյուղեր և ավաններ։

Ադանայի կոտորածները, սակայն, թյուրքական նացիոնալիստների ծրագրած կոտորածների քաղաքականության առաջին պտուղներն էին միայն։ Երիտասարդ թյուրքերը սկսեցին նախապատրաստել ավելի մեծ մասշտաբի կոտորածներ ու ջարդեր։ Սկսվեց դաժան հալածանքների ու հարստահարությունների մի նոր ժամանակաշրջան։ 1912 թ. բոլշևիկյան «Պրավդա» թերթը գրում էր, թե երիտասարդ թյուրքերի ձգտումը թյուրքացնել սլավոններին, հայերին, հրեաներին, հույներին և այլն, ավելի մշտական, ավելի կոպիտ-վայրենի բնույթ ստացավ, քան սուլթան Աբդուլ Համիդի ժամանակ։ Այսպիսով արևմտահայերի դրությունը երիտասարդ թյուրքերի տիրապետության ժամանակ ավելի ծանրացավ ու տագնապալի դարձավ։

Հայկական հարցը 1912—1914 թթ.։ 1912 թ. բռնկեց Բալկանյան պատերազմը, որ մղվում էր մի կողմից Բուլղարիայի, Սերբիայի, Չերնոգորիայի և մյուս կողմից՝ Թյուրքիայի միջև։

Բալկանյան երկրների միացյալ ուժերը ծանր պարտության մատնեցին Թյուրքիային։ Մակեդոնիան, որ պատերազմի պատճառներից մեկն էր, ազատագրվեց թյուրքական տիրապետությունից։

Բալկանյան պատերազմին միջամտեցին եվրոպական խոշոր պետությունները։ Ցարական կառավարությունը, ելնելով իր արտաքին քաղաքականության շահերից, հովանավորող դիրք բռնեց բալկանյան երկրների նկատմամբ և անգամ ազգային ավտոնոմիա պահանջեց օսմանյան կայսրության կազմում գտնվող մի շարք ազգությունների համար։ Այս հանգամանքը մի կողմից և Թյուրքիայի պարտությունը մյուս կողմից առիթ տվեցին, որպեսզի նորից հրապարակ բերվի հայկական հարցը։ 1912 թվականի հոկտեմբեր ամսին Էջմիածնի Կաթողիկոս Գևորգ 5-րդը դիմեց Ռուսաստանին, խնդրելով նրա օժանդակությունը և միջամտությունը Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հարցը լուծելու համար։ Միաժամանակ նույն հարցով դիմումներ կատարվեցին արևմտաեվրոպական պետություններին։

Հայկական հարցը լուծելու նպատակով մեծ պետություններին արված դիմումները ընդունելություն գտան միայն Ռուսաստանում։ Ցարական կառավարությունը, որ այդ տարիներին աշխատում էր իր դիրքերն ամրացնել Մերձավոր Արևելքում, ստանձնեց հայկական հարցի պաշտպանի դերը։ 1913 թվականի հունիս ամսին նա առաջարկեց ռեֆորմների մի ծրագիր, որի համաձայն Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի և Սվազի վիլայեթները պետք է վարչականորեն միացվեին և կազմեին Հայկական նահանգ (մարզ)։ Նահանգը պետք է կառավարվեր գեներալ նահանգապետի կողմից, որը պիտի լիներ քրիստոնյա և այդ պաշտոնյան պետք է նշանակվեր սուլթանի կողմից եվրոպական պետությունների համաձայնությամբ։ Ներկայացված ծրագիրն Արևմտյան Հայաստանի համար ընդհանուր առմամբ նախատեսում էր ազգային ավտոնոմիա։

Ցարական կառավարության առաջարկած այդ ծրագիրը խիստ դիմադրության հանդիպեց ինչպես Թյուրքիայի, այնպես էլ Գերմանիայի կողմից։ Իմպերիալիստական Գերմանիան, որ Թյուրքիան դարձրել էր իր կիսագաղութը և մտադիր էր զավթելու ամբողջ Մերձավոր Արևելքն ու Կովկասը, դիտում էր Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը որպես մի խոչընդոտ իր ագրեսիվ նպատակների կենսագործման ճանապարհին։

Երկերևսանի դիրք բռնեցին Անգլիան ու Ֆրանսիան։ Կենսագործելով իրենց իմպերիալիստական պլանները Թյուրքիայում և Մերձավոր Արևելքում, անգլիական ու ֆրանսիական կառավարությունները պաշտոնապես արտահայտվում էին հօգուտ Արևմտյան Հայաստանում ծրագրվող ռեֆորմների, իսկ իրականում դեմ էին դրան և գաղտնաբար դրդում էին Թյուրքիային ու Գերմանիային վիժեցնելու ռեֆորմների գործը։

Չնայած այդ բոլորին, Ռուսաստանը շարունակեց ճնշում գործ դնել Թյուրքիայի վրա։ Սկսվեցին նոր բանակցություններ։ 1914 թվականի հունվարի 26-ին Կ. Պոլսում Ռուսաստանի և Թյուրքիայի միջև կնքվեց համաձայնություն և ընդունվեց Արևմտյան Հայաստանում կիրառվելիք բարենորոգումների նոր ծրագիր։ Համաձայնագիրը ազգային ինքնավարության (ավտոնոմիայի) փոխարեն նախատեսում էր միայն ռեֆորմներ։ Թյուրքական կառավարությունը պարտավորություն ստանձնեց կատարելու ագրարային, վարչական, դատական և այլ բարեփոխումներ։ Ռեֆորմների նոր ծրագրի համաձայն Արևմտյան Հայաստանը պետք է բաժանվեր երկու առանձին վարչական միավորների՝ նահանգների։ Յուրաքանչյուր նահանգի համար մեծ տերությունները նշանակելու էին մեկական գեներալ-տեսուչ (ընդհանուր վերահսկիչ), որոնք պետք է հսկեին բարձր պաշտոնեության և դատական ու ոստիկանական հիմնարկների գործունեությունը։ Հունվարի 26-ի համաձայնագրով ռեֆորմների կենսագործման ընդհանուր վերահսկողությունը դրվում էր Ռուսաստանի վրա։

Սակայն ռեֆորմների նույնիսկ այդ խիստ չափավոր ծրագիրը Թյուրքական կառավարությունը զանազան պատրվակներով ձգձգեց ու չիրագործեց։ 1914 թվականի ամռանը, երբ բռնկվեց առաջին համաշխարհային պատերազմը, նա չեղյալ հայտարարեց 1914 թվականի հունվարի 26-ի համաձայնագրով Արևմտյան Հայաստանի համար նախատեսվող ռեֆորմների ծրագիրը։ Պատերազմի առաջին իսկ օրերից երիտասարդ Թյուրքերի կառավարությունը սկսեց բացահայտ նախապատրաստություններ տեսնել հայկական նոր, մասսայական ջարդեր կազմակերպելու համար։

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1. ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

Պատերազմի բնույթը։ 1914 թ. օգոստոսի 1-ին (հուլիսի 19-ին) սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը։ Այդ արյունահեղ պատերազմը, որ տևեց չորս տարուց ավելի, տեղի ունեցավ կապիտալիստական երկրների երկու խմբավորումների միջև։ Խմբավորումներից մեկը, այսպես կոչված Անտանտան կամ Եռյակ համաձայնությունը, կազմում էին՝ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը։ Մյուս խմբավորումը, այսպես կոչված, Քառյակ զինակցությունը, կազմում էին՝ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Թյուրքիան և Բուլղարիան։ Պատերազմի ընթացքում Անտանտային միացան Յապոնիան (1914), Իտալիան (1915) և Ամերիկայի Միացյալ Նահանգները (1917)։

1914 թ. պատերազմն իմպերիալիստական, անարդարացի, կողոպտչական պատերազմ էր, աշխարհի և գաղութների վերաբաժանման համար մղվող պատերազմ։ Նա մղվում էր նոր շուկաներ, հումքի նոր աղբյուրներ և ազդեցու-

թյան նոր սֆերաներ ձեռք բերելու համար։ Գերմանիան ձգտում էր գավթել Ուկրաինան, Լեհաստանը, Մերձբալթյան երկիրը, իր տիրակալությունը հաստատել Մերձավոր Արևելքում։ Անգլիան ձգտում էր ջախջախել իր գլխավոր մրցակցին՝ Գերմանիային, գրավել Միջագետքը, Պաղեստինը և վերջնականապես հիմնավորվել Եգիպտոսում։ Զավթողական, նվաճողական նպատակներ էին հետապնդում նաև Ամերիկայի Միացյալ Նահանգները, Ֆրանսիան, Յապոնիան, ցարական Ռուսաստանը, Թյուրքիան և պատերազմին մասնակցող մյուս բոլոր պետությունները։ Մասնակցելով պատերազմին, Թյուրքիան ծրագրում էր հափշտակել Կովկասը և հարևան մյուս երկրները։

Պատերազմական գործողությունների սկիզբը Կովկասյան ռազմաճակատում։ Առաջին համաշխարհային պատերազմի գլխավոր ռազմաճակատներն էին Արևմտյան և Արևելյան ռազմաճակատները։ Սակայն, դրանցից բացի, ստեղծվեցին նաև մի շարք, համեմատաբար երկրորդական նշանակություն ունեցող ռազմաճակատներ, որոնցից մեկն էր Կովկասյան ռազմաճակատը, որը ձգվում էր Սև ծովից մինչև Իրան (Պարսկաստան)։

Կովկասյան ռազմաճակատում կռիվները մղվում էին Ռուսաստանի և Թյուրքիայի միջև։ Ռուսաստանի կողմից այստեղ գործում էր Կովկասի ռուսական բանակը, իսկ Թյուրքիայի կողմից՝ թյուրքական 3-րդ բանակը, որի հրամանատարությունն իր վրա վերցրեց Թյուրքիայի ռազմական մինիստր, արկածախնդիր և պանիսլամիստ Էնվեր փաշան։ Թյուրքական բանակի մի շարք ղեկավար պաշտոններ գտնվում էին գերմանական սպաների ձեռքում։

Կովկասյան ռազմաճակատում պատերազմական գործողություններն սկսվեցին 1914 թ. նոյեմբերի սկզբներին։ 1914 թ. հոկտեմբերի 29-ին և 30-ին թյուրք-գերմանական ռազմանավերը, առանց պատերազմ հայտարարելու, հանկարծակի ռմբակոծեցին ռուսական սևծովյան նավահանգիստները։ Նոյեմբերի 2-ին թյուրքական բանակը հարձակման անցավ Կարսի ուղղությամբ և ներխուժեց Բաթումի շրջան։ Սկսվեց պատերազմը Ռուսաստանի և Թյուրքիայի միջև։ Ռուսական բանակն անցավ հակահարձակման։ Պատերազմական գործողությունները սկսվեցին հետևյալ ուղղություններով. 1. Բաթում — Ռիզե, 2. Արդահան — Օլթի, 3. Կարս — Էրզրում, 4. Երևան — Դիադին, 5. Ջուլֆա — Վան։ Գլխավոր ուղղությունը Կարս — Էրզրում ուղղությունն էր։ Կովկասյան ռազմաճակատի հիմնական գործողությունները տեղի ունեցան Արևմտյան Հայաստանում։

Ռուսական բանակը հարկ եղած չափով նախապատրաստված չէր և թվական տեսակետից զիջում էր թյուրքական բանակին։ Սակայն, չնայած դրան, Կովկասի ռուսական բանակը հաջողությամբ հետ շպրտեց հարձակման անցած թյուրքական զորքերին։ Նոյեմբեր ամսին ռուսական զորքերը զգալի չափով առաջ խաղացին։ Կովկասի ռուսական բանակի առաջին կորպուսը հարձակման անցավ Կարս — Էրզրում ուղղությամբ և առաջ շարժվեց Սարիղամիշից դեպի Էրզրում։ Երևան — Դիադին ուղղությամբ գործող ռուսական զորքերը դրավեցին Բայազետը և Ալաշկերտը։ Ջուլֆա — Վան ուղղությամբ գործող զորքերը գրավեցին Խանասորի լեռնանցքը, Բաշկալան և Սարայը։ Ռուսական բանակի հակահարձակումը հաջողությամբ ընթացավ նաև Արդահան — Օլթի և Բաթում — Ռիզե ուղղություններով։

✓ Սարիղամիշի օպերացիան։ Լրացուցիչ ուժեր ստանալով՝ թյուրքական բանակի հրամանատար Էնվեր փաշան 1914 թ. դեկտեմբերին նոր հարձակում

կազմակերպեց ռուսական զորքերի դեմ։ Թյուրքական զորքերի հիմնական մասը հարձակման անցավ Էրզրում — Սարիղամիշ ուղղությամբ, նպատակ ունենալով շրջապատել ու ոչնչացնել ռուսական գլխավոր ուժերը և ապա գրավել Անդրկովկասը։ 1914 թ. դեկտեմբերի 9-ից մինչև 1915 թ. հունվարի 5-ը Սարիղամիշի շրջանում ռուսական և թյուրքական հիմնական ուժերի միջև տեղի ունեցան համառ կռիվներ, որոնք վերջացան ռուսական զորքերի փայլուն հաղթանակով։ Ռուսական քաջարի զորքերը ոչ միայն ետ մղեցին թյուրքական բանակի բոլոր գրոհները, այլև ծանր պարտության մատնեցին նրան։ Թշնամու բանակը ջախջախվեց։ Գլխավին ոչնչացավ թյուրքական բանակի 9-րդ կորպուսը։ Կորցնելով իր զորքերի 80 տոկոսը, գեներալ-մայոր Էնվեր փաշան նահանջի դիմեց։ Հաղթահարելով ցուրտ ձմռան ու սառնամանիքների հետ կապված դժվարությունները, ռուսական զորքերը հետապնդեցին ջախջախված թշնամուն և գրավեցին նոր դիրքեր։

Սարիղամիշի շրջանում 1914 թ. դեկտեմբերին և 1915 թ. հունվարի սկզբներին տեղի ունեցած այս կռիվները, որոնք Սարիղամիշի օպերացիա ընդհանուր անունը կրեցին, մեծ ազդեցություն ունեցան պատերազմի հետագա ընթացքի վրա Կովկասյան ռազմաճակատում։ Սարիղամիշի փայլուն հաղթանակից հետո ռուսական զորքերը հաջողություններ ունեցան Կովկասյան ռազմաճակատի նաև մյուս ուղղություններում։ Կովկասյան բանակի 4-րդ կորպուսի զորքերը գեներալ Օգանովսկու հրամանատարությամբ հունվարին գրավեցին Թավրիզը, իսկ փետրվարին՝ Դիլմանը, դուրս քշելով այդ վայրերը ներխուժած թյուրքական զորքերին։ Այդ նույն կորպուսի զորամասերը ապրիլին գրավեցին Մանազկերտը, իսկ մայիսին՝ Վան քաղաքը։ Գարնան ամիսների ընթացքում թյուրքական հրոսակախմբերից մաքրվեցին նաև Բաշկալան, Ղոթուրը, Շատախը, Արճեշը և այլն։

1915 թ. հուլիսի սկզբներին թյուրքական խոշոր ուժեր հարձակում սկսեցին Բիթլիս — Վան և Մուշ — Մանազկերտ ուղղություններով։ Ռուսական զորքերը թողեցին Մանազկերտը, Արճեշը, Վանը և ետ քաշվեցին դեպի Ալաշկերտի հովիտը։ Սակայն, նույն ամսի վերջերին նրանք նոր հարձակման անցան ու ետ գրավեցին Վանը և Արճեշը։ Այնուհետև մինչև 1915 թ. վերջերը Կովկասյան ռազմաճակատում պատերազմական նոր խոշոր գործողություններ տեղի չունեցան։

Էրզրումի օպերացիան։ 1916 թ. հունվար և փետրվար ամիսներին ռուսական զորքերը մի նոր ծանր հարված հասցրին Էրզրում — Կարս ուղղությամբ գործող թյուրքական գլխավոր բանակին։ Այդ ամիսներին Էրզրումի շրջանում ուժեղ կռիվներ ծավալվեցին ռուսական և թյուրքական զորքերի միջև։ Թյուրքական բանակը ծանր պարտություն կրեց նախ՝ Բյոփրիքոյ գյուղի, ապա Էրզրում քաղաքի շրջակայքում։ Փետրվար ամսին ռուսական զորքերը գրավեցին Էրզրում քաղաքը, որը խիստ ամրացված էր և ուներ տնտեսական ու ռազմա-ստրատեգիական խոշոր նշանակություն։ Էրզրումի շրջանում տեղի ունեցած այս՝ կռիվներում, որոնք Էրզրումի օպերացիա ընդհանուր անունն են կրում, թշնամու բանակը կորցրեց իր կազմի մոտ 50 տոկոսը։ Թյուրքական մի շարք զորամասեր ջախջախվեցին հիմնովին և դադարեցին գոյություն ունենալուց։ Ռուսական զորքերը գերի վերցրին տասնյակ-հազարավոր զինվորներ ու սպաներ, գրավեցին սննդամթերքի ու ռազմամթերքի շատ պահեստներ։

Էրզրումի օպերացիան ռուսական բանակի մի նոր փայլուն հաղթանակն էր։ Էրզրումի՝ Փոքր Ասիայի այդ կարևորագույն կենտրոններից մեկի գրավումը ունեցավ ռազմա-ստրատեգիական ու քաղաքական մեծ նշանակություն։ Այդ հաղթանակից հետո ռուսական բանակների համար ճանապարհ բացվեց դեպի Երզնկա, Բայբուրդ և Տրապիզոն։ Կովկասի ռուսական բանակի Էրզրումի հաղթական օպերացիան միաժամանակ լուրջ կերպով թերևացրեց այն ժամանակ Միջագետքում թյուրքերի դեմ կռվող անգլիական զորքերի դրությունը, որովհետև Էրզրումում կրած ծանր պարտությունից հետո թյուրքական կառավարությունն ստիպված եղավ Միջագետքից և Սիրիայից զորքեր փոխադրել Կովկասյան ռազմաճակատ։

Էրզրումի օպերացիայի շրջանում զգալի հաջողություններ ունեցան նաև Կովկասյան ռազմաճակատի մյուս ուղղություններում գործող ռուսական զորքերը։ 1916 թ. փետրվարին ռուսական զորամասերը գրավեցին Մուշ և Բիթլիս քաղաքները։ Թյուրքական զորքերից մաքրվեցին Վանա լճի հարավ-արևելյան շրջանները։ Բաթում — Ռիզե ուղղությամբ գործող ռուսական զորամասերը նույն փետրվար ամսին գրավեցին Ռիզե նավահանգիստը։

1916 թ. գարնան և ամառվա ամիսներին Կովկասի ռուսական զորքերը ունեցան նոր հաղթանակներ։ Ռուսական բանակը ապրիլին գրավեց Տրապիզոնը, իսկ հուլիսին՝ Բայբուրդ, Գյումուշխանե և Երզնկա քաղաքները։

Ռազմաճակատի գլխավոր ուղղություններում ծանր պարտություններ կրելով՝ թյուրքական զորքերը հարձակումներ սկսեցին Մուշի, Բիթլիսի և Վանի շրջաններում։ Սակայն, այդ հարձակումներն անհաջող անցան։ 1916 թ. աշնան ամիսներին Կովկասյան ռազմաճակատում նշանակալից ռազմական գործողություններ տեղի չունեցան։ 1916 թ. վերջերին Արևմտյան Հայաստանի մեծ մասն արդեն մաքրված էր թյուրքական զորքերից։

Հայ բուրժուազիան պատերազմի տարիներին։ Հայ բուրժուազիան տնտեսապես և քաղաքականապես կապված էր Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի տիրող դասակարգերի հետ։ Դրա համար էլ պատերազմի հենց առաջին օրերից նա անցավ Եռյակ համաձայնության՝ Անտանտայի կողմը։ Հայկական բուրժուական պարտիաները, մասնավորապես դաշնակցությունը, ամեն կերպ օժանդակում էին Անտանտային։ Դաշնակներն իրենց ավանտյուրիստական ծրագրերի իրականացման նպատակով դիվանագիտական բանակցություններ էին վարում անգլիական, ռուսական և ֆրանսիական կառավարությունների հետ։ Նրանք միաժամանակ մղում էին սանձարձակ նացիոնալիզմի պրոպագանդա։

Պատերազմի տարիներին զինվորական պարտադիր ծառայության կարգով ցարական բանակ կանչվեց մոտ 200 000 հայ։ Նրանք ռուսական զորքերի շարքերում կռվում էին ինչպես Արևելյան ռազմաճակատում՝ Գերմանիայի դեմ, այնպես էլ Կովկասյան ռազմաճակատում՝ Թյուրքիայի դեմ։ Կովկասյան ռազմաճակատում թյուրքական բանակի դեմ ռուսական զորքերի հետ միասին գործում էին նաև հայկական առանձին կամավորական խմբեր, որոնք կազմակերպվել էին հայ բուրժուազիայի և նրա պարտիաների կողմից։

Կամավորական ջոկատները մասնակցություն ունեցան այն կռիվներում, որոնք ծավալվեցին Վանի, Ալաշկերտի և Սարիղամիշի շրջաններում։ Ծանոթ լինելով Արևմտյան Հայաստանի աշխարհագրական պայմաններին,

գիտենալով տեղական ժողովուրդների լեզուները, կամավորները զգալի ծառայություն մատուցեցին ռուսական բանակին։

Պատերազմի տարիներին հայ կամավորներ կային նաև ֆրանսիական ու անգլիական բանակներում։ Պաղեստինի ռազմաճակատում թյուրքական զորքերի դեմ կռվող ֆրանսիական զորքերի շարքերում, 1917 թ. սկսած, գործում էր հայ կամավորների մի առանձին զորամաս, որը կրում էր Արևելյան լեգեոն անունը։

Կամավորական խմբերի գեկավարությունը գտնվում էր հայ բուրժուական պարտիաների և մասնավորապես դաշնակցական պարտիայի ձեռքում։ Այդ պարտիան աշխատում էր կամավորական խմբերն օգտագործել իր բուրժուա-նացիոնալիստական ավանտյուրիստական նպատակների համար։ Սակայն կամավորների շարքային անդամները ոչինչ ընդհանուր բան չունեին դաշնակցության ծրագրերի ու նպատակների հետ։ Կամավորական խմբերի շարքային մասսան ուղղորված էր մի գաղափարով՝ կռվել թյուրք-գերմանական իմպերիալիստական զորքերի դեմ և ազատել Արևմտյան Հայաստանը ու նրա բազմաչարչար ժողովուրդը թյուրքական բռնապետությունից։

2. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ 1915—1916 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայկական կոտորածները։ Պատերազմի առաջին իսկ ամիսներին թյուրքական կառավարությունն ընդունեց մի ծրագիր, որը նախատեսում էր կոտորել, բնաջինջ անել Արևմտյան Հայաստանի ամբողջ հայ բնակչությունը։ Թյուրքական կառավարությունը, որ այն ժամանակ գտնվում էր երիտասարդ թյուրքերի ռեակցիոն, նացիոնալիստական պարտիայի ձեռքում, ուներ նվաճողական նպատակներ։ Նա ձգտում էր գրավել Կովկասը, ցանկանում էր բոլոր մահմեդական ժողովուրդներին իրեն ենթարկել և ստեղծել թյուրքական մեծ և միաձույլ կայսրություն։ Սակայն, թյուրքական տիրապետության տակ գտնվող արևմտահայերը, ինչպես նաև մի շարք այլ ժողովուրդներ, որոնք ենթարկվում էին խիստ ծանր հալածանքների ու ճնշումների, աշխատում էին ազատագրվել թյուրքական փաշաների դաժան տիրապետությունից։ Երիտասարդ թյուրքերը արևմտահայ բնակչությունը դիտեցին որպես «վնասակար» տարր, որը կարող է խանգարել իրենց նվաճողական ծրագրի իրականացմանը։ Ելնելով սրանից, նրանց կառավարությունը ծրագրեց ֆիզիկական բնաջնջման ենթարկել ամբողջ արևմտահայությանը։ Թյուրքական կառավարությունը որոշեց օգտագործել բռնկած համաշխարհային պատերազմը և իր այդ գարհուրելի հայաջինջ ծրագիրն իրականացնել պատերազմի ընթացքում։

Թյուրքական կառավարությունը հայկական կոտորածներն սկսեց 1914 թ. վերջերին։ Սկզբնական շրջանում ջարդերը կազմակերպում էին ծածուկ, գաղտնի կերպով։ Հայ ժողովրդի դահիճները այդ շրջանում զորահավաքի և ճանապարհաշինարարական աշխատանքների համար բանվորական ուժ հավաքագրելու պատրվակով բանակ կանչեցին 16—52 տարեկան հասակ ունեցող հայ տղամարդկանց և ապա նրանց զինաթափ անելով՝ առանձին-առանձին խմբերով, գաղտագողի կոտորածի ենթարկեցին։ Ջարդերի այս առաջին շրջանում թյուրքական զորքերը միաժամանակ ավերեցին ու թալանեցին ռուս-թյուրքական սահմանամերձ շրջանների հարյուրավոր հայ գյուղեր։

Դիմադրելու և կռվելու ընդունակ հայ բնակչության մեծ մասը խարդախ և գաղտագողի միջոցներով կոտորելուց հետո ջարդարարները 1915 թ. գարնանից անցան բացարձակ և մասսայական կոտորածների։ Թյուրքական կառավարությունը արևմտահայ խաղաղ բնակչության մասսայական կոտորածների իր ծրագիրը փորձում էր իրականացնել տեղահանությունների՝ գաղթեցումների անվան տակ։ 1915 թ. գարնանը նա հրաման արձակեց արևմտահայ բնակչությանը Միջագետքի և Սիրիայի անապատները գաղթեցնելու մասին։ Բայց իրականում թյուրքական կառավարությունն իր այդ հրամանով կազմակերպում էր ոչ թե գաղթ, այլ մասսայական կոտորածներ։ Թյուրքական ջարդարարների այդ հրամանը սկիզբ դրեց ընդհանուր կոտորածների։ Սկսվեց հայ կանանց, երեխաների ու ծերունիների մասսայական ոչնչացում։ Հայ բնակչության մի մասը կոտորվեց տեղում՝ հայրենի գյուղերում ու քաղաքներում։ Մյուս մասը, որ բռնի տեղահանման էր ենթարկվում, կոտորվում էր ճանապարհներին։ Երրորդ մասը բնաջնջվում և ոչնչանում էր Միջագետքի և Սիրիայի անապատներում։

Արևմտահայ բնակչության կոտորածները կատարվում էին հրեշավոր անգթությամբ։ Թյուրքական կառավարությունը հրահանգում էր իր տեղական օրգաններին լինել վճռական և չխնայել անգամ ծծկեր երեխաներին։ Այսպես, օրինակ, թյուրքական կառավարության ներքին գործերի մինիստր Թալեաթ բեյը 1915 թ. սեպտեմբերին Հալեպի կուսակալին հեռագրում էր, թե պետք է ոչնչացնել ամբողջ հայ բնակչությունը, «չպետք է թողնել անգամ օրորոցի մանուկներին»։ Ջարդարարները գործում էին ամենաարարարոս, ամենաղազրելի միջոցներով։ Կորցնելով իրենց մարդկային էությունը, նրանք գետերն էին թափում կամ հողում թաղում երեխաներին, սրախողխող անում հղի կանանց, աճուրդի հանում կամ սպանում աղջիկներին։ Ջարդարարները անզեն բնակչությանը այրում էին փակ շենքերում, խարույկների վրա, կտրում էին շատերի քթերը, ականջները, հանում աչքերը։ Ականատեսներն ամենայն սարսափով ու զարհուրանքով են նկարագրում հայկական այդ կոտորածները։

Արևմտահայ բնակչության լայն մասսաների հետ միասին կոտորածի ենթարկվեց նաև արևմտահայ ինտելիգենցիան։ Գազանաբար սպանվեցին արևմտահայ ինտելիգենցիայի շատ նշանավոր դեմքեր, այդ թվում ականավոր գրող Գրիգոր Զոհրապը, տաղանդավոր բանաստեղծ Դանիել Վարուժանը և գիտության ու կուլտուրայի բազմաթիվ այլ ներկայացուցիչներ։ Հայ հանճարեղ կոմպոզիտոր Կոմիտասը, որ չսպանվեց միայն պատահական դիպվածի շնորհիվ, կատարվող վայրագությունների ու սարսափների ազդեցության տակ հոգեկան հիվանդություն ստացավ։

Հայկական կոտորածները, որոնք սկիզբ առան 1914 թ. վերջերից, շարունակվեցին ամբողջ 1915 և 1916 թթ. ընթացքում։ Կոտորածներ տեղի ունեցան Արևմտյան Հայաստանի բոլոր մասերում, բոլոր քաղաքներում ու գյուղերում։ Հայկական ջարդեր կազմակերպվեցին նաև Թյուրքիայի հայաբնակ բոլոր վայրերում։ 1915—1916 թթ. հայկական ջարդերի ժամանակ սպանված հայերի թիվը կազմում է մոտ մեկ միլիոն։ Այդ նույն տարիներին թյուրքական կառավարությանը հաջողվեց բռնի կերպով թյուրքացնել մի քանի հարյուր հազար հայերի։

Հայկական կոտորածի գլխավոր կազմակերպիչներն էին՝ թյուրքական

կառավարության ռազմական մինիստր Էնվեր փաշան, ներքին գործերի մինիստր Թալեաթ բեյը և զորահրամանատար Ջեմալ փաշան։

Կոտորածների հեղինակներին ամեն կերպ հովանավորում էր կայզերական Գերմանիան, նպատակ ունենալով զավթել ամբողջ Մերձավոր Արևելքը, նա կողմնակից էր հայկական ջարդերին, որովհետև արևմտահայերի ազատագրական ձգտումները խոչընդոտ էին հանդիսանում գերմանական իմպերիալիստների հափշտակողական ծրագրերի իրականացման գործին։

Գերմանական կառավարությունը միաժամանակ հույս ուներ՝ հայերի տեղահանությունների միջոցով էժանագին բանվորական ուժ ստանալ Բեռլին — Բաղդադ երկաթուղու շինարարության համար։ Գերմանական իմպերիալիստները ամեն կերպ դրդում էին թյուրքական կառավարությանը կազմակերպելու հայերի ջարդն ու տարագրությունը։ Ավելին։ Գերմանիայի պաշտոնական ներկայացուցիչները Թյուրքիայում, ինչպես և գերմանական սպաները, մասնակցություն էին ունենում հայկական ջարդերի կազմակերպման մեջ։

Թյուրքական վանդալիզմի անպաշտպան զոհերի նկատմամբ փարիսեցիական, ռեակցիոն գիրք էին բռնել Ամերիկայի Միացյալ Նահանգները։ Չնայած առանձին ամերիկյան պաշտոնական անձանց կեղծ ու երկերեսանի բողոքներին, ամերիկյան կառավարությունը ոչ մի միջոց ձեռք չառավ սանձահարելու մարդասպաններին, թեև այդ տարիներին, դեռևս չմասնակցելով պատերազմին և չեզոք լինելով, նա ուներ այդ հնարավորությունը։ Ավելին։ Պետական դեպարտամենտը փորձում էր մոլորության մեջ գցել հասարակական կարծիքը՝ հայտարարելով եղած փաստերին հակառակ, թե հայերի մասսայական կոտորածների մասին տարածված լուրերը չեն համապատասխանում իրականությանը։ Մինչ թյուրքական ենիչերիներն անխնա կոտորում էին հայերին, Ամերիկայի կառավարող շրջանները ամրապնդում էին իրենց արտաքին առևտրական, տնտեսական և քաղաքական կապերը թյուրքական դահիճների կառավարության հետ։

Ինքնապաշտպանական կռիվներ։ Երբ սկսվեցին հայերի մասսայական ջարդերը, Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակությունը ինքնապաշտպանություն կազմակերպեց և, որտեղ այդ հնարավոր էր, զենքը ձեռքին պաշտպանեց իր կյանքն ու պատիվը։ Հերոսաբար պաշտպանվեց Վանի, Զեյթունի, Շապին-Գարահիսարի և մի շարք ուրիշ շրջանների բնակչությունը։

Առանձնապես հաջող անցավ Վանի բնակչության ինքնապաշտպանությունը։ 1915 թ. ապրիլի սկզբներին Վանի կուսակալ Ջևդեդ բեյը, կատարելով թյուրքական կառավարության հրահանգը, պատրաստություններ տեսավ հայկական կոտորածներ կազմակերպելու համար։ Վանի հայ բնակչությունը, իմանալով այդ մասին, դիմեց նախազգուշական միջոցների։ Ապրիլի 7-ին թյուրքական զորքերը հարձակում գործեցին քաղաքի վրա։ Վանի հայ բնակչության զինված ջոկատները ետ մղեցին հարձակումը։ Այդ օրվանից սկսվեցին Վանի ինքնապաշտպանական կռիվները։ Վանը պաշարվեց։ Պաշարվածները որոշեցին կռվել մինչև վերջին հնարավորությունը։ Ինքնապաշտպանության դուրս էին եկել բոլորը՝ տղամարդիկ, կանայք, երեխաները։ Բոլորին համակել էր մի միտք՝ լավ է մեռնել, քան հանձնվել ջարդարարներին։ Վանի զինված հայ բնակչությունը կռվում էր մեծ ոգևորությամբ ու արիությամբ։ Այդ է պատճառը, որ թշնամու բոլոր գրոհներն ապարդյուն անցան, չնայած թյուրքական զորքերը գերազանցում էին թե՛ քանակով և թե՛ ռազմական տեխ-

նիկայով։ Վանը պաշտպանվեց հերոսաբար։ Ինքնապաշտպանական կռիվները տևեցին մինչև մայիսի 6-ը, երբ ռուսական զորքերը մտան Վան, իսկ Ջևդեդ բեյը փախուստի դիմեց։ Այսպիսով, մոտ մեկ ամիս տևող հերոսական ինքնապաշտպանական կռիվների շնորհիվ Վանի բնակչությունն ազատվեց թյուրքական կոտորածներից։

Հաջողությամբ վերջացավ նաև Շատախի հայ բնակչության ինքնապաշտպանությունը։ Սակայն, անհաջող ելք ունեցան Զեյթունի, Շապին-Գարահիսարի և մի շարք այլ վայրերի բնակչության ինքնապաշտպանական հերոսական կռիվները։

Հայ գաղթականությունը։ 1915—1916 թթ. հայկական մասսայական կոտորածների ժամանակ թյուրքական կառավարությունը բռնի կերպով Միջագետք և Սիրիա գաղթեցրեց մոտ 600 000 հայ բնակչություն։ Այս գաղթական հայության մի մասը կոտորվեց թյուրք ջարդարարների կողմից նույն 1916 թ. ընթացքում և քաղցի զոհ դարձավ 1917—1918 թթ.։ Մնացած մասը բնակություն հաստատեց Սիրիայում, Միջագետքում, Եվրոպական երկրներում և Ամերիկայում։ Օտար երկրներում տեղավորված գաղթական հայության համար ամենուրեք ստեղծվեցին տնտեսական և իրավական ծանր պայմաններ։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմտահայերի մի մասին հաջողվեց ռուսական զորքերի օգնությամբ ազատվել կոտորածներից, գաղթել Կովկաս և մասնավորապես Արևելյան Հայաստան։ Արևմտահայերի մեծ գաղթը դեպի Կովկաս տեղի ունեցավ 1914 թ. դեկտեմբերին և 1915 թ. ամառը։ Հաջորդ ամիսներին, 1914 — 1916 թթ. ընթացքում, Կովկաս գաղթեց մոտ 350 000 մարդ։ Գաղթականական այս մասսան տեղավորվեց Արևելյան Հայաստանում, ապա՝ Վրաստանում, Ադրբեջանում, Հյուսիսային Կովկասում և այլուր։ Ջստանալով նյութական շոշափելի օգնություն, գաղթականները ծանր զրկանքներ կրեցին։

3. ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1914—1916 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Աշխատավորների ծանր վիճակը։ Համաշխարհային պատերազմի ծանրությունը խիստ զգացվեց ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես էլ Արևելյան Հայաստանում։ Պատերազմը կործանարար ազդեցություն թողեց ժողովրդական տնտեսության վրա։ Աշխատավոր ձեռքերը բանակ կանչվեցին։ Խիստ կրճատվեց ցանքերի տարածությունը, ընկավ անասունների գլխաքանակը, դադարեցին գործելուց արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ, պարենային ճգնաժամը սուր կերպարանք ստացավ, մթերքները թանգացան առասպելական չափերով։

Տնտեսական փլուզման ու ճգնաժամի պայմաններում չափազանց ծանրացավ աշխատավորական մասսաների վիճակը։ Բանվորների տնտեսական դրությունը կրիտիկական էր։ Անելանելի վիճակ ստեղծվեց նաև գյուղացիների համար։ Լռվա գյուղերում տիրող դրության մասին մի գյուղացի «Պայքար» թերթում տպագրված իր նամակում ասում էր, թե գյուղերը անմարդաբնակ են դարձել, չկա աշխատող ուժ, տնտեսությունը լրիվ քայքայված է, հարկերը և տուրքերը խեղդում են գյուղացիներին, ահռելի սովի վտանգը

սպառնում է բոլորին և այլն։ Առանձնապես կատաստրոֆիկ դրության մեջ ընկան հայկական կոտորածների ժամանակաշրջանում Արևելյան Հայաստան գաղթած արևմտահայ բազմահազար գաղթականները, որոնք զրկված լինելով գոյության պահպանության բոլոր միջոցներից, մեռնում էին սովից ու տարափոխիկ հիվանդություններից։ Սովն աստիճանաբար ավելի ու ավելի լայն ծավալ էր ստանում։

Տնտեսական ճգնաժամի խորացմանը զուգընթաց օրեցօր աճում էր բանվորների, գյուղացիների ու զինվորների զայրույթը ցարական կարգերի դեմ։ 1916 թ. Երևանում, Ալեքսանդրոպոլում, Էջմիածնում և Հայաստանի մի շարք այլ քաղաքներում ու կենտրոններում տեղի ունեցան ցույցեր և ելույթներ ցարական կառավարության դեմ։ Հակացարական շարժումները գնալով աճում և լայն ծավալ էին ստանում ինչպես ամբողջ ռուսական կայսրության մեջ, այնպես էլ նրա մի մասը կազմող Արևելյան Հայաստանում։

Կոմունիստների աշխատանքը Հայաստանում պատերազմի տարիներին։ Սկսելով առաջին համաշխարհային պատերազմը, իմպերիալիստական պետություններն աշխատում էին ամեն կերպ թաքցնել այդ պատերազմի իսկական նպատակը, նրա իմպերիալիստական, զավթողական էությունը։ Իմպերիալիստները հանդես էին գալիս կեղծ հայրենասիրական քարոզներով, խաբում էին բանվորական ու գյուղացիական մասսաներին և նրանց դարձնում թնդանոթի միս։ Բանվորա-գյուղացիական մասսաներին խաբելու գործում իմպերիալիստներին մեծ ծառայություն մատուցեցին II Ինտերնացիոնալի օպորտունիստները և ազգային բուրժուա-նացիոնալիստական պարտիաներն ու կազմակերպությունները։

Ինչպես միշտ, այնպես էլ պատերազմի տարիներին, պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը բարձր պահեց միայն կոմունիստների (բոլշևիկների) պարտիան՝ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ։ Հավատարիմ մնալով բանվոր դասակարգի և աշխատավորության շահերին՝ նա անհաշտ պայքար ծավալեց իմպերիալիստների ու նրանց գործակալ նացիոնալիստական և սոցիալ-շովինիստական պարտիաների դեմ։ Բացահայտելով պատերազմի իսկական նպատակները, կոմունիստները կոչ արին բոլոր երկրների բանվորական-գյուղացիական մասսաներին՝ գրոհի ելնել տիրող կարգերի դեմ և իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիական պատերազմի։

Պատերազմի տարիներին ցարական կառավարությունը խիստ հալածանք սկսեց կոմունիստների դեմ. այդ հալածանքների հետևանքով կոմունիստական շատ կազմակերպություններ քայքայվեցին, վերացան, մնացածները խիստ ընդհատակ անցան, պարտիայի բազմաթիվ ղեկավար գործիչներ բանտարկվեցին և աքսորվեցին։ Սակայն, չնայած այդ բոլորին, կոմունիստական պարտիան խոշոր աշխատանք կատարեց մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածման, բանվորա-գյուղացիական մասսաներին ցարիզմի դեմ ռևոլյուցիոն գրոհի դուրս բերելու գործում։

Չնայած բոլոր հալածանքներին, Անդրկովկասում և Հայաստանում ևս կոմունիստները մեծ աշխատանք կատարեցին բանվորա-գյուղացիական մասսաների մեջ ինտերնացիոնալիզմի և ռևոլյուցիոն պայքարի գաղափարները տարածելու ուղղությամբ։ Հաղթահարելով բոլոր դժվարությունները՝ անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունները համառորեն պայքարում

էին հանուն Կովկասի ժողովուրդների եղբայրական համերաշխության և ռևոլյուցիոն ջանքերի միավորման։

Անդրկովկասի կոմունիստները եռանդուն աշխատանք ծավալեցին հատկապես կովկասյան ռազմաճակատի զորամասերում։ Պատերազմի հենց առաջին օրերից բոլշևիկյան պրոկլամացիաներն ու թռուցիկները լայն տարածում գտան զորքի ու Ալեքսանդրոպոլի, Կարսի, Երևանի և այլ շրջանների աշխատավորության մեջ։ Իր կոչերից մեկում 1914 թ. աշնանը Անդրկովկասի բոլշևիկները դիմելով բանակին ու Կովկասի աշխատավոր մասսաներին, գրում էին՝ «Ժողովրդի թշնամին — դա ցարական կառավարությունն է... Եթե դուք ուզում եք, որ պատերազմներ չլինեն, որ ձեզ չկտրեն ձեր ընտանիքներից և հարազատ օջախից, եթե դուք գտնում եք, որ ժողովրդի բախտը խաղաղ, ազատ կյանքի մեջ է, ապա ոտքի ելեք ցարական կառավարության դեմ... Պատերազմը վերածեք ժողովրդի ազատագրության համար մղվող պայքարի»։

Վ. Ի. Լենինի ցուցումով՝ 1915 թ. հոկտեմբերին Ստ. Շահումյանի ղեկավարությամբ Բաքվում հրավիրվեց Կովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների կոնֆերանս։ Այդ կոնֆերանսը խնդիր էր դրել կոմունիստական կազմակերպությունների առաջ՝ կազմակերպել աշխատավոր մասսաներին, որպեսզի զինված պայքարի միջոցով տապալեն ինքնակալությունը։ Մերկացնելով պատերազմի իմպերիալիստական բնույթը, կոնֆերանսը ելնելով Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի դրույթներից, իր որոշումների մեջ գրում էր.

«Գլխավոր դասը, որ պիտի ժողովուրդները քաղեն այս սարսափելի աղետից, այն է, որ միմիայն կապիտալիստական կարգերի ոչնչացումը... և այդ կարգերի փոխարինումը սոցիալիստականով կարող է ժողովուրդներին փրկել ինքնաոչնչացումից և մարդկությունը դուրս բերել հետագա առաջադիմության ուղու վրա։ Այստեղից Եվրոպայի բոլոր սոցիալիստական պարտիաների հիմնական խնդիրը մենք ներկայումս համարում ենք սոցիալիստական ռևոլյուցիայի ուժեղ պրոպագանդը»։

Պատերազմի տարիներին ռևոլյուցիոն խոշոր աշխատանք կատարեցին նաև Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները։ Առանձնապես աշխույժ գործունեություն ծավալեցին Ալեքսանդրոպոլի, Կարսի, Սարիղամիշի խմբակները, որոնցում ակտիվ կերպով աշխատում էին կոմունիստներ Ստեփան Ալավերդյանը, Պյոտր Արվելաձեն, Բագրատ Ղարիբջանյանը, Հովհաննես Սարուխանյանը և ուրիշները։ 1915 թվականի դեկտեմբերից Թիֆլիսում սկսեց լույս տեսնել «Պայքար» լրագիրը։ Թերթը վճռական պայքար էր մղում պատերազմի, նացիոնալիզմի-շովինիզմի դեմ, տարածում էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարները, կոչ էր անում մասսաներին պայքարի ելնել ցարիզմի ու կապիտալիզմի դեմ։

Բոլշևիկյան գաղափարների պրոպագանդայի ուղղությամբ Հայաստանում և Անդրկովկասում մեծ աշխատանք կատարեցին բոլշևիկյան պարտիայի ականավոր գործիչներ՝ Ստեփան Շահումյանն ու Անաստաս Միկոյանը։ Նրանք միշտ ելույթներ էին ունենում հայ բուրժուա-ազգայնական պարտիաների և հատկապես դաշնակցության դեմ։ Ստ. Շահումյանն ու Ա. Միկոյանն անխնա մերկացնում էին հայկական բուրժուական նացիոնալիզմը և շովինիզմը։

Պարզաբանելով պատերազմի իմպերիալիստական, ռեակցիոն բնույթը, Հայաստանի բոլշևիկներն ընդգծում էին, որ հայ ժողովրդի բախտը, նրա

աղատագրումը կապված են պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակի հետ Ռուսաստանում։

Բոլշևիկյան պրոպագանդան կարևոր դեր խաղաց ժողովուրդների բարեկամության ամրապնդման և ռևոլյուցիոն պայքարի գաղափարների տարածման գործում։

1916 թ. մարտին ցարական ոստիկանությունը ձերբակալեց և նույն թվականի վերջերին Սարատով աքսորեց Ստեփան Շահումյանին։ 1916 թ. սեպտեմբերի 11(24)-ին Սիբիրի Կրասնոյարսկ քաղաքում վախճանվեց Սուրեն Սպանդարյանը։ Ս. Սպանդարյանի մահը ծանր կորուստ էր բոլշևիկյան պարտիայի համար։

Անաստաս Միկոյան։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Անդրկովկասում և Հայաստանում կոմունիստական լայն պրոպագանդա ծավալեց Անաստաս Միկոյանը։ Ա. Միկոյանը ծնվել է 1895 թ. Ալավերդու շրջանի Սանահին գյուղում՝ Ալավերդու պղնձահանքերի բանվորի ընտանիքում։

Սկզբնական կրթությունն ստացել է հայրենի գյուղում, ապա սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։ Իր ռևոլյուցիոն գործունեությունը նա սկսել է դեռևս աշակերտական տարիներից։ 1913 թ. ընկեր Միկոյանը Ներսիսյան դպրոցում կազմակերպում է մարքսիստական խմբակ, որն ուսումնասիրում է մարքսիզմը և պայքար մղում բուրժուա-նացիոնալիստական տարրերի դեմ։

1915 թ. ընկեր Միկոյանն ընդունվում է բոլշևիկյան պարտիայի մեջ։ Այդ նույն թվականին նա էջմիածնում՝ Գևորգյան հեմարանում, որտեղ սովորում էր, կազմակերպում է երիտասարդ բոլշևիկների մի խմբակ և մարտական պայքար է ծավալում հայ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների ու հոսանքների դեմ։ Բանավոր պրոպագանդայի հետ միասին նա ծավալում է նաև գրավոր պրապագանդա։ 1916 թ. Ա. Միկոյանը «Պայքար» թերթում մի շարք հոդվածներ է զետեղում դաշնակցության դեմ։ Նույն թվականին Միկոյանը, որպես էջմիածնի ուսանողական բոլշևիկյան խմբակի պատգամավոր, մասնակցում է Քութայիսում հրավիրված մարքսիստական խմբակների Անդրկովկասյան առաջին անլեգալ կոնֆերենցիայի աշխատանքներին։ Պատերազմի տարիներին արդեն Ա. Միկոյանը Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների և ռևոլյուցիոն շարժման ականավոր գործիչներից մեկն էր։

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՌԻՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

✓ Փետրվարյան ռևոլյուցիան։ 1917 թ. փետրվարի 27-ին (մարտի 12-ին) Պետրոգրադում տեղի ունեցավ բանվորների և զինվորների զինված ապստամբությունը ինքնակալության դեմ։ Ապստամբությունը հաղթանակեց։ Տապալվեց ժողովրդին ատելի ցարական կառավարությունը։ Ռուսաստանում կատարվեց բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիա։

Ռևոլյուցիայի հենց առաջին օրերին ստեղծվեցին բանվորների և զինվորների դեպուտատների Սովետները։ Սակայն Սովետների գլուխն անցան բուրժուազիայի գործակալները՝ մենշևիկներն ու էսերները։ Օտվելով նրանց ծառայությունից՝ բուրժուազիան կազմեց իր այսպես կոչված, ժամանակա-

վոր կառավարությունը։ Առաջ եկավ երկիշխանություն՝ մի՛ կողմից, բուրժուազիայի դիկտատուրա ի դեմս ժամանակավոր կառավարության, մյուս կողմից՝ պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրա ի դեմս բանվորների ու զինվորների դեպուտատների Սովետների։ Սակայն երկիշխանությունը երկար չտևեց։ Մենշևիկների ու էսերների դավաճանության հետևանքով իշխանությունն անցավ բուրժուազիայի ձեռքը։

Ինչպես միշտ, այնպես էլ Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի ժամանակաշրջանում, բանվորական և աշխատավորական մասսաների իսկական առաջնորդի դերում հանդես եկավ բոլշևիկյան պարտիան։ Ռևոլյուցիայի օրերին բանվորների ու զինվորների ապստամբության կազմակերպիչներն ու ղեկավարները բոլշևիկներն էին։ Ռևոլյուցիայից հետո՝ երբ իշխանության գլուխն անցավ բուրժուազիան, կոմունիստները Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ կազմակերպեցին լայն պրոպագանդա՝ պարզաբանելով մասսաներին, որ բուրժուական ժամանակավոր կառավարությունը չի լուծի ժողովրդին հուզող և ոչ մի հարց և որ դրա համար անհրաժեշտ է, որպեսզի ամբողջ իշխանությունն անցնի Սովետների ձեռքը, անհրաժեշտ է խորտակել կապիտալիզմը։

Հայաստանը Փետրվարյան ռևոլյուցիայի ժամանակաշրջանում։ Անդրկովկասի բանվորները, գյուղացիները և զինվորները ինքնակալությունը տապալելու լուրը մեծ ոգևորությամբ ընդունեցին։ Ամենուրեք տեղի ունեցան քաղաքական ցույցեր ու միտինգներ։ Ռևոլյուցիոն մասսաների ճնշման տակ վերացան ցարական իշխանության տեղական օրգանները Անդրկովկասում։

Սակայն բուրժուական ժամանակավոր կառավարությունը՝ հենվելով կոնտրռևոլյուցիոն ուժերի և ամենից առաջ վրացական մենշևիկների, էսերների, դաշնակների ու մուսավաթիստների վրա, Անդրկովկասը իր իշխանության տակ պահեց։ Երկրամասը կառավարելու համար նա ստեղծեց, տյսպես կոչված, Անդրկովկասյան Հատուկ կոմիտե (Օզակոմ)։ Վերջինս սկսեց իր գործունեությունը որպես նոր իշխանություն, որպես Ժամանակավոր կառավարության օրգան։ Նրա կազմի մեջ մտան բուրժուազիայի ու կալվածատերերի ներկայացուցիչները։ Կոմիտեի նախագահ նշանակվեց կադետ Խալամովը։

Անդրկովկասում և Հայաստանում ևս ռևոլյուցիայի առաջին իսկ օրերին կազմակերպվեցին բանվորների ու զինվորների դեպուտատների Սովետներ։ Բանվորական ու զինվորական դեպուտատների Սովետներ կազմակերպվեցին Երևանում, Ալեքսանդրոպոլում, Սարիղամիշում (որտեղ բավականաչափ զորք կար), Կարսում, Նոր Բայազետում և ուրիշ վայրերում։ Հիմնվեցին նաև գյուղացիական դեպուտատների Սովետներ։

Հայաստանում ստեղծված Սովետներն իրենց ձեռքն առան մենշևիկները, էսերներն ու դաշնակները, որոնք ամեն կերպ պաշտպանում էին բուրժուական ժամանակավոր կառավարությանը։

Այսպիսով, Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից հետո ինչպես ամբողջ Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում, իշխանության գլուխ անցան շահագործող դասակարգերը՝ բուրժուազիան ու կալվածատերերը։

Ժողովրդական մասսաների դրությունը։ Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիան էական փոփոխություն չմտցրեց ժողովրդական մասսաների դրության մեջ։ Նա չլուծեց պրոլետարիատի և գյուղացիության

առաջադրած հիմնական խնդիրները՝ հողի, հացի և խաղաղության հարցերը։ Բուրժուական ժամանակավոր կառավարությունը շարունակում էր պատերազմը, ամրացնում էր կապիտալիստների ու կալվածատերերի տիրապետությունը, հարձակման էր անցնում բանվորների, գյուղացիների դեմ։ Ժամանակավոր կառավարության քաղաքականությունը խորը բողոք և զայրույթ առաջացրեց լայն մասսաների մեջ։ Ժամանակավոր կառավարության դեմ թե՛ քաղաքում և թե՛ գյուղում սկսվեցին լուրջ խմորումներ, որոնք գնալով ավելի խորանում, ծավալվում և ռևոլյուցիոն լայն շարժման բնույթ էին ստանում։

Փետրվարյան ռևոլյուցիան էական փոփոխություններ չմտցրեց նաև Անդրկովկասի ժողովրդական մասսաների դրության մեջ։ «Փետրվարյան ռևոլյուցիան, —գրում էր Ի. Վ. Ստալինը 1918 թ. մարտին,— էական փոփոխություններ չմտցրեց երկրի աշխատավոր դասակարգերի դրության մեջ... Ամբողջ իշխանությունը գտնվում էր ունևոր դասակարգի ձեռքում...»։

Հենվելով Անդրկովկասի բուրժուական պարտիաների վրա, ժամանակավոր կառավարությունը Անդրկովկասում ևս վարում էր բուրժուական, հակաժողովրդական քաղաքականություն։ Ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում չէր լուծվում ագրարային հարցը, ոչ մի միջոց ձեռք չէր առնվում աշխատավորությունը սովի վտանգից փրկելու համար, շարունակվում էր պատերազմը, շարունակվում էր ժողովրդական տնտեսության քայքայումը։ Չէր լուծվում նաև ազգային հարցը։ Ժողովրդական լայն մասսաների դրությունը գնալով ավելի ու ավելի էր ծանրանում։

Բուրժուական ժամանակավոր կառավարության և նրա գործակալները հանդիսացող էսերների, վրացական մենշևիկների, դաշնակցականների ու մուսավաթականների հակաաշխատավորական քաղաքականությունը մի կողմից և ռուսական պրոլետարիատի ու գյուղացիության աճող ռևոլյուցիոն շարժումները մյուս կողմից՝ ոտքի հանեցին նաև Անդրկովկասի բանվորներին, զինվորներին ու գյուղացիներին։ Արդեն 1917 թ. գարնան և ամառվա ամիսներին Բաքվում, Թիֆլիսում, Արևմտյան Վրաստանում և Անդրկովկասի մի շարք այլ մասերում տեղի ունեցան բանվորական գործադուլներ, զինվորական ցույցեր և գյուղացիական շարժումներ։

1917 թ. գարնան և ամառվա ամիսներին գործադուլներ և ցույցեր տեղի ունեցան նաև Հայաստանի մի շարք կենտրոնական վայրերում՝ Երևանում, Ալեքսանդրոպոլում, Կարսում, Ալավերդում և այլն։ Բոլշևիկյան ռևոլյուցիոն պրոպագանդան միաժամանակ մեծ ծավալ ստացավ նաև Հայաստանում գտնվող զորքերի մեջ։ Այսպիսով, Անդրկովկասում ևս աշխատավորական մասսաները կանգնեցին ռևոլյուցիոն պայքարի նոր ուղու վրա։

Բոլշևիկների պայքարը սոցիալիստական ռևոլյուցիայի համար։ Փետրվարյան ռևոլյուցիայից հետո Կոմունիստական պարտիան պայքար սկսեց սոցիալիստական ռևոլյուցիայի համար։ Սոցիալիստական ռևոլյուցիայի համար մղվելիք պայքարի հանճարեղ պլանը մշակվեց Լենինի հռչակավոր «Ապրիլյան թեզիսներում», բոլշևիկների Ապրիլյան կոնֆերանսում և ապա պարտիայի VI համագումարում։

Փետրվարից հետո Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպություններին անմիջականորեն ղեկավարում էին Ստեփան Շահումյանը, Այյոշա Ջափարիձեն, Մեշադի Ազիզբեկովը և Անաստաս Միկոյանը։ Մեծ աշխատանք կատարվեց հատկապես Բաքվում, Թիֆլիսում և Անդրկովկասի մյուս վայրերում

գտնվող զորքերի մեջ։ Աշխույժ գործունեություն ծավալեցին նաև Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները։ Փետրվարյան ռևոլյուցիայից հետո վերականգնվեցին Նոր Բայազետի, Ղափանի, Դիլիջանի, Շամշադինի և մի շարք այլ վայրերի բոլշևիկյան կազմակերպությունները։ Բոլշևիկյան նոր խմբակներ հիմնվեցին Ալավերդում և Լոռում։ Ուժեղացան և ամրացան բոլշևիկյան կազմակերպությունները Ալեքսանդրոպոլում, Սարիղամիշում և Երևանում։ Մեծ աշխատանք տարվեց կոմունիստական մամուլը մասսաների մեջ տարածելու ուղղությամբ։ Բոլշևիկների Ալեքսանդրոպոլի կոմիտեն կազմակերպեց բոլշևիկյան մամուլի առաքման դրասենյակ։ Կոմունիստական մամուլի շատ օրգաններ և այդ թվում «Պրավդա»-ն, «Կավկազսկի ռաբոչի»-ն, չնայած եղած արգելքներին, տարածվում էին Ալեքսանդրոպոլում, Կարսում, Սարիղամիշում, Երևանում և Կովկասյան ռազմաճակատի ռուսական զորքերի մեջ։ 1917 թ. մարտին Թիֆլիսում, Ստ. Շահումյանի, Անաստաս Միկոյանի և Ասքանազ Մռավյանի նախաձեռնությամբ, սկսեց լույս տեսնել բոլշևիկյան «Բանվորի կռիվ» հայերեն թերթը։ Նույն թվականի մայիսին Բաքվում, Շահումյանի և Միկոյանի խմբագրությամբ, լույս տեսավ բոլշևիկյան «Սոցիալ-դեմոկրատ» հայերեն թերթը։ Բոլշևիկյան պարբերական այս մամուլը մեծ դեր խաղաց բուրժուա-նացիոնալիստական պարտիաներին մերկացնելու, աշխատավորական մասսաների մեջ բոլշևիկյան ռևոլյուցիոն գաղափարները տարածելու գործում։

Այսպիսով, Փետրվարյան ռևոլյուցիայից հետո ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում Կոմունիստական պարտիան Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ լայն պայքար ծավալեց իշխանությունը բանվորների և գյուղացիների Սովետներին հանձնելու, սոցիալիստական ռևոլյուցիա նախապատրաստելու համար։

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ 1900—1917 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Դպրոց, գիտություն։ 20-րդ դարի սկզբներին հայկական կուլտուրան, չնայած տիրող դաժան ռեժիմին, զգալի վերելք ապրեց։ Կուլտուրայի զարգացումը տեղի ունեցավ, հիմնականում, արևելահայության մեջ։ Այս շրջանում սուլթանական կառավարության, ինչպես և նրան հաջորդող երիտասարդ թյուրքերի կառավարության հայաջինջ քաղաքականությունը, սիստեմատիկ բնույթ ստացած հայկական կոտորածներն անհնարին էին դարձնում կուլտուրայի քիչ թե շատ զարգացումը արևմտահայության մեջ։

Դարասկզբին արևելահայ դպրոցական գործի զարգացումը ամեն կերպ արգելակվում, կասեցվում էր ցարական կառավարության կողմից։ Կովկասի կառավարչապետ Գոլիցինի հայահալած քաղաքականության հետևանքով փակվեց հայ ազգային դպրոցների մի զգալի մասը։ Դրությունը զգալի չափով փոխվեց ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին։ Օրեցօր աճող ռևոլյուցիոն շարժումների ճնշման տակ ցարական կառավարությունը որոշ զիջումներ արեց, որի հետևանքով էլ վերաբացվեց հայկական տարրական դպրոցների մի մասը։ 1907 թվականին հայկական բոլոր դպրոցներում ընդգրկված աշակերտների թիվն ամբողջ Կովկասում կազմում էր 20 000։

Ռեակցիայի տարիներին նոր հալածանքներ ու հետապնդումներ սկսվե-

գին հայկական դպրոցների նկատմամբ։ Նորից փակվեցին հայկական բազմաթիվ դպրոցներ։

Դպրոցական գործը խիստ անկում ապրեց հատկապես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։ Ժողովրդական տնտեսության քայքայման և պատերազմի մյուս արհավիրքների հետևանքով փակվեց դպրոցների մեծ մասը։ Պատերազմի տարիներին փակվեցին և վերացան գրեթե բոլոր արևմտահայ դպրոցները։

Հայկական դպրոցները, ընդհանրապես, գտնվում էին չափազանց անմխիթար վիճակում, նրանք նյութապես ապահովված չէին, չկային որակյալ ուսուցչական կադրեր, չկային համապատասխան դասագրքեր ու գրենական պիտույքներ, դպրոցներում դեռ իշխում էին դասավանդման հին ձևերն ու մեթոդները։

Հայ իրականության մեջ գիտական միտքը, ինչպես 19-րդ դարում, այնպես էլ 20-րդ դարի սկզբներին, զարգացավ գերազանցապես հայագիտության գծով։ Հանդես եկան մի շարք ականավոր հայագետներ, որոնք մեծ աշխատանք կատարեցին հայ ժողովրդի պատմության, լեզվի ու գրականության հարցերի մշակման ու լուսաբանման բնագավառում։ Հայոց լեզվի ու գրականության գծով առանձնապես աչքի ընկնող դեր խաղացին Մանուկ Աբեղյանը (1865—1944) և Հրաչյա Աճառյանը (1876—1953), բանասիրության բնագավառում՝ Ստեփան Մալխասյանը (1857—1947), պատմության գծով՝ Լեոն (Առաքել Բարխանյանը, 1860—1932) և Հակոբ Մանանդյանը (1873—1952), աղդագրության և հնագիտության ասպարեզում՝ Երվանդ Լալայանը (1864—1931)։

Գրականություն։ 20-րդ դարի սկզբներին իր հետագա զարգացումն ապրեց հայ գրականությունը։ Այս ժամանակաշրջանում հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը (1869—1923) ստեղծեց իր մի շարք լավագույն գործերը։

Թումանյանը գրել է բանաստեղծություններ, պոեմներ, բալլադներ, հեքիաթներ, պատմվածքներ, կատարել է թարգմանություններ և այլն։ Թումանյանի գրական ժառանգության մեջ գեղարվեստական մեծ արժեք են ներկայացնում նրա պոեմները՝ «Լոռեցի Սաքոն», «Անուշը», «Թմբկաբերդի առումը», «Սասունցի Դավիթը», «Հառաչանքը», բազմաթիվ բանաստեղծությունները, պատմվածքները և այլն։

Թումանյանի ստեղծագործությունը խորապես դեմոկրատական է, ժողովրդական։ Բանաստեղծը մեծ վարպետությամբ պատկերել է հայ աշխատավոր գյուղացու կյանքը, նրա տանջանքն ու վիշտը, ճշմարտացի արտահայտել է նրա ձգտումներն ու ակնկալությունները։ Նա ոգևորությամբ գովերգել է ստեղծագործական աշխատանքը, ժողովուրդների բարեկամությունը, բողոքել է սոցիալական անհավասարության և ազգային ճնշման դեմ։ Ժողովրդի հետ սերտ կապված հանճարեղ բանաստեղծը ողջունեց Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան։ Թումանյանը լավ ըմբռնեց այն ճշմարտությունը, որ հայ ժողովրդի բախտը կապված է սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի բախտի հետ։

Թումանյանի լեզուն հարուստ է, պատկերավոր, միաժամանակ պարզ ու հասկանալի։ Մեծ բանաստեղծը լայնորեն օգտագործել է ժողովրդական բանահյուսությունը։ Թումանյանի արվեստը վեհ է ու հմայիչ։

20-րդ դարի սկզբներին իր գրական գործունեությունը ծավալեց մեծանուն

բանաստեղծ Ավետիք Իսահակյանը (1875)։ Իսահակյանը գրել է լիրիկական երգեր, պոեմներ, լեգենդներ, առակներ, պատմվածքներ և այլն։ Նրա երկերը՝ խորապես ժողովրդական դեմոկրատական են։ Իր ստեղծագործության մինչսովետական շրջանում բանաստեղծը արտահայտել է հայ ժողովրդի ազատագրական ձգտումները, բողոքը տիրող կարգերի ու սոցիալական անարդարության դեմ, ապրել է ժողովրդի շահերով, մեծ ցավով ու վշտով պատկերել է շահագործվող մասսաների ծանր կյանքը։ Սակայն Իսահակյանի այդ նույն ժամանակաշրջանի պոեզիային հատուկ են հոռետեսության և անհատապաշտության մոտիվները, որոնցից նա ազատագրվեց միայն սովետական շրջանում։

Իսահակյանը լայնորեն օգտագործեց ժողովրդական բանահյուսությունը և իր ստեղծագործության մեջ հավատարիմ մնաց նրան։ Իսահակյանի արվեստը հմայիչ և հուզիչ է։ Իր բարձր գեղարվեստական ստեղծագործություններով բանաստեղծը Հովհաննես Թումանյանի հետ միասին հարստացրեց ու նոր աստիճանի բարձրացրեց հայկական պոեզիան։

Դարի սկզբներին գրական ասպարեզ իջավ տաղանդավոր բանաստեղծ Վահան Տերյանը (1885—1920)։ Մինչև 1917 թվականը Տերյանը կրում էր սիմվոլիզմի ազդեցությունը։ Նրա ստեղծագործության մեջ բավականաչափ տեղ գտան հոռետեսության և ինդիվիդուալիզմի մոտիվները։ Սակայն բանաստեղծն արտահայտել է նաև ժողովրդի վիշտը, սոցիալական բողոքը և մասսաների հայրենասիրությունը, երգել է նրանց ռևոլյուցիոն պայքարը։ Իր կյանքի վերջին տարիները՝ 1917—1920 թթ. Տերյանը կանգնեց պրոլետարական գրականության ուղու վրա։ Մտնելով բոլշևիկյան պարտիայի շարքերը, նա ակտիվ մասնակցություն ունեցավ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիային։

Արձակի բնագավառում աչքի ընկնող տեղ գրավեց Վրթանես Փափազյանը (1866—1920)։ Նա հրապարակեց մի շարք վեպեր, նովելներ և պատմվածքներ, որոնց մեջ պատկերում էր գլխավորապես թյուրքական լծի տակ հեծող Արևմտյան Հայաստանի աշխատավոր գյուղացիության դառը վիճակը։ Փափազյանը գրել է սոցիալական անհավասարության մասին, բողոք է արտահայտել ու ատելություն սերմանել շահագործման, հարստահարության և բռնապետության դեմ։

1900 — 1917 թթ. նոր երկեր ստեղծեցին ականավոր հայ արձակագիրներ Շիրվանզադեն, Մուրացանը, Նար-Դոսը և Գրիգոր Զոհրապը։

20-րդ դարի սկզբներին սաղմնավորվեց հայկական պրոլետարական գրականությունը, որի հիմնադիրն է Հակոբ Հակոբյանը (1866—1937)։ Հակոբյանն իր երկերում արտացոլել է բանվոր դասակարգի հերոսական պայքարն ընդդեմ ցարական ինքնակալության և բուրժուական կարգերի։ Մարտական ոգով տոգորված իր բանաստեղծություններում Հակոբյանը կոչ էր անում բանվոր դասակարգին տապալելու ցարիզմն ու կապիտալիզմը։ Բոլշևիկ բանաստեղծը սուր գրչով մերկացնում էր բուրժուական նացիոնալիզմը։ Հակոբյանը մեծ ժողովրդականություն էր վայելում Անդրկովկասի բանվորության և աշխատավորության մեջ։

Հայ պրոլետարական պոեզիայի ձևավորման ու զարգացման գործին զգալի չափով նպաստեց Շուշանիկ Կուրղինյանը (1876—1927)։ Իր լավագույն

երկերում Կուրդինյանը պատկերել է բանվոր դասակարգի կյանքը և երգել նրա ռևոլյուցիոն-ազատագրական պայքարը։

Պրոլետարական գրականության հետ միասին հանդես եկավ մարքսիստական հայ գրաքննադատությունը, որի հիմնադիրներն են՝ Ստեփան Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը։ Բոլշևիկյան մամուլի էջերում նրանք լույս ընծայեցին մի շարք հոդվածներ կուլտուրայի, գրականության և արվեստի հարցերի շուրջը։

Մերկացնելով բուրժուա-նացիոնալիստական գրականության ռեակցիոն և հակաժողովրդական էությունը, Շահումյանը և Սպանդարյանը հաջողությամբ պրոպագանդում էին մարքս-լենինյան գրական-գիտության սկզբունքները և ռուս կլասիկ գրականության լավագույն տրադիցիաները։ Կիրառելով մարքս-լենինյան պարտիականության սկզբունքը, նրանք անհաշտ պայքար էին մղում գրական անկումայնության դեմ և մերկացնում բուրժուական նեխող կուլտուրայի ամեն տեսակ ներկայացուցիչներին։

20-րդ դարի սկզբներին զգալի աշխատանք կատարվեց ռուսական գրականությունը հայերեն լեզվով թարգմանելու ուղղությամբ։ Ականավոր հայ բանաստեղծներն ու գրողները, որոնք մշտապես կրել են առաջավոր ռուսական գրականության բարերար ազդեցությունը, թարգմանում էին ռուս կլասիկներին, ռևոլյուցիոն գրողներին և դրանով իսկ հնարավորություն էին տալիս հայ ժողովրդին հաղորդակից լինելու հարուստ, գաղափարական և առաջավոր ռուս գրականության հետ։ Այդ աշխատանքներին զուգընթաց ռուսերեն թարգմանվեցին նաև հայ հեղինակների լավագույն երկերը։ Թարգմանությունները կազմակերպելու, ինչպես և ռուս հասարակությանը հայ գրականության և կուլտուրայի հետ ծանոթացնելու գործում խոշոր դեր խաղացին ռուս մեծ գրող Մաքսիմ Գորկին, տաղանդավոր բանաստեղծ Վալերի Բրյուսովը և գրականագետ Յուրի Վեսելովսկին։

Արվեստ։ 20-րդ դարի սկզբներին հանդես եկան հայ կլասիկ երաժշտության երկու խոշորագույն ներկայացուցիչները՝ Կոմիտասը և Ալեքսանդր Սպենդիարյանը։

Կոմիտասը (Սողոմոն Սողոմոնյան, 1869—1935) պատկանում է հռչակավոր կոմպոզիտորների և երաժշտագետների շարքին։ Նա ստեղծել է հիասքանչ մեներգներ ու խմբերգներ։ Կոմիտասի ստեղծագործության մեջ զգալի տեղ են գրավում աշխատանքային երգերը։ Նա մեծ վարպետություն ունի ժողովրդական երգերը և պարեղանակները դրի առնելու գործում։ Մեծ կոմպոզիտորի ստեղծագործության հիմքում ընկած է ժողովրդական երաժշտությունը։ Կոմիտասի բարձր արվեստով օժտված ստեղծագործությունը մի նոր աստիճանի բարձրացրեց հայ կլասիկ երաժշտությունը։

Ալեքսանդր Սպենդիարյանը (1871—1928) հանդիսանում է հայկական սիմֆոնիկ ստեղծագործության հիմնադիրը։ Նա անցել է ռուսական կլասիկ երաժշտության հարուստ դպրոցը, մասնավորապես ուսանել է աշխարհահռչակ Ռիմսկի-Կորսակովին։ Սպենդիարյանը մեծ վարպետությամբ կերտել է բազմաթիվ սիմֆոնիկ, վոկալ և գործիքային ստեղծագործություններ։ Սպենդիարյանի ստեղծագործությունն իր ծաղկումն ապրեց Սովետական իշխանության տարիներին։

20-րդ դարի սկզբներին սկսեց ստեղծագործել հայ ականավոր կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը (1879—1950), որի հանրահայտ «Անուշ» օպերան

առաջին անգամ բեմադրվեց 1912 թվականին։ Այս նույն ժամանակաշրջանում իրենց կոմպոզիտորական գործունեությունը սկսեցին նաև Ռ. Մելիքյանը, Գ. Սյունին, Ս. Մելիքյանը, Ա. Մայիլյանը և ուրիշները։

Դարասկզբին կազմակերպվեցին թատերական նոր խմբեր, որոնք ավելի մնայուն լինելով, հաճախակի ելույթներ էին ունենում ոչ միայն քաղաքներում, այլև գավառներում։ Թատրոնի ռեպերտուարն ավելի է հարստանում։ Գ. Սունդուկյանի, Հ. Պարոնյանի, Շիրվանզադեի պիեսների հետ մեկտեղ, բեմադրվում են Գոգոլի, Օստրովսկու, Գորկու, Չեխովի, ինչպես և Շեքսպիրի, Շիլլերի դրամաներն ու կոմեդիաները։ Ասպարեզ իջան տաղանդավոր պրոֆեսիոնալ դերասաններ, որոնց մեջ առանձնապես աչքի ընկավ Հովհաննես Արելյանը (1865—1936)։ Այս շրջանում իր բեմական արվեստի ծաղկումն ապրեց հռչակավոր դերասանուհի Սիրանույշը (1858—1932)։

Կերպարվեստի բնագավառում հանդես եկան մի շարք տաղանդավոր նկարիչներ, որոնց թվում Ստեփան Աղաջանյանը (1863—1940), Փանոս Թերլեմեզյանը (1868—1941) և Եղիշե Թադևոսյանը (1870—1936)։ Քանդակագործության մեջ աչքի ընկավ Անդրեաս Տեր-Մարուքյանը (1875—1919)։ Նկարիչները մեծ մասամբ տալիս էին Հայաստանի պեյզաժները։ Տիրող և հիմնական ուղղությունը կերպարվեստի մեջ, ռեալիզմն էր։ Այս շրջանում սկսեց ստեղծագործել ականավոր նկարիչ Մարտիրոս Սարյանը։

Հայկական արվեստի բնագավառում աչքի ընկավ հայտնի ճարտարապետ Թորոս Թորամանյանը (1864—1934)։ Նա հայ ճարտարապետության պատմության վերաբերյալ տվել է մի շարք արժեքավոր գիտական ուսումնասիրություններ։